ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 3 ՄԱՐՏ

ԹԻՖԼԻՍ — 1906

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
(նկար Եղիշէ Թադէոսեանի)
իւղատիպ մեծադիր պատկերը (96×66 սանտ.)
տպուած Լայպցիգի Էմիլ Պինկաու նշանաւոր գործարանում 14 գոյնով։
Գինն է առանց ճանապարհի ծախքի 3 ռ.
Միևնոյն պատկերը, տպուած միևնոյն դիրքով **ԿՏԱՒԻ** վերայ, վաճառւում է իւրաքանչիւր օրինակը 15 ռուբլիով։ Ցանկացողները կարող են դիմել մեզ, ուղարկելով պատկերի արժէքը։ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

—

1. Խմբագրութիւնը ոչ մի չը տպուելու յօդուած չի վերադարձնում. ցանկացողները յեռ ստանալ՝ կամ պէտք է թերթերը դիմեն յեռ ստանալու եւ կամ ուղարկեն փոստի ծախքը։

2. Խմբագրութիւնը իրաւունք ունի հարկաւոր դէպքում փոփոխել կամ կրճատել տպագրուելի յօդուածները։

3. Խմբագրութեան ուղարկած յօդուածները պէտք է լինեն գրուած մաքուր, պարզ եւ մի երեսի վերայ. մանաւանդ պարզ պէտք է գրել յատուկ անուններն ու օտարազգի բառերը։

4. Խմբագրութիւնը իրաւունք ունի բոլոր յօդուածները ենթարկել իր ուղղագրութեան։

5. Թարգմանական յօդուածների հետ միշտ պէտք է ուղարկել եւ բնագիրը, առանց որի ոչ մի թարգմանութիւն չի կարող տպուել։

6. Խմբագրութեան զանազան հարցերով դիմողները պարտաւոր են ուղարկել պատասխանի համար նամակատրոշմ։

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 50 կոպէկ դրամով կամ նամակատրոշմով։

8. «Լուսայի» որեւէ համար չը ստանալու դէպքում պէտք է յայտնել խմբագրութեան առանձին նամակով մի ամսուայ ընթացքում, որպէս զի կարողանանք պատշաճաւոր դիմում անել փոստային վարչութեան։



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1906 № 3 ՄԱՐՏ

Արգաստիպ Ա. Քուրաթելաձէի
ԹԻՖԼԻՍ — 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

I *Ծիծեռնակաբերդ. Բ՛ Լ. ՏԻԳՐԱՆԵԱՆ* . . 5
II *Հայ աշխարհ. Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆ* . . . 8
III *Նոր կեանքի շէմքին. դրամա. Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ* 9
IV *Սիպայի հարսնացուն. հնդկական կեանքից. թարգմ. ՊԱՏՐԻԿ* 23
V *Մամիկոնեան տոհմը Հայոց պատմութեան մէջ ԱՐՇԱԿ ԱԳԱՊԵԱՆ* 30
VI *Մի խոշոր մարդու յիշատակին. Ե. ԹԱՂԻԱՆՈՍԵԱՆՑ* 50
VII *Հայ ազգի կեանքի եւ մահուան խնդիրը. ԳԷՈՐԳ ԱՀԱՐՈՆԵԱՆ* 53
VIII *Աւետարանի եղբայրները. ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱՏԷ* 67
IX *Մեր պատմութեան ուղին. ԳԱՐ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ* 78
X *Երգ ես խնդրում. Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆ* . . 84
XI *Փրիդրիխ Ենգէլս. Կարլ Կաուցկու. Բ. ԹՈՐՈՑԵԱՆՑ* 85
XII **ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ**
Մարդ-խցան. ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ։— Թէոդոր Նէօլդէքէ. ՄԻՍԱԿ ԹՈՍՏԻԿԵԱՆ . 97
XIII **ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**
Մեր ներքին տեսութիւնը։—գեներալ-նահանգապետի կարգադրութիւնը մամուլի մասին։ —Դպրոցական համագումար։—Բարձրագոյն դպրոց Կովկասում։—Ներքին լուրեր։ . . 99
XIV **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**
Արեւելեան հարցի մասին կայացած կոնֆէրէնցիան Լոնդոնում։—Վեզուվի արտավիժումը։ Կուրիերի աղէտը։ —Երկրաշարժը Կալիֆորնիայում։ 106
XV **ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ** . . . 114
XVI **ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** 115
XVII **ՅԱՒԵԼՈՒԱԾ**
Ժ. Ժ. Ռուսսօ. Էմիլ. գիրք. Բ. գերմ. թարգ. ԻՍ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ (վերջ) . 123—147

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

«Ճամապարհորդական պատկերներ» անտիպ շարադրութիւնից

Գալով Երևան, բարեկամներիցս մէկը հրաւիրեց ինձ քէֆ անելու Զանգուի ձորում, Խոր-աղբիւրի մօտ, որի անունը թուրքերը յեղաշրջելով դրել են Խորուսբուլաղ, ինչպէս և Արագած լերան անունը փոխելով, նրան անուանում են Ալագեօզ։

Հրաւէրքի օրը, բարեկամիս հետ գնալով, պէտք է բարձրանայինք Կոնդ ասուած քաղաքամասը և յետոյ իջնէինք Զանգուի ձորը։ Մենք գնում էինք այգիների միջով և որքան իջնում էինք այնքան էլ բնութիւնը գեղեցկանում էր, այնքան աւելի մեծ քաղցրութեամբ էին կարկաչում վտակները։ Երբեմն այս ու այն տեղ վտակները քարերի ու մացառների տակից անցնելով, կարծես թէ կամենում էին գողտուկ նայել մեր վրայ և վերջապէս վստահ դուրս էին ցատկում։ Այդտեղ երևում էր ջրի սովորական ոյժը. մի ջրակոյտ վստահութեամբ և կարկաչասահ առաջ ընկնելով, առնում էր իր սկիզբը և յանկարծակի յամառութեամբ տանում էր իր ետևից միւսներին։ Աղբիւրների մի բազմութիւն, արագութեամբ հոսելով, ձգտում էր միանալ միւսների հետ, կազմում էր ուժեղ վտակ, որ զանազան տեղերում անհամար ջրվէժներ կազմելով ու զարմանալի գեղեցկութեամբ կանաչների մէջ ոլորուելով, կարկաչում էր դէպի ներքև—Զանգուն։ Գեղեցիկ Զանգուն է, որ հոսում է իր ձորով, տանում է իր ջրերն Արարատեան դաշտի շինականներին լիացնելու։ Նրա ափերից հետզհետէ բարձրանում են լեռներ, որոնց ստորոտները միայն պատած են այգիներով ու մրգատու ծառերով։ Անկարագրելի գեղեցկութեամբ և զուարթութեամբ գահավիժում է Զանգուն դէպի ներքև ու անցնում է իր յատակի գեղեցկակազմ ժայռերի վրայով։ Զանազան տեղերում, ժայռերի ճեղքերից պարզ ջուրն աղեղնաձև թափում

է ներքև ու յետոյ մանր քարերի վրայից խշշալով վազում է, որպէս մի սիրուն աշխոյժ աղջիկ։ Այո, Զանգուն նման է մի դիցուհու, որ անցնում է ժայռերի վրայով դէպի Արարատեան դաշտը և իր սրտառուչ երգով կենդանութիւն է տալիս շրջակայքին։ Որքան գեղեցիկ է փայլում նրա սպիտակ ցողազգեստը ստուերատու մացառների մէջ, որքան գեղեցիկ և զովաբեր են նրա կուրծքի արծաթափայլ ժապաւէնները։ Ինչպէ՞ս պայծառ շողշողում, փայլում են օդում նրանից սփռած աղամանդները։ Դարևոր թթենիքը նրա ափին կանգնած գողտուկ ժպտալով նայում են այդ ուրախաբեր դիցուհու վրայ, իսկ ստուերատու ուռենիքը, լսելով նրա հրապուրիչ երգն, ուրախ շարժում են իրենց գագաթները և երբեմն լի զգացմունքով օրօրւում են։ Թռչուններն ուրախ սաւառնում են օդում, ափերի ծաղիկներն իրենց բաժակներից մեղմ շշնջում են, ահա, որքան գեղեցիկ ես դու, հրաշալի դիցուհի։ Բայց այդ զուարթ աղջիկն անուշադիր է ծաղկանց մրմունջին և անդադար ոստոստալով փախչում է դէպի վայր և հասնելով Մայր Արաքսին, գրկւում է նրա հետ ընդմիշտ։

Մարդ հիանալի զգացմունք է ունենում, երբ բնութիւնն արթնացնում է մեր հոգեկան զգացմունքներն այնպէս, որ ինքը բնութիւնը, բոյսերը, լեռները, կապոյտ երկինքը, վտակների կարկաջիւնը, ծաղկանց բուրմունքը շարժում են մեր երևակայութեան աշխարհը և մարդ ընկնում է երազների թագաւորութեանց մէջ։

Գտնուելով Զանգուի հրաշալիքների ներքոյ, ես համարեա չէի նկատել, որ իջել էինք ձորը և մօտենում էինք Խոր-աղբիւրին։ Աղբիւրը գտնւում է գետի ձախ ափին, իսկ աջ ափին բարձրանում է մի լեռնագագաթ, որ անուանւում է Ծիծեռնակաբերդ։ Բնութիւնն այժմ գեղեցկացրել է այդ լերան միայն ստորոտն այգիներով, բայց աւանդութիւնը սփռել է այդ լերան գագաթի վրայ իր գեղեցիկ լոյսը։ Աւանդութիւնն ասում է, որ կռապաշտական ժամանակներում, այդ ամբողջ լեռնագագաթի վրայ տարածուած էին դիցավայել պարտէզներ, որոնց լանջերն իջնում էին մինչ Զանգուն, որ հնումն անուանւում էր Հրազդան։ Գագաթի վրայ գտնւում էր Աստղկաբերդն ուր բարձրանում էր Աստղիկ դիցուհու, այդ սիրոյ և գեղեցկութեան աստուածուհու ապարանքը։ Այդ բերդն ունէր մի բարձրաբարձր աշտարակ, որի ամենավերին յարկում բնակւում էին ծիծեռնակներն, այն է՝ Աստղիկ դիցուհու սուրհանդակները, որոնք տանում էին ընտրեալներին դիցուհու սիրոյ

քորբոքը, որպէս հրաւէրք։ Այդ է պատճառը, որ այդ լեռնա-գագաթը մինչև այժմ էլ յայտնի է որպէս Ծիծեռնակաբերդ։

Պատմում են աւանդօրէն, որ այժմ էլ ամեն առաւօտ Աստղիկը լողանում է Հրազդանում և ով որ բախտ ունի գիտենալ նրա լողանալու ժամը, կարող է տեսնել դիցուհուն առաւօտեան ցօղում, եթէ դիցուհին նրան հաւանած լինի։ Այդպիսի դէպքում դիցուհին իր հաւանածին այսպէս է հրաւիրում իր մօտ. ես Աստղիկն եմ, սիրոյ և գեղեցկութեան հայոց դիցուհին, արի վեր, իմ ապարանքը, մենք երջանիկ կը լինենք։ Իմ գեղեցիկ բազուկներովս կը սեղմեմ քեզ կրծքիս վրայ, դու հանգստութեան մէջ կերազես հինաւուրց առասպելական հրապուրանքների երջանկութեանց մասին։ Ես քեզ կը համբուրեմ, կը սիրեմ. նաժիշտներս կամփոփեն քեզ անմահական բուրմունքով և դու կը մոռանաս բոլոր վշտերդ։

Շատերն ասում են, որ այդ միայն աւանդութիւն է, բայց այդ հաստատողներն այնպիսի մարդիկ են, որոնց Աստղիկը չի յայտնուել։ Ես, որ առանձնապէս վայելել եմ ամենագեղեցիկ կանանց շնորհքը, այդ ես աւելի լաւ գիտեմ և մեծ յոյս ունեմ, որ Աստղիկը մի գեղեցիկ առաւօտ կը հրաւիրի ինձ իր ապարանքը, որ սովորական մարդկանց համար այժմ անտեսանելի է և ես հանգիստ կառնեմ նրա գրկում դիւթական բուրմանց մէջ։

Բժ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

ՀԱՅ ԱՇԽԱՐՀ

(նմանություն)

Կայ մի խե՞ղճ աշխարհ, մի արեա՞ն աշխարհ,
Որի երկինքն է մթնա՞ծ, խաւարա՞ծ,
Եւ որի կրծքից ըղխում վշտահար
Արցունքի, արեան գետեր սրնթա՞ց...

Կա՞յ մի խեղճ աշխարհ, որի զաւակներ
Աւա՞ղ չե՞ն ապրում, այլ հեծում, տնքում.
Որոնց սրտերին ծանր շղթաներ
Ակօս են ձգում, արիւնով ներկում...

Այնտեղ կայ միայն մի գեղեցկութիւն—
Այն է խեղճ մարդկանց յստակ, մուգ արեան.
Այնտեղ միմիայն մի օրէնք իշխում—
Սրրի ու թրրի թալանի շրջան...

Այնտեղ լծում են անասունի տեղ
Խե՞ղճ, թշուառ մարդկանց իրենց սայլերին.
Այնտեղ իշխում է վայրենին ուժեղ
Իր կտրուկ թրով թշուառի գլխին...

Այնտե՞ղ է մարդկանց սե՞ւ սպանդանոց—
Մարդը մորթւում է ժանտ մարդու ձեռքով.
Մօր կրծքին փարած մանուկն ալաթոս
Իր մօր հետ կիսւում լոկ մի՛ հարուածով...

Այնտեղ որոտն է թնդում սաստկագին
Արիւն-կայծակներ սաստիկ շնչելով...
Աւեր է թողնում... կրկին խիստ ուժգին
Երկինքը մթնում թանձր ամպերով...

Այնտեղ քարերն են լալիս այդ մարդկանց
Արիւն-ծով սրտից. երկինքը տխրած
Երգում մրմուռը ազգի քաղմատանջ.—
Արցունք են թափում մարդկանց հետ գրկուած...

Կայ մի խե՞ղճ աշխարհ, մի արեա՞ն աշխարհ
Որ կերակրում է զայլերի ընդունում.
Շղթաների տակ տանջւում՝ չարաչար,
«Օգնեցէք, մարդիկ, օգնեցէ՞ք»... կանչում...

Այդ դժբախտ մարդիկն են իմ խեղճ եղբայրներ—
Հայերն են, որդիք-ծով թշուառութեան.
Նրանց տանջողն են մարդիկ-գազաններ.
Արեան երկիրն է իմ մա՞յր Հայաստան...

Ե. ԽԱՆԷԼԱՐԵԱՆԵՑ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔԻՆ

Դրամա չորս գործողութեամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Տ. Աննա Թորոսեան, այրի կին, 60 տարեկան.

Համբարձում—նրա որդին, վաճառական 35 տարեկան.

Աշոտ—սրա եղբայրը, ուսանող.

Օր. Արուսեակ—սրանց քոյրը մօտ 20 տարեկան. (աշակերտական կապոյտ շորերով ու սև գոգնոցով),

Օր. Աստղիկ սրանց քոյրը 18 տարեկան.

Օր. Բնարիկ } սրանց ընկերուհիները։
Օր. Նազիկ }

Լեոն Մենակեան—Աշոտի ընկերը՝ ուսանող.

Գարեգին Զամբազեան—վաճառականի որդի 25 տարեկան.

Աթանէս Մարկոսեան — տիկին Թաթոսեանի եղբայրը 50 տ.

Մարիամ, տիկին Թաթոսեանի տալը, 50 տարեկան։

Գործակատար Համբարձումի:

Գործողութիւնը կատարուում է Կովկասի գաւառական քաղաքներից մէկում։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Թաթոսեանի տան դահլիճը։ Բեմի ետևից դահլիճի գլխաւոր մուտքը. աջ կողմի դուռը տանում է դէպի Համբարձումի սենեակը, իսկ միւսը՝ դէպի տան միւս սենեակները։ Դահլիճի կահաւորութիւնը հին տարազով. մի անկիւնում դիւան բարձր փայտեայ մէջքով, առաջը մեծ կլոր սեղան, երկու կողմից հին մեծ բազկաթոռներով։

I ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ԵՒ ԱՍՏՂԻԿ

Արուսեակ. (Ներս է մանում եւ տեսնում Աստղիկին ձեռագործ անելիս) Այդ ինչ ես անում, Աստղիկ (դիտում է ձեռագործը)։

Աստղիկ. Դու դեռ հարցնում ես։ Մի՞թէ չգիտես որ վաղը քո ծննդեան տօնի օրն է։

Արուսեակ. Մտքովս անգամ չէ անցել։

Աստղիկ. Զարմանալի է։

Արուսեակ. Իսկի էլ զարմանալի չէ։

Աստղիկ. Զարմանալի է գիտես ինչը, ոչ թէ այն, որ դու մոռացել ես. ոչ, այդ կարող է պատահել, այլ այն, որ այդքան սառն ես դէպի կեանքը։ Ի՞նչ ասեմ. ես բոլորովին այլ հայեացք ունիմ կեանքի վրայ։ Ես ուզում եմ ապրել նրա ամենամի երևոյթով։

Արուսեակ. Ամենքս այդ երևոյթներով ենք ապրում։

Աստղիկ. Ոչ, սիրելիս։ Ինձ թւում է, որ միևնոյն է քեզ համար, խնջոյքում եղած՝ թէ տանը, հարսանիքում թէ նշանդրէքում, այսօր լինին դրանք թէ վաղը։ Սուտ եմ ասում, այնպէս չէ՞ (մինչեւ պատասխան ստանալը վեր է կենում եւ աշխոյժ պտտում սենեակի մէջ, երբեմն էլ հայելու մէջ իրեն դիտում)։

Արուսեակ. Այդ միևնոյնը ոչ բոլոր երևոյթների նկատմամբ։ Ինչ որ յիրաւի կենսական է, այն չպէտք է աչքից փախցնել։ Ինչ որ մեզ կապում է իսկական կեանքի հետ, ինչ որ մեր էութեան վրայ մի բան աւելացնում է, նրանից չի կարելի խուսափել և չենք էլ խուսափում։

Աստղիկ. Հա, հա հա (ծիծաղում է) Ես քեզ ասեմ, սիրելիս, թէ երբ է իմ էութեան վրայ մի բան աւելանում։ Ասիր «այո»։ (Լռութիւն) Չե՞ս ասում։

Արուսեակ. Դէ լաւ, վերջացրու տեսնենք։

Աստղիկ. Չէ, մինչև չասես «այո»—չեմ շարունակիլ։

Արուսեակ. Ինչպէս տեսնում եմ, նոր ես ուզում երեխայանալ։ Դէ լաւ, այո։

Աստղիկ. Այ, ականջդ բաց, լաւ լսիր։ Երբ 2, 3, 4, 5, 10, 20 և այլն օրեր առաջ միտքս է գալիս, որ այս ինչ օրը մի խնջոյքի, մի երեկոյթի, մի հարսանիքի կամ նոյն իսկ մի զբօսանքի պիտի գնամ, այդ մի քանի օրուայ ընթացքում ես

յիրաւի ապրում եմ։ Ինձ համար այդ ժամանակամիջոցը աւելի բովանդակալից է, քան նրանից յետոյ եկող իսկական երևոյթը։ Այնպէս որ թէև մեր տանը, սակայն ես միշտ կամ հարսանիքում եմ լինում, կամ խնջոյքում, կամ նշանդրէքում և եթէ կուզես նաև կնունքում։ Այ, հէնց այժմ թէև ոչինչ չկայ, բայց ես քո ծննդեան տօնի խնջոյքումն եմ, Քնարիկի, Նազիկի և միւսների հետ պարելիս։ Բայց այժմ դանք ներկայ երևոյթին։ Այս վերնազգեստի կրծքով ու թևերով ուզում եմ լայն դաս բոլորել, ինչպէս կլինի։

Արուսեակ. Քանի որ այժմ իսկ դու տօնում ես հանդէսը մէն-մէնակ, էլ ինչ հարկ կայ նոր զարդարանքների մասին մտածելու։ Ինչ վերաբերում է դասին, միանգամայն աւելորդ է։ Ամեն բանի մէջ պարզութիւն—ահա իմ պահանջներից մէկը և գլխաւորը։

Աստղիկ. Բայց այդպիսով մենք ինչ կհասկանանք կեանքից և ինչ կեանքը՝ մեզանից։ (Վերջին խօսքերի ժամանակ ներս է մտնում Քնարիկը կամացուկ եւ նկատուած չլինելով, յանկարծակի պատասխանում)։

II ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԱՍՏՂԻԿ ԵՒ ՔՆԱՐԻԿ

Քնարիկ. Лови всякій мигъ ահա թէ ինչ ենք պահանջում բանաստեղծի հետ միասին կեանքը և ես։

Աստղիկ. Դու մեզ լսո՞ւմ էիր, Քնարիկ (Նրան բարեւում է ու համբուրում)։

Քնարիկ. Զգիտե՞մ ինչ է, թէ ինչ նոր-նոր բաներ ասելիս կլինի մեր Արուսեակը։ Հերիք է, հերիք, պէտք է մտենալ կեանքին։ Քեզ նման շատերին ենք տեսել։ Հը՞, այնպէս չէ՞, Աստղիկ. (մտենում է նրան, կողքին նստում ու դիտում դէմքը կուացած) Ցիրաւի Աստղիկ՝ թրթռուն, շարժուն, առկայծող. ես ուղղակի նախանձում եմ, Աստղիկ։ Իսկ սա (ցոյց տալով Արուսեակին) Իսկապէս Արուսեակ՝ մոլորակ, կանգնած, յառող, դանդաղաշարժ, թէև փայլուն ու պայծառ։ Այնպէս չէ՞։ (Նայում է մերթ սրան մերթ նրան)։

Աստղիկ. Վաղն էլ ծննդեան տօնի օրն է, միևնոյն է, կամ եղած, կամ չէ։ Բայց միևնոյն է, զօռով էլ է պիտի կատարել տամ, որ վերջապէս շարժուի այդ յառող մոլորակը, թէև մարրիկը հէնց այն է ցանկանում, որ Արուսեակը չեմ ու խամ ա-

նի և տօնը գլուխ չգայ։ Այ, Քնարիկ, նոր զգեստ եմ պատրաստում, տօնը չկատարեն և տեսնեն։ Ուզում եմ այստեղով էլ գաս դնել, բայց այս մայրապետը (ցոյց տալով Արուսեակի վերայ) խորհուրդ չէ տալիս։

Քնարիկ. Եւ դու էլ ակամՆ ես դնում։ Лови всякій мигъ ասացի քիչ առաջ։ Կամքիդ, ցանկութեանդ ոչ մի վայրկեանը անսնունդ մի թող։ Զարդարիր կուրծքդ բնութեան ամենագեղեցիկ շուշաններով, աշխատիր բուրել ամենահոտաւէտ ծաղիկների հոտերով, սիրամարգի փետուրներ դարձրու թևերդ, կակաչների կտրտուած եզրների նման ժանեակներ բոլորիր ուսերովդ...

Աստղիկ (ընդհատում է) Ժպտա՝ ալ վարդի նման, շնչիր մանուշակի նման...

Քնարիկ (ընդհատում է ու աւելի արագ) Շրջիր արևածաղկի նման և վերջապէս այնպէս դուրս եկ բնութեան առաջ, ինչպէս մի սքանչելի ծաղիկ։ Այ, տեսնում ես ինձ (ծանր շրջում է) Լաւ նայիր։ Տեսնում ես, Արուսեակ։

Արուսեակ. Յետոյ, իսկ ինչ անեն օրինակի համար կայծնիշերը։

Աստղիկ. Նրանք լրացնում են ընդհանուր գեղեցկութիւնը, չէ՞ Քնարիկ։

Քնարիկ. Աւելորդները մանգաղն ու ցակատն են բնաջինջ անում, որոնք ըստ իս ամենակարևոր գործիքներն են։

Արուսեակ. Նրանք խանգարում են գեղեցկութիւնը և ոչ թէ լրացնում։ Իսկ լրացնելու համար պէտք է նրանց պատուաստել։

Քնարիկ. Է՜, գլուխս մի տար, Արուսեակ։ Վաղը երեկոյեան կլուրում երեկոյթ կայ, սիմֆոնիական երեկոյթ, գալիս ես թէ ոչ։

Արուսեակ. Իսկ ո՞վ է կազմակերպողը։

Աստղիկ. Քեզ ի՞նչ թէ ով է։ Զարմանալի է չէ՞, Քնարիկ։ Երեկոյթ կայ և վերջացաւ։ (Կարճ լռութիւնից յետոյ) բայց ինչ եմ ասում։ Վաղը Արուսեակի տօնն է, ի՞նչպէս կարող ենք գալ։

Քնարիկ. Չորս երեկոյթ էլ լինի, կարելի է չորսն էլ գնալ։ Դուն էլ բա՞ն ասացիր, Աստղիկ։

Աստղիկ. Իսկապէս ի՞նչ եմ դժուարացնում։ Տօնի խընջոյքը կվերջացնենք և կգնանք, այնպէս չէ՞, Արուսեակ (ձեռքերը իրար է խփում)։

Արուսեակ. Տեսնենք։

Քնարիկ. Ինչպէս ես տեսնում եմ, վերջ ի վերջոյ դու փիլիսոփայ պիտի դառնաս, քանի որ այդչափ տեսնող ու մտածող ես։ (Ձեւ անելով) Մտածենք, տեսնենք։ Եւ ես զարմանում եմ, որ այսքան ժամանակ մնացիր այս անմիտ տեղում ու չգնացիր Մոսկուա կամ Պետերբուրգ, Գորկիների ու Անդրէեւների հայրենիքը, աւելի լաւ մտածելու ու տեսնելու։

Արուսեակ (սառն) Բայց նրանք փիլիսոփայ չեն։

Քնարիկ. (իբրեւ թէ չլսելով նրա խօսքերը) Հաւատացիր, Արուսեակ, այնտեղ ոչ ես, ոչ Աստղիկը և ոչ էլ մայրիկը չէինք խանգարիլ քեզ։ Դէհ, ես գնում եմ, ուրեմն մտածիր (ծաղրով) բայց ես քո փոխարէն մտածեցի, վաղը կգնաս, և ի հարկէ, յոբելենական շորերով։ Հերիք է, որքան քաշ տուիր այդ երեխայական շորերը։ (Ձեռքը սեղմում է ու հեռանում)։

Աստղիկ (հետեւից կանչում) Սպասիր, Քնարիկ։ Ես էլ եմ գալիս։ (Ինքն իրեն) Որքան ճանձրալի է տանը նստել (գնում են։

III ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ (մենակ)

Արուսեակ. Երանի ձեզ, Աստղիկ ու Քնարիկ, որ արդէն որոշ յենակէտեր էք գտել ձեզ համար կեանքի մէջ, լինին դրրանք ուղիղ թէ սխալ, լաւ թէ վատ։ Ձեզ թեւ են տալիս պարն ու խաղը, քրքիջն ու ծաղրը։

Դուք հոգով ու մարմնով միացած էք այն մեծ մասսային, որի հետ ապրում էք թեւ թեւի տուած և որի անունն է հասարակութիւն։ Նրա կարծիքը ձեզ համար պահանջ է, նրա ճաշակը՝ հաւատ, նրա սովորութիւնները՝ պաշտելու կուռք։ Իսկ ես... (լռութիւն)

Ես դեռ խարխափում եմ... ոչ կարողանում եմ եղածը ընդունել և ոչ էլ նոր բան որոնել։ Ի՞նչ եմ ասում, ես որոնում եմ և այդ որոնումը, աւելի ճիշտ՝ այդ դեգերումը թմրեցրել է ինձ և տանջում է միտքս։ Ես չեմ գործում, որովհետև ոյժ չունիմ։ Ուժս սեպհական չէ (գլուխը խոնարհում է)։ Իմ ուժը (հառաչում է) մայրս ու եղբայրս են, նոյն իսկ Աստղիկը, այդ խեղճ ու կրակ Աստղիկը։ (Դուռը կամաց բացւում է ու ներս են մտնում Աննան ու Մարիամը, որոնց ներկայութեամբ են արտասանւում Արուսեակի վերջին խօսքերը)։

IV ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ, ԱՆՆԱ ԵՒ ՄԱՐԻԱՄ

Աննա (կամաց *Մարիամին*). *Ինչո՞ւ էր ասում, Մարիամ։ (Արուսեակին). Այ աղջիկ, Աստղիկն այստե՞ղ է։*

Արուսեակ (հիասթափուելով). *Ոչ, մայրիկ, նա կէս ժամ առաջ այստեղ էր։ Քնարիկը եկել էր, նրա հետ դուրս գնաց։*

Աննա. Էհ, Մարիամ, ժամանակը փչացել է, շատ փչացել։ Ով է տեսել աղջիկն առանց մօր հրամանի դուրս գայ։

Արուսեակ (շփոթուելով). *Ես.... ասացի, մայրիկ, որ.... շուտ գայ։*

Աննա. Հա, լաւ.... (քննական հայեացքով) իսկ դու ինչ էիր խօսում տակից-գլխից։ Դու շփոթուած ես, Արուսեակ, և ինչո՞ւ (Մարիամին) Հապա նայիր, քեզ մատաղ։

Արուսեակ. Ոչինչ, մայրիկ, Աստղիկը ձեռագործս փոքր ինչ փչացրել էր, ինքս ինձ բարկանում էի վրան։

Աննա. Հա, լաւ, այդ այսօր այդպէս, իսկ երէկ ինչ էր, կիրակի՞ ծրը ինչ։ (Լուռիւն) Հօրաքրոջդ չե՞ս տեսնում։

Արուսեակ. Ախ, ներիր, Մարիամ հօրաքոյր, մայրիկն ինձ միանգամայն շփոթեցրեց իւր հարցերով (մօտենում է ու համբուրում ձեռքը)։

Ի՞նչպէս ես, Մարիամ հօրաքոյր, բաւական ժամանակ է մեզ մոռացել ես։

Մարիամ (նստելով). *Ի հարկէ, փոքրերը իրենց փոքրութեան պարտք չկատարեն և պահանջեն որ մեծերը կատարեն։ Մենք էլ ջահել էինք, և ձեռքերս խաչ արած չէինք համարձակւում մի բերան անգամ խօսել, ուր մնաց որ պահանջէինք մեծերից մեզ այցելել։*

Արուսեակ. Ներիր, հօրաքոյր, ես վերջերս շատ եմ զբաղուած, ոչ մէկին էլ այցելելու ժամանակ չեմ գտնում։

Մարիամ. Իսկ Աստղիկը ինչո՞ւ կարողանում է։

Արուսեակ (շփոթուելով). *Նրան մայրիկն է ուղարկում։*

Աննա. (ղլուխը ծանր օրօրելով). *Մայրիկն ի՞նչ անի, որ դու պառաւ կնիկ ես դարձել ու տանը մեխուել։ Քո ինչ լինելդ ու միտքդ ես այսքան ժամանակ չկարողացայ հասկանալ։*

Արուսեակ. Աղաչում եմ, մայրիկ, էլ մի սկսիր։ (Մարիամին) Ներիր, հօրաքոյր, ես միւս սենեակում գործ ունիմ (գնում է)։

V ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԵՒ ՄԱՐԻԱՄ

Աննա (մօտենալով նրան) Տեսա՛ր, Մարիամ։

Մարիամ (սառն). Տեսայ, սիրելիս։

Աննա (ծնկանը ձեռքով խփելով). Խե՛լքդ ինչ է կտրում, Մարիամ։

Մարիամ. Չեմ հասկանում։

Աննա. Իմ ճարն ի՞նչ կը լինի, Արուսեակի ճարը ի՞նչ կլինի։

Մարիամ (սառն ու կեղծ) Քոռանամ ես։

Աննա. Ախր ի՞նչ անեմ, մեծ աղջիկ է, հասակն առած։ Մենք նրա հասակում 2—3 երեխատէր մայրեր ենք եղել։

Մարիամ. Քանի տարեկան է որ, Աննա։

Աննա. Աստղիկից երկու տարով մեծ է։ Իրար ետևից հասել են, ես ո՞ւր կորչեմ։

Մարիամ. Ինչո՞ւ ես այդպէս ասում։ Աստուծուն էլ ծանր կթուայ, լսողին էլ։ Փառք իրեն, մեզանից աւելի նա կհոգայ։ Շատ լինի 20 տարեկան։

Աննա. Եւ դա քի՞չ է, Մարիամ։ Ես 16 տարեկան հասակումն եմ ամուսնացել և սակայն սկեսուրս ասում էր մեծ եմ, 14 տարեկան պէտք է լինէի։

Մարիամ. Ի՞նչ ասեմ, ժամանակիս 20 տարին մեծ հասակ չէ աղջկայ համար։

Աննա. Այդ մի ասա, Մարիամ։ Աղջիկն որ 20-ն անցաւ, էլ չի պահուիլ։ Աղջիկը որ կայ, մի ծախու ապրանք է, ժամանակը որ անցաւ, էն է որ կմնայ ու կմնայ։ Դու խօ գիտես, որ Բաղամենց աղջիկը մնաց, 20-ն անցնելուց յետոյ էլ դուռը բաց անող չեղաւ։ Աննա, մի ճար, քանի ուշ չէ։ Վախենում եմ որ այս տարի էլ աղջիկս տանը մնայ։ Մի ճար։ (երկու ձեռքը բարձրացնում է ու գետնին նայում)։

Մարիամ. Հանգստացիր, Աննա։ Դեռ ժամանակ շատ կայ։ Ինձ թւում է, որ Արուսեակը այդպիսի բաների մասին չի էլ մտածում։ Դեռ ժամանակ շատ կայ. դեռ կարելի է ուղարկել ուսում առնելու։

Աննա (զարմացած). Այսուհետեւ, Մարիամ։

Մարիամ (սառն). Այո, այսուհետև։ Ինչո՞ւ ես զարմանում. այժմ քչե՞ր են իրենց աղջկանցը Ռուսաստան կամ արտասահման ուղարկում։ Այ, Դաւիթենց Սոնիկին տրտասահման ուղարկեցին, Գասպարենց Սաթիկին Մոսկուա ուղարկեցին։ Փառք Աստուծոյ, ձեռքդ տախտակի տակ չէ։

Աննա. Բայց այդ, երբ տեսան, որ տանը մնացին։

Մարիամ. Այդ այդպէս է և սակայն շատ ծնողներ երանի են տալիս այն ծնողներին, որոնք իրենց աղջկանցը ուղարկել են ուսում առնելու։

Աննա (քարկացած). Թող, Մարիամ, թող, այդ մասին ոչ մի խօսք չեմ ուզում լսել։ (աւելի է մօտենում եւ խորհրդաւոր եղանակով) Ով աղջկանը իրենից հեռացնում ու այլ քաղաքներ է ուղարկում, այլ ես նրա տէրը չէ։ (լուռիւն) Վերջապէս իսկ խեղճ Համբարձումս։ Երեսուն տարին վաղուց է անցրել, թէև այստեղ-այնտեղ ասում եմ 25 տարեկան է։ Դու պէտք է տեսնես, Մարիամ, թէ որքան յոգնած է լինում, երբ տուն է վերադառնում։ Աչքերիս լոյսը քաշուել է, այնքան եմ նայել նուաղած աչքերին։

Մարիամ. Ինչո՞ւ պիտի նուաղուի. Փառք Աստուծոյ, սեպհական խանութ, գործակատարն էլ մէջը, ինչո՞ւ չպիտի ցերեկները տուն գայ ու հանգստանայ, այլ միայն երեկոյեան։

Աննա. Լինում է՞, Մարիամ։ Նա մօր տղան է։ Ես յատկապէս ծառայ չեմ վարձում նրա համար, որ չեմ կարող վստահանալ խոհանոցը օտարին։

VI ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՆԱ, ՄԱՐԻԱՄ ԵՒ ԱԹԱՆԷՍ

Աթանէս (բանում է դուռը եւ առաջը կանգնում). Զայն ծրպտուն չի լսուում. երևի ծիծեռնակները տանը չեն և կամ դեռ թառի վրայ են։

Աննա (գլուխը օրօրելով). Երանի քեզ, այ եղբայր, երանի քեզ։

Աթանէս. Հը, ի՞նչ է պատահել էլի, այ քոյր. նոր քէֆիդ դիպչող խօ չի՞ եղել։

Աննա. Դէ լաւ, դեռ նեղս արի։

Աթանէս. Մինչև չասես թէ ծիծեռնակներն այստեղ են, չեմ գալ։

Աննա. Մէկը միայն տանն է։

Աթանէս. Անշուշտ Աստղիկը։

Մարիամ. Դէ մարդու սրտին նայիր, յետոյ խօսիր։ Չմոտեսնում նրա դրութիւնը։

Աթանէս. Ի՞նչ դրութիւն, հէր օխնածներ, շատ-շատ ծիծեռնակի մի նախշուն փետուրը ընկած կլինի։ Գեռնի տակն էլ յինի, կճարենք տեղը կը դնենք։ Դուք խօ գիտէք, որ ես այդ գործի մէջ մեծ հմտութիւն ունիմ։ Դէ, ասացէք շուտով, որ ծիծեռնակինն է ընկել։

Աննա (գլուխը օրօրում է). Ա՜խ, այ անդարդ եղբայր, անհոգ եղբայր։

Աթանէս. Դէ շուտ, որ ծիծեռնակն է տանը։

Մարիամ. Արուսեակն է։

Աթանէս (ներս է մտնում). Շուտ ասէիք էլի։ Այժմ ուղիղն ասեմ. աղաչէք էլ նրա թևին չեմ դիպչիլ։ Այլ բան է, եթէ Աստղիկը լինէր։ Աղջիկ չէ խօ անպիտանը, այլ տղամարդ։ Բէֆս է գալիս։ Հէնց իմ կարծիքով նա է իսկական աղջիկը, որը տղամարդուց յետ չի մնալ ու նրա հետ մի շիշ գինի կտնկէ ու վեր կկենայ։ Այնպէս չէ՞։ (երբ սա լուռ է մնում, վեր է կենում ու ուղղում դէպի նա)։ Տօ, ի՞նչ ես յօնքերդ կիտել։ Խօսիր տեսնենք էլ։ Թէ մէկը վիրաւորել է քեզ, անունն ասա, գնամ դուէլի կանչեմ։ Մնացածը, Թիֆլիսցու ասած, տուտուց բաներ են։

Աննա. Իսկի երբ ևիցէ մտածե՞լ ես քրոջդ անտանելի դրութեան մասին։ Իսկի մէկ անգամ հարցրե՞լ ես, թէ, այ քոյր, աղջիկներդ հասել են, ինչ պիտի անես։ Այ, աղջիկս ձեռքիցս գնում է, հիմա ի՞նչ անեմ։

Աթանէս. Աստղիկը ձեռքից գնացողը չէ։

Աննա (զայրացած). Արուսեակս այ հայ, Արուսեակս։ Նա կարծես իրեն կորցրել է, քշուածի նման է երևում։ Նա իրեն հեռու է պահում ընկերուհիներից։ Տեսնում, նկատում եմ. քոյրը մեռնում—կտրուում է տնից դուրս գալու հաւար, իսկ ինքը տանն է ու տանը։ Այսօր Մարիամի հետ ներս եմ մտնում և ի՞նչ, ինքն իրեն դատարկ-մատարկ բաներ է խօսում։ Սո՞ւտ եմ ասում, Մարիամ։ Գոնէ եթէ յաճախ տնից դուրս գար, լաւ կլինէր. բայց որ դրա մասին և ոչ մի խօսք չի ուզում յսե՞լ։

Աթանէս (ծիծաղում է). Հա՛, հա՛, հա՛, հա՛. այդ խօ քո ու-

զածն է, այ քոյր։ Այդ բանին հասնելու համար երևի ժամ էլ վառած կլինիս եկեղեցում, այնպէս չէ՞։

Մարիամ. Հերիք է, հերիք, Աթանէս, կարողանում ես մի խելք ցոյց տուր, չես կարողանում, էլ ինչու խեղճ կնոջ ցաւի վրայ ցաւ ես աւելացնում։

Աթանէս. Ես լուրջն եմ ասում այժմ. (կոկորդը կեղծօրէն մաքրելով) դրա առաջին պատճառը, ինչպէս ասացի, մեր Աննայի աղօթքն է եղել. իսկ միւս պատճառը այն է, որ այն օրիորդները, որոնք Աստղիկի նման չեն, այսինքն որոնք ընդունակ չեն Թուրքին խորոված խոզի ճուտ մատուցանելու, իրենց նուիրում են գրքերի, ուր հազար ու մի գաղափարների ու մտքերի են պատահում, ինչպէս օրինակ սենտաիենտելիզմ, ինդուադուիլիզմ (ծոմռելով) և այլ այսպիսի սիրտ դեղնեցնող իզմեր և վերջը իրենք էլ չեն իմանում ինչպէս ընկան նրանց մէջ և ինչպէս դուրս գան։

Աննա. Ինչ՞ը է դուրս տալիս, Մարիամ։

Մարիամ. Ինչեր է խօսում, Աննա։

Աթանէս. Լսեցէք ասեմ է։ Ես հասկանում եմ, դուք երևի մտածում էք, որ Արուսեակը մտածելիս կլինի, թէ մեծանում է, ժամանակն անցնում է և այլ այսպիսի կանացի, հետևապէս և խակ մտքեր. գլուխս վկայ, ոչ։ Այդքանը նրա խելքը չի կտրիլ։ Ուզում էք կանչենք հարցնենք։ Եթէ նա այդպիսի բաների մասին մտածելիս լինի, ես ինձ подлець կկոչեմ։ Չէք տեսնում, դեռ մինչև այժմ աշակերտական զգեստը չի հանել, այնքան միամիտն է։ Ուրիշները հէնց որ մի թղթի պատառ են առնում, իսկոյն, աշակերտական զգեստը долой.

Աննա (յանկարծակի). Աթանէս, մի երկարացրու իզուր։ Աղջիկս ձեռքից գնում է. ժամանակն անցնում է, ճար ունիս տես։ Ուրիշների առաջ ամօթալի կմնամ. ահա թէ ինչ։

Աթանէս. Ձեր ժամանակը անցաւ, Աննա։ Մարդու գնալու, երեխայ ունենալու մասին այժմ ով է մտածում։ Մարդիկ օձի ճտեր են դարձել, հեռատես, խորամիտ։ Այ հիմա կը տեսնենք։ (Կանչում է դէպի դուռը) Արուսեակ, Արուսեակ, ծիծեռնակս։

Աննա (ձեռքերն ականջներին դնելով) Ի սէր Աստուծոյ, մի կանչիր, աղջիկս ոչինչ չպիտի իմանայ։

Արուսեակ (դրսից) Գալիս եմ։

Աննա. Ոչ, ոչ։ (Աթանէսին) Ախր ինչու կանչեցիր։

Աթանէս. Թող գայ, ես նրան բան ունիմ ասելու։ (բարձր) Արուսեակ, ծիծեռնակս։

VII ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՑՆԵՐԸ ԵՒ ԱՐՈՒՍԵԱԿ

Արուսեակ (ներս է մտնում ու դռան մօտ կանգնում) Ես այստեղ եմ, քեռի։

Աթանէս. Այսինքն թէ մայրդ և ես կուզենայինք իմանալ քո դրութեան պատճառը։

Արուսեակ. Ես տխուր չեմ, քեռի։ Մայրիկին է միշտ այդպէս թւում։

Աթանէս. Ինչ ուրիշից թագցնում ես, քեռուցդ չես կարող, նա շատ հին գայլ է։

Արուսեակ. Բայց, քեռի, կան բնաւորութիւններ, որոնց համար տխրութիւնը մի բնազբօսիկ զգացումն է։ Ուզենաս-չուզենաս նա գալիս ու նստում է դէմքիդ։ Շատերի համար էլ նա մի արտաքին զարդ է, անկախ հոգեկան կեանքից ու երեւութական։ Իմն էլ այդպէս է թւում, այսինքն, որ ես տրխուր չեմ։

Աննա. Մայրդ չորանայ, աղջիկս։

Աթանէս. Թոյլ չե՞ս տալ պահանջել, ծիծեռնակս, որ այսպէս թէ այնպէս հեռացնես քեզանից այդ երևութական զարդը։ Կարծեմ դա սենաամինտիլիզմն է, չէ՞։

Արուսեակ (քաշուելով) Մի ծաղրիր ինձ, քեռի։

Աթանէս։ Մի՞թէ կարելի է ծիծեռնակին ծաղրել։

Արուսեակ (թեթեւ ժպտալով) Բայց ինչո՞ւմն է կայանում իմ ծիծեռնակութիւնը։

Աթանէս. Այդ արդէն իմ ինդուադուիլիզմն է իմանում։ Հը, ծիծաղում ես։ Կարծում ես քեռիդ բան չէ՞ հասկանում։ Այժմ, սիրելի ծիծեռնակս, մօրդ ուրախացնելու համար ուզում եմ այնպէս անել, որ այլևս նրա իշխանութիւնից դուրս գաս։ Լաւ բան չեմ ուզում քեզ համար։

Արուսեակ։ Բայց մի՞թէ նրան այդ ցանկալի է։

Աթանէս. Այդ քեզ է ցանկալի, հետևապէս և նրան։

Արուսեակ (լրջանում է). Ես լաւ եմ հասկանում, թէ ինչ է կատարւում։ Դու կարծում ես, մայրիկ, որ ես հիւանդ

եմ և խելագարւում եմ և այդ իրրև թէ նրա համար, որ 20 տարեկան լինելուց յետոյ քաշւում եմ իրրև օրիորդ հասարակութեան առաջ դուրս գալ։ Եւ դու, քեռի, հաւատում ես մայրիկին։ Ես դեռ երեխայ եմ։

Մարիամ (Աննային). Լսում ես։ Խելքդ նախկին ժամանակներին է գնացել։

Աննա. Բայց մի՞թէ այդպէս է։ Իսկ եթէ տանը մնայ, տանը։

Արուսեակ. Ես դեռ երեխայ եմ և նոր պիտի ճանաչեմ կեանքն ու աշխարհը։ Քանի վրաս է աշակերտական զգեստս, թող ոչ ոք իրաւունք չունենայ ինձ այդպիսի առաջարկներ անելու։

Աննա. Ես որ չէի ճանաչում աշխարհն ու կեանքը, ձեզ պակաս մեծացրի։ Քոռանայ մայրդ, ուրիշ ի՞նչ կարող ես ասել։ Մնում է որ ես էլ նոյնը կրկնեմ բոլորի առաջ։ Բայց ի՞նչ դուրս կգայ դրանից։ Ես վախենում եմ, Մարիամ, վախենում եմ որ տանը մնայ։ Աստղիկը ահա հասել է նրան, իսկ Համբարձումս 30-ից անց է, շատ անց։ Աթանէս, դու նրա խօսքերին մի նայիր, ինչ պէտք է՝ արա։

Աթանէս (Աննային). Թէև իմ ասածը դուրս եկաւ, բայց յոյս ունիմ, որ ծիծեռնակս կը լսէ իմ խօսքը։

Արուսեակ. Ամեն ոք թող իւր մասին մտածէ։

VIII ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԵՐԸ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Համբարձում (մտնում է այն ժամանակ, երբ Արուսեակը ասում էր վերջին խօսքերը)։ Ի՞նչ է պատահել, մայրիկ (սառն)։

Աննա. (Աշխատում է իրեն հանգիստ պահել, ձեւացնելով որ ոչինչ չի պատահել)։ Ոչինչ, սիրելիս։ Հիւանդ խօ չե՞ս. Այսօր ժամանակից առաջ ես տուն եկել։

Համբարձում. Ոչինչ, կարևոր թղթեր պիտի վերցնէի և իսկոյն կվերադառնամ։ (Խիստ) Բայց ի՞նչ է պատահել և այն էլ այսքան հանդիսականների ներկայութեամբ։

Աննա (պաղատական եղանակով) Ոչինչ, որդի, ասացի։

Համբարձում (Արուսեակին նայելով). Մի՞թէ Արուսեակն է։ Ես կասկածում եմ։

Աթանէս։ (վեր է կենում ու կանգնում Համբարձումի առաջ շատ մօտ, գրեթէ երես երեսի) Բարով եկար մեր գլխին, հազար բարով, քրոջ տղայ։ Ես շատ քիչ ժամանակ եմ տեսել քեզ այդպէս բարկացած, մանաւանդ խանութում՝ երբէք։ Իմ բանն այլ է, քեռիդ հէն դայլ է, նա գիտէ իւրաքանչիւր տեղ մի գոյն ցոյց տալ։ Նա տանն այլ մարդ է, խանութում այլ, կլուբում այլ, ընկերի մօտ այլ, բարեկամի մօտ այլ։ (Զէ, քրոջ տղայ, տեսնում եմ դու էլ պակաս պտուղ չես (մէջքին թեթեւ զարկելով)։ Եթէ քեռուցդ ես ժառանգել այդ, կարգին բան է։

Համբարձում (դէն հրելով). Այդ թողնենք, քեռի, ժամանակը չէ. (բարձր, չորս կողմը քննական հայեացք ձգելով) Ես իսկոյն պիտի իմանամ թէ ինչ է պատահել այս տանը։

Արուսեակ (քաշուելով) Մայրիկը կարծում է թէ...

Համբարձում (ընդհատելով խիստ). Ես մօրդ էի հարցնում և ոչ քեզ։

Արուսեակ (Երեսը բռնում է ձեռքերով ու հեկեկալով դուրս գնում)։

Աննա. Երեխայիս ինչո՞ւ էք սպանում։

Աթանէս. Ի՞նչ ես անում, հէր օրհնած։ Դու էլ տեղ գտար քեզ ցոյց տալու։ Ինչ գործ ունիս երեխայի հետ։

Համբարձում (խիստ) Հէնց դու ես փչացնում դրանց քո վարմունքով (ուզում է գնալ)։

Աթանէս (առաջը կտրելով). Դէ սպասիր էֆ, արի պատմեմ թէ բանն ինչումն է։ Դրսից լսւում է Աստղիկի ձայնը. «Ախ, մայրիկ, մայրիկ»)։

IX ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆԵՐԸ ԵՒ ԱՍՏՂԻԿ

Աթանէս (խօսքը յանկարծակի ընդհատելով). Ահա և իսկական ծիծեռնակս։

Աստղիկ (ներս է մտնում եւ դէպի մայրը վազում տխուր) Մայրիկ...

Աննա (յանկարծակիի եկած). Աղջիկս...

Արուսեակ (ներս է մտնում սարսափած). Ի՞նչ է պատահել, Աստղիկ։

Աստղիկ (փարում է մօրը). Մայրիկ, ասում են որ... Աշոտը...

Աննա (խիստ). Դէ շուտ, էլ նայելու տեղը չէ...

Աստղիկ (վճռական). Աշոտը... ամուսնացել է։

Աննա (իրեն կորցրածի նման). Աստղիկ... բայց այդ ո՞վ ասաց։ Այդ ճշմարիտ չի կարող լինել։ Աշոտս... ճշմարիտ է, նա հակառակ իմ և եղբօր կամքին գնաց, բայց մի՞թէ...

Աստղիկ (լաց լինելով) Այդ դեռ քիչ է, մայրիկ, սոսկալին այն է, որ...

Աննա. Դէ շուտ, ինձ մի սպանէք։

Մարիամ. Աննա, հոգեակս, հանգիստ։

Արուսեակ. Ես հանգիստ եմ։

Համբարձում (կատաղած). Այո՛, դու հանգիստ ես, բոլորդ էլ կհանգստանաք, իսկ նա՝, որի վրայ է ծանրանում ամբողջ բեռը հոգսերի։ Եւ ինչո՞ւ մենակ նա պիտի տանջուի։ Ինչո՞ւ, ինչո՞ւ, միայն ես կրեմ այդ զրկանքները։

Աստղիկ. Նա հրէուհու հետ է ամուսնացել, մայրիկ։ Մենք չարժանացանք նրա ուրախութեանը, մենք նոր բարեկամներ չենք ունենալ այլ ևս։

Աննա. Երանի թէ նրան ծնած չլինէի։

Արուսեակ. Դու ո՞րտեղից իմացար այդ բոլորը։

Աստղիկ. Նրա ընկերը, պ. Լեոն Մենակեանը պատմեց։ Նա երևի մեզ կայցելէ։

Համբարձում (գլուխը բռնելով) Ես գիտէի որ մենակ պիտի տնքամ, ուստի հակառակում էի նրա գնալուն։ Եւ թող այժմ մեղադրեն ինձ (գնում է)։

Աննա (յանկարծ ընկնում է դիւանի վրայ ուշագնաց) Վայ, որդիս ձեռքիցս ընկաւ։ Այլ ևս ես չեմ տեսնիլ նրան։

Արուսեակ (վազում է դէպի մայրը եւ բռնում) Ջո՛ւր, ջո՛ւր, նա կխելագարուի (Աստղիկը դուրս է վազում։ Վճռականօրէն). Լաւ է արել... Աշոտը։ Ես հայուհի եմ և ի՞նչ եմ... ի՞նչ եմ ներկայացնում ինձանով։

Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ

(Վարագոյր)

Կը շարունակուի

ՍԻՊԱՅԻ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

(Հնդկական կեանքից)

Տիպամման նոր 15 տարեկան էր։ Նա այնպիսի մի գեղեցկուհի էր, որով ամենքն էլ հաճոյքով հիանում էին. իսկ ջահիլները խո ուղղակի աչք չէին կտրում նրանից։

Ամենից աւելի աչք էր տնկել Տիպամմայի վրայ մի հընդիկ՝ Ռանգասամի անունով։ Նա նոյնպէս երիտասարդ և գեղանձն էր։ Կշատրիական՝ այսինքն զինուորական ազնուական դասակարգից ծագումն առնելով, Ռանգասամին ծառայում էր սիպայների զօրաբաժնում սպայի աստիճանով։ Այս ազնուական դասից էր և Տիպամման։

Դեռատի օրիորդին նոյնպէս դուր եկաւ փայլուն զինուորականը հէնց որ կարողացաւ տեսնել նրան։ Ըստ երևոյթին ոչ մի արգելք չկար երկու սիրող սրտերի միանալու առաջ։ Մինչդեռ կար արգելք, և այն էլ այնպիսին, որի առաջն առնելու ոչ մի հնար նախատեսել չէր կարելի։ Բանը նրանումն էր որ Տիպամման երեք տարեկան էր, երբ ծնողներից զրկուեց։ Նրա հայրը, որ սիպայների մի ջոկատի հրամանատար էր, սպանուեցաւ մի կռուում անգլիացիների դէմ. հօր ետևից նրա մայրն էլ մեռաւ, սիրելի ամուսնուն կորցնելու վշտից։

Տիպամմայի ազգականները մոլորուելով թէ ինչ անեն աղջկան, Վենգատտա-Սօնարի՝ Վիշնուի մարմնացումներից մէկի տաճարը տուին նրան։ Տաճարում դաստիարակուող աղջիկները մինչի 15 տարեկան հասակը համարւում են «Վինգատտա-Սօնարի հարսնացուք», և յետոյ դառնում են նրա «ամուսիններ»։ Հռոմի վեստալկանների նման նրանք ուխտ են դնում (շատ անգամ էլ բռնութեամբ) իրենց ամբողջ կեանքը, աւելի ճիշտն ասած, երիտասարդութիւնը, նուիրել աստուածութեան ծառայութեանը և ուխտադրժութեան դէպքում նոյնպէս մահուան պատժի են դատապարտւում։ Բայց հէնց միայն այս է Հռոմի վեստալկանների հետ ունեցած նմանութիւնը։ Վերջիննե-

ը մինչև իրենց մահը յարգանք, պատիւ և նոյն իսկ բաւական իրաւունք էին վայելում, մինչդեռ Վինգատա-սօնարի ամուսինները մի որոշ նշանակութիւն ունէին միայն քանի դեռ երիտասարդ էին։ Նրանց պարտականութիւնն է աստուածութեան նուիրուած հանդէսներում երգել ու պարել և շարունակում է այնքան ժամանակ, քանի որ աղջիկները նորատի են և ունին որոշ շնորհալի ճկունութիւն. իսկ երբ սկսում են թառամել, նրանց կրծքի վրայ Վիշնու Աստուծու նշանական դրոշմն են դաղմում և դուրս վռնտում տաճարից։ Այդ վայրկենից դժբաղտ «լակխմերը» (այդպէս են կոչում Վենգատա-Սօնարի հրաժարեալ ամուսինները) իրենց եղկելի գոյութիւնը պիտի պահեն գուշակութեամբ և մուրալով։ Այդպիսի վիճակ էր սպասում և Տիպամմային ծերութեան օրերում։

Թէպէտև այս տաճարական բանտարկեալների վրայ շատ խիստ են հսկում, բայց կրօնական հանդէսների ժամանակ յակամայից դուրս են թողնում նրանց տաճարից և ամենքը կարող են հաճոյքով նայել նրանց։ Հէնց այսպիսի մի առանձին աչքի ընկնող փառաւոր հանդիսում Ռանգասամին նկատեց Տիպամմային։

Գեղեցիկ, ընքոյշ, գեղակազմ, նազելի, ոտից գլուխ սպիտակ հագած, գլխին թափանցիկ վարդագոյն քող ձգած, որ առաւօտեան արշալոյսն է յիշեցնում, կոյսը միանգամից անջինջ տպաւորութիւն գործեց երիտասարդի վրայ։ Ամբողջովին տարուելով տաճարի գեղանի սպասուհու չընաղ պատկերով, Ռանգասամին մոռացաւ ամբողջ աշխարհը և հիացմունքով լի հայեացքը չէր կտրում գեղեցկուհուց որ տաժ-տաճիների, գօնգերի և զուիկների հնչիւններով կրօնական պար էր պարում դանդաղաշարժ թափօրի առաջից գնալով։ Տիպամման էլ նկատեց Ռանգասամիին, որը իւր ճոխ հագուստով, ձիւնատիպ փայլուն սաղաւարտով նոյնպէս շատ սիրուն էր։ Երիտասարդ սիպայի կիզող հայեացքից թրթռաց կոյսի սիրտը և յանկարծ մի անծանօթ զգացմունքով լցուեցաւ։ Այդ վայրկեանից թմրութիւնը տաճարի պարսպների մէջ՝ որ ցայս վայր միայն տաղտկալի էր, Տիպամմայի համար ուղղակի անտանելի ծանր դարձաւ։ Գեղեցիկ սիպայի պատկերն օր ու գիշեր հալածում էր նրան ինչպէս գաբուզ (кошмаръ)։

Ռանգասամին Տիպամմայից պակաս չէր տանջւում և երկար ու բարակ գլուխ էր կոտրում թէ որտեղ տեսնի գեղանի կուսին, խօսի նրա հետ առանձին և համոզուի թէ նա էլ սիրում է փոխադարձաբար։ Վերջապէս բաղդը՝ որևէ բան տո-

կունութեամբ ցանկացողների այս հզօր հովանաւորը, երիտասարդ զոյգին քովէքով բերեց։ Մի անգամ Ռանգասամին Վինգատա-սօնարի տաճարումն էր։ Երիտասարդը կանգնած էր հաստահիմն սիւնի ետև, այնպէս որ ոչ ոք նրան չէր տեսել։ Բոլորն էլ դուրս ելան տաճարից, իսկ Ռանգասամին՝ կարծես բևեռուած մի ինչ որ խորհրդաւոր ոյժով, չէ բկարողանում բաժանուիլ իւր տեղից։ Ցանկարծ նա իւր ետևում թեթևաշշուկ լսեց։ Ռանգասամին արագութեամբ շուռ գալով երես առ երես հանդիպեցաւ նրան, որին տեսնելու ամբան բուռն փափագ ունէր։ Մանկամարդ օրիորդը վաղուց էր տեսել նրան և յաջող վայրկեանի էր սպասում որ մօտենար նրան, աղօթելով հանդերձ ամենահզօր Վիշնուին միառժամանակ պահել երիտասարդին իւր տեղում։ Հէնց որ Տիպամման նկատեց թէ տաճարը դատարկուեց և գեղեցիկ սիպայը տեղիցը չի շարժուում, շտապեց դէպի նա։ Ռանգասամին օրիորդին տեսնելով կամեցաւ խօսել նրա հետ, բայց նա մատը իւր շրթունքներին դրաւ շտապով և նշանացի հրաւիրեց երիտասարդին հետևել իրեն։ Զգուշութեամբ անցնելով սիւների մօտով, Տիպամման սիպային տաբաւ տաճարի հաստ պատի մէջ շինուած խուլ խորունկ պատուհանը։

Երիտասարդները այստեղ շատ ապահով էին և կարող էին բացատրուել։ Խօսակցութեան արդիւնքն այն եղաւ որ պայման դրին փախչել Պոնտիշերի, այսինքն ֆրանսիական հողը, ֆրանսիական իշխանութեան հովանի ընդունել և պսակուել։ Մնում էր միայն տաճարից։ Տիպամմային փախցնելու հնարը գտնել և գործադրել։ Բանից երևաց որ այդ հեշտ չէր. բոլոր տաճարական կոյսերի վրայ շատ խիստ էին հսկում։ Նրանք կարող էին շրջել միայն տաճարի պարիսպների մէջ, որ բաւական բարձր էին և բոլոր մուտքերի մօտը մշտապէս հսկում էին պահապանները։

Ինչպէս յայտնի է սիրահարները ամեն ժամանակ աչքի են ընկնել իրենց հնարագիտութեամբը և երիտասարդ զոյգը հետևեալ նախագիծը կազմեց։ Տիպամման հաղորդեց իւր փեսացուին թէ տաճարական այգում ի միջի այլոց կայ մի մեծ տերևաշատ ծառ, որի հաստ ոստերը մի կողմից դրսի պատին են յենուում, որ իւր մօտերքումը ոչ մի մուտք և՝ հետևաբար ոչ մի պահապան չունի։

—Այդ ծառի վրայով կարելիէ պարիսպն ելնել։ Ես ընկերուհիներիս հետ շատ անգամ եմ այդ օրինը սարքել, աւելացրեց կոյսը։ Բայց թէ ինչպէս պէտք է պարսպիցը դուրս

իջնել՝ չգիտեմ. ախր պատը շատ բարձր է... Երեք մարդարոյ...

—Այդ էլ դժուար չէ սարքել, եթէ դու չես վախենայ, վրայ բերեց Ռանգասամին։ Չգիտեմ արդեօք կյօժարես դու, իմ աստղիկս...

—Ո՜հ, ես ոչ մի բանից չեմ վախենում և յօժար եմ ամեն բանի ինչ որ դու կմտածես, լոկ այս տեղից դուրս գայի և... քեզ հետ միանայի, ընդհատեց կոյսը, երիտասարդին սեղմուելով։ Ասա շուտով թէ ինչ հնարեցիր. ժամանակը չի ներում, մենք պէտք է բաժանուենք. այս բոպէիս պահապանները կդան տնտղելու չորս կողմը և տաճարի դռները փակելու։

—Ա՜խ ինչպէս չէի կամենայ բաժանուել քեզանից, իմ երջակութիւնս, իմ կեանքս, յուզուած բացականչեց երիտասարդը, քնքշութեամբ գրկելով կուսին։ Բայց ընդունում եմ որ այդ անհրաժեշտ է և յուսամ թէ մեր անջատումը կարճատև կլինի... Դէհ, այժմ լսիր թէ ինչ եմ ասում. ես քեզ համար մի երկար, ամուր մետաքսի սանդուխք կբերեմ... միայն չգիտեմ թէ ինչպէս հասցնեմ քեզ... Ցաջորդ տաճարական հանդէսը ե՞րբ կլինի։

—Աւաղ, ոչ շուտ, սիրելիս, տրտմութեամբ պատասխանեց կոյսը։ Հրապարակական հանդէսները մեզնում տարին մի քանի անգամ են լինում միայն և մինչև հետևեալը դեռ շատ կայ։

—Այն ժամանակ մենք ուրիշ կերպ կանենք. որտեղ է այն ծառը, որի ճիւղերը պարսպին են յենուում։

—Գլխաւոր մուտքից մի քանի հարիւր քայլ այն կողմը, եթէ պարսպի երկարութեամբ դէպի արևմուտքն երթանք։ Նա պարսպից բարձր է, ուստի և դրսից պարզ երևում է։

—Շատ բարի։ Ուրեմն մենք այսպէս կանենք։ Եկող գիշեր ես պարսպի վրայով այն ծառի մօտ կձգեմ սանդուխքը, որի մէջ մի քար կլինի վերևից ձգելու յարմարութեան համար։ Դու այդ սանդուխքով հանդերձ ծառի վրայով պարիսպը կբարձրանաս, պնդապէս կկապես սանդուխքը ծառի հաստ ճիւղին և նրա աղատ ծայրը պարսպից դուրս կիջեցնես։ Ես ցածումը կպահեմ սանդուխքը, քանի դու չես իջել նրանով։

Այսպէս պայմանաւորուելով, երիտասարդները վերջապէս բաժանուեցան։

Հետևեալ գիշերն ամեն ինչ կարծես ըստ գրոց եղաւ և փախստականները լուսաբացին արդէն բաւական հեռու էին Տիպամայի բանտարկութեան տեղից։ Մինչև Պոնտիշերի երեք

օրուայ ճանապարհ էր։ Ցունիսն էր, տարուայ ամենասոսկալի ժամանակը։ Լուսանալուն պէս գիշերուան զովութիւնը տեղի տուաւ ցերեկուան տօթին։ Բաց տեղերում ջերմ քամին սկսեց փչել, այրելով խոտերը, տրաքեցնելով քարերը, մինչև յատակը ցամաքեցնելով աղբիւրները և շիկացած օդը մանրամաղ փոշով լցնելով, տաք, որպէս բանուկ հրաբուխի մոխիր։ Երբ փախստականները մի փոքրիկ անտառի ծայրն էին հասել, որի միջով հէնց նոր անցել էին, Տիպամման սոսկալի յոգնածութեամբ, տօթով ու ծարաւով խսպառ ուժասպառ եղած, այլևս անկարող էր նոյն իսկ մի քայլ անելու և գրեթէ անզգայ ընկաւ մի հսկայական մանգենու տակ, որ հրապուրում էր իւր զովարար ստուերով։ Հէնց որ դեռատի կոյսը փափուկ դալարու վրայ նստեց, իսկոյն ընկղմուեցաւ խոր քնի մէջ։ Ռանդասամին էլ սաստիկ յոգնածութիւն էր զգում, բայց որպէս տղամարդ և զինուոր, որ սովոր է երկայն ճանապարհի, առաւել դիմացկուն էր և հարսնացուի օրինակին հետևելու ցանկութեան վրայ յաղթանակ տարաւ։ Իւր շուրջը նայելով երիտասարդը մօտիկում հնդկական մի գիւղ նկատեց և վճռեց գնալ այնտեղ ջրի, որ մօտերքումը չկար, իրեն տանջող ծարաւը յագեցնելու և այն կենդանացուցիչ զովութիւնից իւր հարսնացուին էլ բերելու։ Լիովին համոզուած լինելով թէ իւր կարճատև բացակայութիւնը Տիպամմային ոչ մի վտանգ չի սպառնում, Ռանդասամին անուշ քնած կուսի վրայ հիանալուց յետոյ, շտապով գիւղը գնաց։

Բայց հազիւ էր նա մօտակայ ծառերի ետևն անցել, երբ միւս մանգենու ետևից երևաց զզուելի արտաքինով մի մարդ, ձախ անթիտակումը մի կողովիկ գրկած։ Գրեթէ մերկ, նա միայն ոտքերին նեղ վարտիկ և գլխին մի ինչ որ գլխարկ էր կրում։ Նրա մերկ կուրծքը զարդարուած էր քառանկիւնի մի առարկայով, որ կախուած էր բարակ սրիմով, այդ մարդը՝ ինչպէս ասում են, կուրավեօր, այսինքն օձ պարածող էր։ Օձ պարածողները դէպքը բերած ժամանակը կողոպտելուց կամ սպանութիւնից չեն քաշւում։

Կուրավեօրը գաղտագողի մօտեցաւ անուշ քնով տարուած կուսին և կռանալով նրա վրայ, ուշադրութեամբ զննեց նրան և ապա նրա ձախ ձեռքը, որի վրայ հագցրած էր խոշոր յակնթով և ադամանդներով զարդարուած ապարանջանը՝ Ռանդասամիի պարգևը։ Այս թանկագին գանձի վրայ Կուրավեօրի աչքերը ագահութեամբ վառուեցան։ Համոզուելով, որ օրիորդը խոր քնած է, նրա մօտը դրաւ իւր

կողովիկն և խուփը վերցրեց, ապա մի քանի քայլ յետ գնալով, սկսեց օձի սուլոցի նման ձայներ արձակել։ Շուտով կողովից երևաց իժ օձի նախ գլուխը ապա բունը։ Օձը վեր բարձրացրեց իւր այլանդակ գլուխը դուրս քցած սոսկալի խայթոցով, ըստ երևոյթին ականջ կախելով ծանօթ ձայներին։ Հանկարծ նրա բոցավառ աչքերը տեսան զոհը։ Սոսկալի սողունը դուրս սողաց կողովից և վայրկենաբար հասնելով քնած կուսին իւր թունաւոր ատամները նրա կրծքի մէջ խրեց։ Սուր ցաւից յանկարծ արթնելով՝ Տիպամման փորձեց վեր կենալու շարժումն անել և դէն շպրտել իրենից թունաւոր իժին, բայց հազիւ կարողացաւ մի թոյլ ճիչ արձակել և էլի թմրութեան մէջ ընկաւ։ Դրանից յետոյ թովիչը նոր սուլոց արձակեց։ Այդ ձայներին հնազանդ օձը սողաց իջաւ կուսի կրծքից և վերստին մտաւ իւր կողովիկը։ Կուրավեօրը խուփը դրեց և զգուշութեամբ մօտեցաւ օրիորդին։ Նկատելով որ նա խոր ուշաթափութեան մէջ է, չարագործը թանկագին ապարանջանը հանեց նրա բազկից, խնամքով զննեց և գոհութեան ժպիտով տապատի գրպանը դրեց. յետոյ նորից անթելով օձի կողովիկը ծածկուեց անտառում։

Հինգ րոպէից յետոյ վերադարձաւ Ռանգասամին մի պառաւ հնդկուհու հետ, որ գլխին դրած մի դորակ ջուր էր բերում։ Երիտասարդի առաջին գործն եղաւ զարթեցնել հարսնացուին և պաղ ջուր առաջարկել նրան, որ նրա ծարաւը կ'յագեցներ և նրան կ'կազդուրէր։ Խոնարհուելով՝ ինչպէս կարծում էր քնած կուսի վրայ, նա կանչեց նրա անունը և քնքշութեամբ շարժեց նրա ձեռքը։ Բայց Տիպամման նոյն իսկ չ' շարժուեց։ Նա կրկնեց թէ մէկն և թէ միւսը՝ արդիւնքը նոյնն եղաւ։ Վախեցած յառեց նա աչքերը կուսի դէմքին և սոսկալի դալկութիւն ու տանջանքի արտայայտութիւն նկատելով այնտեղ, յուսահատ աղաղակով կանչեց.

—Ո՜, Մեծդ Բրամա. նա... մեռած է։

—Մեռա՞ծ է, կրկնեց հնդկուհին և շտապով ջրի դորակը գետնին դնելով ինքն էլ կռացաւ կուսի վրայ և ականջը նրա կրծքին դրաւ։ Ոչ, պարոն, նա մեռած չէ, այլ ուշագնաց։ Հէնց այժմ կտեսնենք թէ բանն ինչումն է...

... Ա՜խ, ահա թէ ինչ, աւելացրեց պառաւը օրիորդի կրծքի վերայ մի փոքրիկ վէրք նկատելով, որի բերնին արիւնը լերդել էր, նրան օձն է խածել... է, այդ բանին ճար անել կարելի է, և մենք գուցէ փրկենք նրան... Շատ

ժամանակ չի անցել... Ահա թէ ինչ, պարոն, եթէ չես վախենում, շրթունքներդ դիր վէրքի վրայ և շուտով դուրս ծծիր արիւնը, իսկ ես այժմ կերթամ դարման բերելու... ծծիր, որքան կարող ես պինդ պինդ և անդադար։

Այս խօսքերից յետոյ պառաւն շտապով դիմեց դէպի իւր գիւղը, իսկ երիտասարդը յուսահատութեան ամբողջ եռանդով սկսաւ իրեն յանձնած գործը։ Երբ հանգակտուր պառաւը վերադարձաւ, Տիպամման առաւել նկատելի կերպով էր շնչում, բայց առաջուայ պէս ուշաթափ էր։ Հիւանդին զննելով պառաւը գոհութեամբ ասաց.

—Հանգստացիր, պարոն, օրիորդը կփրկուի, միայն նա պէտք է պառկի, օձի թոյնն արդէն շատ է թուլացրել նրան։ Պառաւը լուաց վէրքը, որից այժմ հոսում էր պարզ, ալ կարմիր արիւն, խայթուածքի վրայ ինչ որ խոտ դրեց և տանից բերած մի կտոր կտաւով վարպետութեամբ փաթաթեց։

—Պարոն, այժմ ձեռքերիդ վրայ վերցրու օրիորդին և տար իմ խրճիթը։ Ես պիտի հսկեմ հիւանդի վերայ և երաշխաւորում եմ, որ կվերկացնեմ նրան։ Միայն թէ զգոյշ եղիր կապը չխախտես։

Ուրախացած երիտասարդը գետնից բարձրացրեց անզգայ կուսին և հետևեց պառաւին ամենամեծ զգուշութեամբ տանելով իւր թանկագին բեռը։

Պառաւ հնդկուհու արուեստը յաղթեց իժի սոսկալի թոյնին. Տիպամման ի մեծ ուրախութիւն Ռանգասամիի, յիրաւի փրկուեցաւ, բայց նրա առողջանալը ամբողջ մի ամիս քաշեց։ Երբ կոյսը բոլորովին առողջացաւ, երիտասարդ զոյգը յաջողութեամբ հասաւ Պոնտիշէրի և պսակուեցան այնտեղ։ Ռանգասամին ընդ միշտ մնաց Ֆրանսական գաղութում և նրա հռչակը տեղական զօրքերի մէջ շուտով առաջիններից ելաւ, իսկ գեղեցիկ կինը նրան այնպէս բաղդաւորեց, որպիսին միայն ցանկալ կարող է մարդ։

Թարգմ. ՊԱՏՐԻԿ

ԹԱՄԻԿՈՆԵԱՆ ՏՈՀՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ [1])

V

Թշնամու տուած հարուածներն անհետևանք չմնացին. հայոց տէրութեան անկման ջանքերը գնալով զգալի էին դառնում։ Անբախտ Հայաստանը դժուար էր շունչ քաշում կրօնամոլ՝ խարդախ Բիւզանդիոնի և բռնաւոր Տիսբոնի արանքում։ Սասանեան հարստութեան հաստատուելու օրից մինչև ճակատագրական 428-թիւը, երբ վերջացաւ հայոց թագաւորութիւնն Արշակունեաց ցեղից՝ հայերը 12 թագաւոր ունեցան, և 202 տարուց, որ այդ միջոցն է անում, — Հայաստանը 160 տարի միայն տէր ունեցաւ, մնացած 42 տարին բաժին թողնելով անիշխանութեան։ Եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ միջին թուով իւրաքանչիւր թագաւորի իշխանութիւնը 13 տարի ու մի քանի ամիս էր քաշում ամբողջ 160 տարուայ ընթացքում, այն էլ անցնում թշնամու որոգայթների դէմ կռուելով,—հասկանալի կլինի՝ թէ ինչ օրեր էին քաշում մեր թագաւորները և ինչ վիճակի մէջ էր դժբախտ Հայաստանը...

Եսականութեան ժամանակներ էին. երկրի ոյժերը ցիր ու ցան եղած իւրաքանչիւրը մի անկիւնում կուչ եկած իւր գլխի մասին էր մտածում։ Համերաշխութեան փրկարար գաղափարի վսեմ նշանակութիւնն անմատչելի էր այդ ժամանակի մարդկանց. տիրող միացնող միակ գաղափարը կրօնականն էր, այն էլ վարագուրուած՝ միտքը կաշկանդող։ Քրիստոնէական հաւատից այսքանն էր հասկացել հեթանոս հայը, թէ մարդ չպիտի սպանել, բայց թէ ինչ դէպքում, պարզ չէր նրա համար։ Մարդիկ շատ էին մոռացել կեանքի պահանջները. աւելի դրախտ ընկնելու մասին էին մտածում,

---

[1]) Լումայ 1906 թ. № 2.

քան հայրենիքի ազատութեան։ Խաւարը տիրել էր քաջ հայ ժողովրդի մտքին՝ չէր կարողանում օգտուել իւր ոյժերից, որովհետև, շնորհիւ տգիտութեան, չգիտէր ինչ ոյժի տէր է։ Խեղճը իւր յաղթուիլը սեփական ոյժերի թուլութեան նշան էր համարում, չէր իմանում, որ ինքը միայն մի անմեղ զոհ է իշխանների դաւաճանութեան և եսամոլութեան. իւր ամեն մի պարտութիւնը Աստուածային պատիժ էր համարում, տռանց իմանալու, որ այդ անմիաբանութեան արդիւնք է միայն։ Հայ ժողովուրդը նման էր ասպետի, որի զէնքերը թագցրել էին նրանից, մեքենայի՝ որի շոգին հանգցրել էին։

Տուրուբերանի, Վասպուրականի յաղթանդամ հայը փախչում էր հեթանոս պարսկի առաջ՝ երկրի ամուրներին տալի իրեն, փոխանակ սարսափ տարածելու թշնամու վրայ, և այդ միայն այն պատճառով որ ստրկացրել էին հայի աղատ ոգին կրօնական անմարս ստայօդութիւններով...

Ասորեստանի հզօր կայսրութեան դէմ 600 տարի քաջութեան հրաշքներ գործող առիւծի աչքերն այժմ փաթաթած էր, և թշնամին համարձակ մօտենում էր նրան։ Այո, այդքան մեծ է բարոյական ոյժը... Նա է ժարմնի ոգին, ոգևորողը՝ նրա կեանք ու կենդանութիւն տուողը. նա է ազգի փառաց հիմնաքարը։ Բարոյական ոյժն ազգի մէջ պակասելիս ազգն անզգայ է դառնում՝ կորցնելով պարտաճանաչութեան և պատուասիրութեան զգացմունքը՝ ջուր ցանելով հայրենասիրական կրակի վրայ։

Այդ էր պատճառը, որ հայ ժողովրդի բախտն ուրիշներն էին տնօրինում, ինքն անտեղեակ։

Շապուհ III-ի և Թէոդոս Մեծի փոխադարձ համաձայնութեամբ Հայաստանն երկու բաժին եղաւ (384). Կարինից արևմուտք անցաւ Յունաստանին, արևելքը՝ Պարսկաստանին. իսկ այդ բաժանմունքից մի 44 տարուց յետոյ երկու բաժիններում էլ վերջացաւ հայ իշխանութիւնը, և մեր եկեղեցին, կարծես երախտագէտ լինելու համար այն թագաւորին, որ պարսկի հետ բաժանելով Հայաստանը՝ նրա կործանման հիմնաքարն է դրել-սրբի տեղ է պաշտում, այն ինչ այդ հանրական սուրբը ոչ ոքի այնքան չարիք չի հասցրել, որքան մեզ։

Հայերի այդ դժբախտ դրութիւնից կամեցաւ լիովին օգտուել Պարսից Յազկերտ II-ը (438-457)։ Հանգամանքները կարծես նպաստում էին. այդ այն ժամանակներն էր, երբ

արևմտեան Հռովմէական կայսրութիւնը գերմանական ազգերի հարուածների տակ կործանուում էր, երբ Հռովմէական արևելեան կամ Յունաց կայսրութիւնը լարել էր ամբողջ ոյժը իւր գոյութիւնը պաշտպանելու համար նոյն ազգերի յարձակումների դէմ,— արևմուտքի գլուխը խառն էր։ Մեր դաշնակից յոյները ժամանակ չունէին օգնութիւն հասցնելու մեզ՝ Աթիլլան արևմուտք էր տանում նրանց. հայերս մենակ էինք, դաշնակից չունէինք. պարսից արքունիքը, կշռելով այդ բոլոր հանգամանքները, ազատ էր զգում գործադրել իւր վաղեմի փայփայած ծրագրները իւր հպատակ անարիների (ոչ պարսիկների) վերաբերութեամբ։

Կանգ չեմ առնիլ այն սատանայական միջոցների վրայ, որ գործ էր դնում Պարսից նրբամիտ քաղաքականութիւնը հայ ազգը ձուլելու, հայ անունն անհետացնելու համար. այսքանը կասեմ միայն՝ որ պարսիկներն իրենց պետութեան գոյանալու օրից միշտ այդ քաղաքականութեանն էին հետևում, միայն, հանգամանքներին նայած, զգոյշ, ամենայն հեռատեսութեամբ. պարսիկներն աւելի համարձակութիւն ստացան 440-ական թուականներից, երբ հայերի մտից ընկնելու վրայ էր իրենց անցեալ փառքը, երբ միացնող ոյժ չկար այլևս։ Այդ օրից համարձակ ձուլելու հարցը հրապարակում դրին։

Տարբերութիւն կար սակայն, հայերի վերաբերութեամբ բռնած Պարսից քաղաքականութեան մէջ հայերի հեթանոս և քրիստոնեայ ժամանակը։ Հեթանոսութեան ժամանակ բաւական էր պարսկի համար զրաւել հայի հողը-ձուլման խնդիրը լուծման ճանապարհի վրայ կարելի էր համարել, որովհետև հեթանոս հայի ու ժոխրապաշտ պարսկի մէջ եղած տարբերութիւնը, շատ աննշան էր. այն ինչ քրիստոնէական շրջանում հողը հայի ձեռից խլելով խնդիրը դեռ ևս չէր լուծում—անհրաժեշտ էր հայերի սրտին տիրելը. անհրաժեշտ էր կամուրջ գցել այն անդունդի վրայ, որով իրարից բաժանուում էին այդ երկու հին ազգի կրօնական գաղափարները, իսկ դրա համար անհրաժեշտ էր, որ հայերը կրօնով միանային պարսիկների հետ...

Այդ ժամանակ խօսեց հայերի մէջ ինքնապաշտպանութեան բնազդը և այս անգամ էլ սրբազան հայրենիքի ազատութեան դրօշ բարձրացնողը Մամիկոնեան տոհմից եղաւ-Վարդան սպարապետը, ազգային անմահ հերոսը։ Նշանաւոր զուգադիպութիւն! երկու հերոս-մինը հայ, միւսը

հռոմայեցի-միևնոյն 451 թուին քրիստոնէութեան և հայրենիքի պաշտպան էին հանդիսանում հեթանոսութեան դէմ՝ Վարդանն արևելքում, Այեցիոսն արևմուտքում։ Այդպիսով, իբրև նոր քաղաքակրթութեան զօրավիգ Վարդանը նշանակութիւն ունի և ընդհանուր պատմական տեսակէտից։ Վարդանի նշանակութիւնն աւելի մեծ է մեր աչքում այն տեսակէտից, որ ախոյեան ունէր իւր դէմ համարիւն Վասակ Սիւնեցուն, հայոց մարզպանին, մի մարդու, որ Պարսից արքունիքի աչքն էր համարւում։ Վարդանը երկու պատերազմ էր մղում՝ մինը պարսիկների, միւսն ազգային դաւաճանների դէմ։ Վարդանը հանդիսանում է մեր առաջ մի անձնաւորութիւն, որ կրում է իւր մէջ ազգի ամբողջ ցաւը. բոլորի աչքը նրան էր յառած, նա էր միայն որի մէջ աւելի խիստ էին բոցավառուած ժամանակակից հայի լաւագոյն իղձերը։

Այո, նա Վասակի պէս զգոյշ չէր, որովհետև խորը համոզուած էր, որ այդ զգուշութիւնից աւելի թշնամին պիտի օգտուէր, քան հայ ազգը. ճշմարիտ է, հանգամանքները նպաստաւոր չէին Պարսից ահռելի ոյժի դէմ լինելու, բայց կարելի՞ է լռել միթէ, երբ տեսնում ես գազանը գալիս է քեզ լափելու։ Այնտեղ՝ ուր ազգային ինքնապաշտպանութեան՝ պատուի խնդիրն է դրած՝ զգոյշ գործել անկարելի է. երկու ճանապարհ կար հայերի համար՝ կամ փառքով մեռնել, կամ ապրել ճիճուի նման։ Վարդանը ընտրեց առաջինը։ Վասակի պէս մտածողներ շատ կային, Վարդան էր հարկաւոր։ Սկզբից զգոյշ Վասակը, ինչպէս այդ տեսակների հետ լինում է միշտ, ստիպուեց հանգամանքների շնորհիւ ազգային դաւաճան դառնալ...

Հայ ժողովուրդը ժայռ էր համարում Վարդանին՝ կանգնած իւր առաջ։ Հայ հոգևորականութիւնն օրհնում էր Վարդանի կեանքը՝ համարելով նրան Քրիստոսի զինուոր, աւետարանի պաշտպան։ Հայ կինը, քաջալերուած Վարդանի անունով, անէծք էր թափում դաւաճանների գլխին, վառելով հաւատարիմներին։

Վճիռ կայացաւ յանուն կրօնական և հայրենի սրբազան հողի պաշտպանութեան քանդել ազգային հին նուիրական կապերը։ Այդպէս, իրաւունք տուին որդուն, որ սպանի իւր հօրը, եթէ տեսնի թշնամու կուսակից է դարձել. կինը պիտի թողնէր ամուսնուն, եթէ նրա մէջ հաւատի թուլութիւն նկատէր. ծառան իրաւունք ունէր սպանել իւր տիրոջը եթէ

սրտով չվիանար հայ գործին։ Այո, սոսկալի պատկեր էր ընդունել ոգևորութիւնը՝ ուրիշ կերպ չէր կարելի. մեծ էր վտանգը։

Ազգի փոքրամասնութիւնն, այդպէս, իւր վարդապետն արիւնով վճռել էր պաշտպանել ընդհանուրի շահը, նրանց պատիւը, որոնք, թագնուած «զգոյշ» անուան տակ՝ իրենց հաշիւներն էին տեսնում։ Ազգի ընտիր փոքրամասնութեան առաջնորդն էր Վարդան Մամիկոնեանը, մի մարդ՝ որի կեանքը մխուել, կոփուել էր զանազան պատերազմների մէջ, որից գոռող Յազկերտն անգամ ակնածում էր, անձամբ ճանաչելով Քուշանաց պատերազմներից։ Այդ ահարկու մարդն էր, որ 60000-ից աւել հայ մարդ առած հետը, 451 թուին, յունիսի 2-ին, սարաւ դէպի ահաւոր մարտ-Վասպուրական աշխարհի Արտազ գաւառի Աւարայր դաշտում այժմեան Մակուի խանութեան մէջ, Տղմուտ գետի ափերին։ Վարդանի զինուորական հեղինակութիւնն երևում է նոյն իսկ այն հանգամանքից, որ նրա ընկնելուց յետ, թէև կար հայոց 60 հազարեան գունդը, բայց հայերը չէին համարձակւում բաց դաշտում կռուել պարսիկների դէմ, այլ սկսել էին մանր՝ պարտիզանական կռիւներ անել։ Ղազար Փարպեցին յիշատակ է թողել մեզ Վարդանի մասին յայտնած Յազկերտ Ա-ի կարծիքը, որ թանկ նշանակութիւն ունի մեզ համար, որովհետև կարծիք թողնողը Վարդանի թշնամին է։

—Ասա այժմ,—դառնում է Յազկերտ Վասակին դատելու ժամանակ—ի՞նչպէս պատճառ եղար դու այնչափ արի (պարսիկ) և անարի (հայ) ծառաներիս կոտորուելուն. ի՞նչպէս կորցնել տուիր այնպիսի մի պիտանի երկիր (Հայաստանը), պատճառ դառնալով Վարդանի պէս ծառայի մահուան, որին Յունաց կայսրը եւ Հոնաց թագաւորը զօռով ձեռիցս ուզում էին խլել։

Եթէ թշնամի՝ հեթանոս թագաւորն է քրիստոնեայ Վարդանի մասին այսպէս խօսողը,—հասկանալի պիտի լինի մեզ համար, թէ ինչն էր պատճառը, որ Վարդանը այնքան մեծ համարում ունէր ժամանակակիցների աչքում։

Այո, ժողովրդի սրտին տիրել կարող են միայն նրանք, որոնք նրա ոգու անկեղծ թարգման են հանդիսանում,—այդ տեսակ մարդ էր մեր ազգային մեծ հերոսը...

VI

Վարդանանց պատերազմի հետևանքն այն եղաւ, որ պարսիկները համոզուեցին, թէ հայերի համար ամենաանբարեյաջող հանգամանքներում իսկ—երբ դրսից օգնութիւն չստանալուց զատ՝ շատն անտարբեր, շատն անցել է թշնամու կողմը—չէ կարելի տիրել նրանց սրտերին՝ փոխել տալով պապական հաւատը։ Այդ համոզմունքն ստիպեց նրանց, որ հայերի վերաբերութեամբ փոխեն իրենց քաղաքականութիւնը—դիմեն աւելի մեծ միջոցների. բայց այդ երկար չի տևում, Յազկերտ II մեռնում է (457), և մի երկու տարուց յետ գահ է բարձրանում Պերոզ, մի մարդ, որ ընաւորութեամբ և քաղաքական ուղղութեամբ աւելի խիստ էր Յազկերտից։ Պերոզն սկսում է նոր հալածանք, յառաջ բերելով, այդպիսով, երկրորդ կրօնական պատերազմ (459—484), որ տևեց ամբողջ 25 տարի։ Երկրորդ կրօնական պատերազմների ժամանակ հայերի քաշած տառապանքները մոռացնել տուին առաջին պատերազմներին քաշածները։ Ամբողջ 25 տարի Հայաստանը հանգստութեան երես չտեսաւ՝ Արցախի, Սիւնիքի, Գուգարքի և Տայքի այրերն ու անտառներն էին նրանց ապաստարաններն ու բնակարանները։

Այդ յուսահատ՝ մեռելային դրութեան ժամանակ ազգային հերոսը դարձեալ Մամիկոնեան տոհմից է լինում.—հանդէս է գալի Վահան Մամիկոնեանը՝ ազգային դրօշակը ձեռքին։ Հետաքրքրական է Վահանի անցեալը։ Վահանը Վարդան սպարապետի եղբայր Հմայեակի որդին էր, որը պատերազմից առաջ Յունաստան էր գնացել Թէոդոս II կայսրից օգնութիւն խնդրելու Պարսից դէմ. այդ օգնութիւնը չեղաւ՝ Թէոդոսին յաջորդեց Մարկիանոս կայսը, որը հրաժարուեց օգնութիւնից՝ չկամենալով թշնամանալ Պարսից։ Հմայեակի բացակայութեան միջոցին Վասակ Սիւնեցին դայեակների ձեռից խլել Հմայեակի որդոց՝ գերի էր տարել Պարսկաստան։ Գերուածների թուումն էր Վահանը՝ Հմայեակի մեծ որդին։ Վահանի մայր Զուիկը խելքով, վարք ու բարքով հայ կանանց զարդն էր, իսկ հայրը Հմայեակ, առաջին հայ մարդն էր Վարդան սպարապետից յետ։ Զուիկը Վրաստան էր գնացել, որպէս զի իւր փեսայ Վրաստանի Աշուշա բդեշխի միջնորդու կարողանայ գերութիւնից ազատի իւր որդոցը։ Աշուշա իշխանը թանկագին ընծաներով կարողանում է գրաւել Պարսից աւագանիների սիրտը, որոնք համոզում են Յազկերտ II-ին Աշուշային բաշխել Հմայեակի որդոցը։ Յազկերտ կատարում է իւր աւագանիների խնդիրը

և Աշուշա բերում է Հմայեակի որդոց Վրաստան (456) և յանձնում իրենց ժողովրդի։ Վրաստանումն է կրթուում, մեծանում մեր ազգային հերոսը։ Վահանը վերին աստիճանի համակրելի, անվեհեր և զգոյշ պարտիզան էր. նա միայն, կարելի է ասել, սպառեց պարսիկների ոյժը և Պերոզի յաջորդը Վաղարշ ստիպուեց հաշտուել այդ հերոսի հետ, և Դուինի դաշնադրութիւնը (484) ցոյց է տալիս, թէ որքան նուրբ է ըմբռնել նա ժամանակի ոգին և որքան խորը որոնել չարիքի պատճառները։

Ահա այդ հաշտութեան պայմաններն ամբողջապէս։ 1. Թոյլ տալ հայրենի հաւատի ազատ պաշտելը. ոչ մի հայի ժոգ չդարձնել. կրակատուները հեռացնել մեր երկրից և ոչ ոքի ժողութեան համար գահ ու պատիւ չտալ։ Արգելել այսուհետև որ կնգտոտ ու անպիտան մարդիկ թշնամութիւն չանեն մեր հաւատին, ինչպէս մինչև այժմ էր լինում։ 2. Մարդու հետ բռնակալի նման չվարուել, այլ արդարութեամբ ջոկել լաւը վատից, պիտանին անպիտանից։ Ազնուականին ու ռամկին իրենց տեղը պատուել, օգտակար ու պատուական մարդկանց առաջ քաշել. սիրել օգուտ տուողին, վնասատուին ատել։ Հասկացող մարդկանց մօտ պահել, խորհրդակցել նրանց հետ, իսկ անմիտներից ոչ միայն հեռի մնալ, այլ և խուսել նրանց դիւաններից։ 3. Ով էլ արեաց տերը լինի, պահանջում ենք նրանից, որ սեփական աչքերով տեսնի, ականջներով լսի ու այնուհետև անձամբ լաւն ու վատը իրարից ջոկի։ Այն թագաւորը, որ իւր առողջ աչքերով է տեսնում ու արդար բերանով խօսում,— նրա ծառաներն էլ օրէցօր, կեանք առած, կաշխատեն բարին աճեցնել, որով համ երկիրը կշէնանայ, համ էլ տերը կը պայծառանայ։

Զենք նկարագրում, թէ Վաղարշի հաւատարմատար Նիխորն ինչ պատուով ընդունեց Վահանին, այնքանը կասենք, որ նա Վահանի առաջարկած երեք կէտն էլ ընդունեց առանց փոփոխութեան և հետևեալ տարին, Նիխորի զեկուցման հիման վրայ, Վահանը դարձաւ Մարզպան Հայաստանի վրայ (485)։ Այս հաշտութիւնը խնդութեամբ ընդունեցին հայերը, որպէս վարձատրութիւն իրենց քսանուհինգամեայ հերոսական դիմադրութեան։ Յովհան կաթուղիկոսը Դուինի եկեղեցում խուռն բազմութեան առաջ դրուատեց Վահանի և նրա նիզակակիցների անսման քաջագործութիւնները և յորդորեց, որ ներողամիտ լինեն ուխտանենդների վերաբերութեամբ։ Չորս-հինգ տարի չանցած, սակայն Վահանի մարզպանութիւնից, մեռաւ խաղաղասէր Վաղարշ, գահը թողնելով Կաւատ

1-ին (488), որ բնաւորութեամբ Պերոզն էր յիշեցնում։ Դա ոչնչացնելով Դուինի հաշտութեան պայմանները, ահագին զօրք ուղարկեց Հայաստան, միանգամայն հիմնայատակ անելու այդ ըմբոստ երկիրը, որ հաստատակուել է դեռ հաշտութեան պայմաններ էլ առաջարկել արքայից-արքային։ Վերջին անգամ ստիպուեց ազատութեան դրօշակ պարզել Վահան, և այս անգամ բախտը շուտ ժպտաց նրան՝ Կաւատին գահընկեց արին, թէև երկրորդ անգամ գահ բարձրացաւ, բայց այլևս առաջուայ Կաւատը չէր՝ կեանքի դառ փորձերը փոխել էին նրան. բացի դրանից արտաքին հանգամանքներն ևս ազդեցութիւն արին նրա վրայ—յոյները չանք էին անում Միջագետքին տիրել, այդ պատճառով Կաւատ ստիպուեց հաշտուել Վահանի հետ, և Վահան իր մարզպանութեան վերջին տարիները ազգը խաղաղ կառավարելուց յետ մեռաւ ծերութեան հասակում (510)։

VII

Վահանի մահից յետոյ 173 տարուայ ընթացքում (510—683) Մամիկոնեան տոհմը տալիս է հետևեալ պատմական անձնաւորութիւնները՝ Վահանի եղբայր Վարդան մարզպանը, Վարդան II պատրիկ (առաջին Վարդանը 451-ի հերոսն է), Տարօնի իշխան Մուշեղ, Գայլ Վահան, Սմբատ, Համազասպ պատրիկ, Գրիգոր (1) պատրիկ։

Վարդան մարզպանին (511—515) հայ նախարարները ամբաստանեցին Կաւատ I-ի առաջ, թէ հակուած է յոյների կողմը, այդ պատճառով էլ Կաւատը զրկեց նրան մարզպանութիւնից։ Վարդան մարզպանը մեռաւ օտարութեան մէջ և նրա մարմինը բերին հայրենիք։

Հայերի մէջ, բնականաբար, այնքան կուսակցութիւն է եղել, որքան պետութիւն ազդելիս է եղել նրա քաղաքական կեանքի վրայ։ Պարթևների և հռովմայեցիների ժամանակ հռովմէական և պարթևական հայ կուսակցութիւնները, իսկ Պարսից և Յունաց ազդեցութեան ժամանակ՝ յոյն և պարսիկ կուսակցութիւնները կռծում էին իրար. մի որևէ վարչական անձնաւորութիւնից ոխ հանելու համար՝ բաւական էր մեղադրէիր նրան երկու արքունիքից մէկի առաջ։ Այդ զոհերից մինն էր մարզպան Վարդանը։ Վարդան II-ի պատրիկութեան ժամանակ (570-577) Դուինի մարզպանն էր Սուրէն պարսիկը, որի հրամանով սպանուեց Վարդանի եղբայր

Մանուէլը։ Վարդան II եղբօր վրէժը լուծեց ոչ միայն նրանով, որ, Դուինի վրայ յարձակուելով, գերեց Սուրէնին ու սպանեց, այլև հայերի հետ ընդունեց Յունաց հպատակութիւնը Յուստինոս II-ի օրով. այդ պատճառով Խոսրով I Նուշիրվան մեծ զօրք ուղարկեց Հայաստանի վրայ։ Պատերազմը սկզբումը յաջող հայերի համար, վերջացաւ նրանով, որ հայերը կրկին ընդունեցին Պարսից հպատակութիւնը, իսկ Վարդանը անցաւ Յունաստան։

Մուշեղ Մամիկոնեանի իշխանութեան ժամանակ (584-604) ծագեց Տարօնի նշանաւոր պատերազմը, որ տեւեց ամբողջ 20 տարի։

Վահանի մահից յետոյ Կաւատ I և յետոյ նրա յաջորդ Խոսրով Նուշիրվան սիստեմատիքաբար եօթանասուն տարուայ ընթացքում հալածում էին հայ ազգասէրներին զանազան պատրուակներով. առանձնապէս հետամուտ էին ոչնչացնել Մամիկոնեան տոհմը. միւս կողմից յոյներն առանց մի էական օգնութիւն ցոյց տալու հայերին, սուտ խոստումներով ջանք էին անում միայն տիրել Հայաստանին ամբողջապէս։ Հայաստանը, ոանատակ լինելով երկու կողմից, վերջը, VI դարի ելքում մնում է պարսից ձեռին։

Սակայն, հենց այդ ժամանակներից էլ նկատելի է լինում Պարսկաստանի թուլանալը. Խոսրով Նուշիրվանը վերջին թագաւորն էր, որ, կարելի է ասել, գերիշխան տարաւ հետը Պարսից զօրութիւնը։ Նրա մահից յետ Պարսկաստանը 73 տարի միայն կարողացաւ պահել իւր անկախութիւնը՝ 652-ին ընկնելով արաբների լծի տակ։ 590-ին Տուրուբերանը մեծ իրարանցման մէջ էր—Խոսրով II լարել էր իւր ոյժը, որ վերջացնի այդ տեղ Մամիկոնեան տոհմը. առանձնապէս բարկացած էր նա Տարօնի իշխան Մուշեղի վրայ, որին հրամայել էր շղթայած հասցնել Տիզբոն։

Ի՞նչ էր պատերազմի պատճառը։

Խոսրովին պալատականները գահընկէց արին, Խոսրովը դիմեց Մօրիկ կայսեր օգնութեանը, վերջինս յոյն զօրքով օգնութիւն ուղարկեց Ներսէս հայ իշխանին, որի հետ միացան Մուշեղ Մամիկոնեան և Սմբատ Բագրատունին։ Հայ իշխանները Խոսրովին կրկին գահ նստեցրին, բայց մի քանի տարի չանցած՝ նոյն փորձանքը Մօրիկի գլուխն եկաւ՝ Մօրիկին սպանեցին (հայ էր սա) և տեղը գահ բարձրացրին Փոկասին (602)։ Խոսրով 140,000 զօրքով գնում է իւր բարեկամ և բարերար Մօրիկի վրէժը հանելու Փոկասից։

Խոսրովը հրամայեց, որ Մուշեղ Մամիկոնեանն էլ միանայ զօրքով, բայց Մուշեղը մերժեց, և Խոսրով վճռեց վրէժխնդիր լինել։ Պարսկաստանը պատերազմ յայտարարեց փոքրիկ Տարօնին և Մշոյ երկիրը շնորհիւ Մամիկոնեանների 20 տարի դիմադրեց զօրեղ Պարսկաստանին։

Յովհան Մամիկոնեանը տալիս է մեզ այդ քսանամեայ պատերազմի նկարագիրը, և մեր առաջ դարձեալ երևում են Մամիկոնեան տոհմի հերոսները, Մուշեղ Մամիկոնեան, սրա ազգական Վահանը, որ աննման քաջութեան համար Գայլ մականունն էր վաստակել, Գայլ Վահանի որդի Սմբատը, Գայլ Վահանի թոռը-Վահան Կամսարականը, որի ազգը կնոջ տոհմի անունով էր։ Պարսկաստանն այդ քաջերի դէմ 30—40 հազարանոց զօրաբանակներ էր ուղարկում ընտիր զօրավարների առաջնորդութեամբ, որոնք նոյն իսկ Խոսրովի բարեկամներն էին-Միհրան, Վախթանգ, Սուրէն—բայց այդ զօրավարների ջանքերն իզուր են լինում Տարօնը նուաճելու. Պարսկաստանը 20 տարուայ ընթացքում ոչ միայն իւր նպատակին չհասաւ, այլև, տեսնելով իւր զօրքերի յաղթուիլը յետ կանգնեց իւր մտադրութիւնից, և Տարօնը խաղաղուեց։

Փոքրիկ Տարօնի մեծ Պարսկաստանին դիմանալը հրաշք չպիտի համարել. այդ պատմական այն երևոյթներից մինն է, որ գալիս է մեզ համոզելու՝ թէ մի ազգի մեծութիւն ոչ թէ նրա անդամների շատութեան մէջ պիտի որոնել, այլ ազգի բարոյական կազմի։ Տարօնի անօրինակ դիմադրութիւնն, ուրեմն, ոչ թէ երկրի դիրքով է բացատրուում միայն, այլև այն սիրտ բարոյական կապով, որով միացած էին այդ երկրի հայերը իրենց Մամիկոնեան իշխանների հետ։ Ժողովուրդն անսահման հաւատ ունէր Մամիկոնեանների վրայ, որոնք իրենց բարեմասնութիւններով վաստակել էին այդ անկեղծ հաւատը,—ահա թէ ինչ տեղ է բարոյական ոյժի յենակէտը։ Բացի դրանից, աննման պարտիզաններ էին Մուշեղ, Վահան, մանաւանդ Վահանը, որ թշնամու դէմ կռուում էր նրա զէնքերով։

Այդ ժամանակի մարդիկ պատերազմի յաջող ելքը խարդախութեան ու խաբէութեան մէջ էին որոնում։ Այդ կողմից իրարից պակաս չէին հեթանոս պարսիկներն ու քրիստոնեայ յոյները։ Քրիստոնէական վարդապետութիւնն ամենևին չէր արգելում յոյներին համ Մեծ վարդապետի անունով երդումներ ուտեն, համ էլ նրա անունը շահագործեն թշնամուն խաբելու, բարեկամին հաւատացնելու համար։

Շապուհ երկայնակեացը իւր հաւատի սրբութիւններով-կրակով ու ջրով-երդուել էր թէ Արշակ II-ին չպիտի վնասի, բայց խաբելուց չամաչեց. Յուստինոս II կայսրը ծանր երդումով խօսք տուեց Վարդան II-ին որ կօգնի, բայց ճգնաժամին լռեց։

Այդպիսի թշնամիների դէմ հակառակ միջոցների դիմելը յաղթուելու նշան է։

Վերջին Մամիկոնեանների յաջողումը կախում ունէր և այն հանգամանքից, որ պատերազմների ժամանակ լիովին օգտւում էին թշնամու զէնքերով։ Այդպէս, Գայլ Վահանը բարեկամ ձևանալով Միհրան զօրավարին, որ 30,000 զօրքով Տարօն էր մտել, գնաց նրա մօտ և խնջոյքի ժամանակ սպանեց թէ Միհրանին և թէ նրա օգնականներին։

VIII

Խաղաղուեց վերջապէս Տարօնը... Բայց այդ խաղաղութիւնը միայն փոթորիկ էր. գուշակում. 640-ական թուականներին առաջին անգամ արաբները երևացին Հայաստանում Տարօնի կողմից։ Տարօնի իշխան Վահան Կամսարականը հրաւէր կարդաց բոլոր հայ իշխաններին, որ գան ընդհանուր ոյժով դիմադրեն նոր և ահարկու թշնամուն, որի միայն անունն էին լսել մինչև այժմ։ Հայ իշխանները, ինչպէս սովորաբար լինում է անտէր երկրում, չեկան, չմիացան. այդ ժամանակ Վահանը ստիպուեց մենակ կռուել. նա իւր երկու եղբօրը՝ Տիրանին ու Մուշեղին (II) 8000 զօրքով ուղարկեց թշնամու առաջ. Վահանի հետ միացաւ Վանի կողմերից եկած Անձևացի Սահուռ իշխանը, որ հենց պատերազմի սկզբում անցաւ թշնամու կողմը։ Տիրանը ամեն ինչ մոռացած, մտաւ խորը և անձամբ սպանեց Սահուռին, բայց ինքն էլ ընկաւ հերոսաբար եղբօր հետ՝ նոր փառք աւելացնելով Մամիկոնեանների անուանը։

Արաբները, սակայն, հեշտութեամբ, միանգամից չը տիրեցին Հայաստանին. թշուառ Հայաստանը պատերազմի ասպարէզ դարձաւ այժմ էլ յոյների և արաբների համար, որոնցից իւրաքանչիւրը իւր կողմից հայի հպատակութիւնն էր պահանջում և հայի ոյժով պատերազմում էր միւսի դէմ. որպէս զի նոյն հային ստրկացնի... Խօսք չեն գտնում մեր պատմագրները այդ ժամանակների հայերի կրած տառապանքները նկարագրելու համար։ Առաջին երևալու օրից

արաբները մօտ եօթը տարի աւերածութիւններ արին Հայաստանում. միայն Դուինում 12000 մարդ կոտորեցին. այսպիսի աղէտների ժամանակ ահագին զօրքով գալիս է Հերակլի թոռ՝ Կոստանդ կայսրը (641—668) ոչ թէ Հայաստանը պաշտպանելու արաբների դէմ, այլ աւերելու։

Կայսրը հայերին մեղադրում էր այն մասին, թէ ինչու են մտնում արաբական լծի տակ և թէ, ուրիշ խօսքով, ինչու իրենց կոտորել չեն տալի յոյների համար։ Ներսէս III Շինող կաթուղիկոսը հայ իշխանների հետ հաղիւ հազ կարողացաւ իջեցնել կայսեր բարկութիւնը։ Կայսրը զօրքի բազմութիւնը յետ տուեց և քիչ զօրքով եկաւ Դուին. այդ տեղ սկսեց նա յոյնի հին արհեստը՝ հրամայեց կաթուղիկոսին և ուրիշներին պատարագին հաղորդուել ըստ յունական ծիսի՝ մի խօսքով, քաղկեդոնական հաշիւների ետևից ընկաւ։

Հաւատիանելուց յետոյ իբր թէ հայերը յոյն են դարձել հաւատով, կայսրը քաշուեց Բիւզանդիոն (Պոլիս)։ Թէ ինչեր էին անում Հայաստանում մնացած ծթռած յոյները, թէ ինչպէս վիրաւորում էին նրանք հայերի սուրբ զգացմունքները, —գլուխ ենք գրել։

Կոստանդի քաշուելուց յետ վրայ տուին արաբները և որպէս զի միւս անգամ հայերը չանցնեն յոյների կողմը, պատանդներ վերցրին իշխաններից, իշխանուհիներից, նրանց աղջկերանցից, տղերանցից — թուով 1775 ոգի, որոնց թուում և Գրիգոր Մամիկոնեանին (1)։ Գերիների ետևից Դամասկոս գնաց հայոց պատրիկ Թէոդորոս Ռշտունին, որպէս զի կարողանայ գերի ազատի, բայց չաջողուեց և օտարութեան մէջ մեռաւ, որտեղից մարմինը Հայաստան բերին։ Նոյն թուին մեռաւ և հայոց Սմբատ Կիւրապաղատը՝ Վարազտիրոցի որդին։ Ներսէս կաթուղիկոսը նախարարների հետ խորհուրդ անելով՝ Սմբատ Կիւրապաղատի տեղ Համազասպ Մամիկոնեանին կարգեցին, որ, պատմագրի ասելով, ընթերցասէր, իմաստուն և պատերազմիկ մարդ էր. իսկ Թէոդորոս Ռշտունու տեղ իւր որդի Վարդին նշանակեցին, որ հայոց պատմութեան մէջ յայտնի է Վարդ Պատրիկ անունով։

Արաբների ծանր հարկից և Կոստանդ կայսեր սպառնալիքներից ստիպուած հայերը մի երկու տարուց յետ յոյների հպատակ դարձան՝ Համազասպ Մամիկոնեանի համար Կիւրապաղատութեան պատիւ ստանալով կայսրից. լսելով այդ բանը, Օսման ամիրապետը այն 1775 հայ պատանդներին բոլորին կոտորել տուեց (655), բացի Գրիգոր Մամիկոնեանից։ Ամիրա-

պետը երդուեց անձամբ Հայաստան գալ և բոլորին սուր քաշել, բայց Ալիի կողմնակիցներից սպանուեց (656) և Ներքին կռիւներ սկսուեցին Ասորիքի Կուսակալ Մաւուի և Ալիի միջև, որոնցից վերջինն իրեն ամիրապետ էր հրատարակել, իսկ առաջինը իւր ազգական Օսման ամիրապետի սպանման վրէժն էր ուզում լուծի։ Ներքին պատերազմները վերջացան նրանով, որ Ալին դաւաճանի ձեռքով սպանուեց (661) և Մաւու կամ Մուավիա կուսակալը դարձաւ ամիրապետ իւր իշխանութեան օրերը հաշուելով Օսմանի սպանման տարուց (656 – 679), դառնալով հիմնադիր Օմէյեան հարստութեան։

Հայերը տեսնելով նոր ամիրապետի քաղցրութիւնը, միւս կողմից զզուած լինելով յոյների անտանելի վարմունքից Քաղկեդոնի ժողովի որոշումները չընդունելու համար, անցաւ նորից արաբների կողմը։ Այս միջոցներում մեռնում է Կիւրապաղատ Համազասպ Մամիկոնեան և Ներսէս III կաթուղիկոս նախարարների հետ խորհուրդ անելով՝ դիմում է Մաւու I ամիրապետին (658), որ հանգուցեալ Համազասպ Մամիկոնեանի տեղ նրա եղբայր Գրիգորին Կիւրապաղատ նշանակի, որ պատանդ էր Դամասկոս։ Ամիրապետը, յարգելով հայերի խնդիրը, Կիւրապաղատ ուղարկեց Հայաստան Գրիգոր Մամիկոնեանին, որի մասին պատմագիրը (Ցոլ. կաթ.) մեծ գովեստներով է խօսում, ասելով, ի միջի այլոց, «.. էր բարեպաշտ, երկիւղած յԱստուծոյ... և թէ՝ ս.. յաշխարհի, իբրև անապատի գոլով՝ հետևիւր զկնի ամենայն արդար վաստակոց»։

Գրիգոր Մամիկոնեան Արագածի արևմտեան ստորոտում Հառիճ աւանում, փառաւոր եկեղեցի է շինում. եկեղեցու հարաւային կողմը՝ ժայռապատ ձորի ափին ապարանք է կառուցանում, իսկ լերան արևելեան կողմը Եղուարդայ վանքն է շինում կուսակրօնների համար։

IX

Արաբական ընդարձակ պետութեան իսկական հիմնադիրը եղաւ Օմար I (632 – 644) երկրորդ ամիրապետը Մահմեդից յետոյ, որի օրով արաբները հիւսիսային կողմից հասան Կովկասեան լեռները, հարաւից Աղէնի ծոցը, արևմուտքից Տրապօլի, արևելքից Հնդկաստանի սահմանները։ Յոյներն ու պարսիկները, որ ամենայն օր հայ արիւն էին թափում, ստիպուեցին իրենց գլխի հոգսը քաշել։ Երէկուայ ահեղ

Պարսկաստանը մի քանի պատերազմներից յետ ոչ միայն կորցրեց իւր անկախութիւնը, այլ և ստիպուեց Մահմեդի հաւատն ընդունել, նա որ հետամուտ էր ուրիշի հաւատը փոխել տալ, իրենը չկարողացաւ պահել՝ այն ինչ՝ Հայաստանին լիակատար տէր դառնալու համար արաբներն ստիպուած էին կռուել 53 տարի (640—693), մինչդեռ Ասորիքին Եգիպտոսին, Տրիպոլիսին՝ Բիւզանդիայի կալուածներին տիրելու համար նրանք գործ դրին միայն 12 տարի (632—644)։ Այս երևոյթը բացատրւում է նրանով, որ երբ հայերը միանում էին յոյների հետ, արաբները յաջողութիւն չէին ունենում։

Հայերը արաբներին ատելով ատում էին. նախ որ ցեղով, սովորութիւններով սաստիկ տարբերւում էին իրարից, երկրորդ՝ արաբները մարդի պատիւ չեն իմանում. նրանց համար ամեն դասակարգի մարդ—իշխան, եպիսկոպոս, ռամիկ—միևնոյն էր, բանի որ քրիստոնեայ էր. բայց, չնայելով այդ բանին, հայը նախապատիւ էր համարում արաբի լուծը քաշի, քան թէ քրիստոնեայ յոյնի հպատակ լինի, որովհետև յոյնը իւր քաղկեդոնական պահանջներով, սկսած 451 թուականներից, հայի հոգին բերանն էր հասցրել... Այդ պատճառով հայերը նախապատիւ էին համարում արաբի հետ դժոխքն իջնել, քան հռոմի հետ արքայութիւն մտնել։

Յոյներն իրենց այդ մոլեռանդութեան պտուղը քաղեցին 1453-ին Այա-Սոֆիայի տաճարում... Այդ տեսակէտից արաբների երևալը, չնայած նրանց գործած անգթութիւններին, հայերի համար բախտաւոր երևոյթ էր, որովհետև, եթէ արաբները չլինէին՝ հարց է թէ հայ կմնար խարդախ Բիւզանդիոնի և բռնաւոր Տիզբոնի արանքում։

Պատմական բերմունքի շնորհիւ հայն ազատուելով յոյներից ու պարսկից՝ կամենում էր ազատուի և արաբից. արդարև տեսնում ենք, թէ ինչպէս հայ ընտիր իշխանները, որոնց մէջ առանձնապէս փայլում են Մամիկոնեանները, միշտ աշխատելիս են եղել օգտուել քաղաքական դէպքերից, արաբների անյաջողութիւնից։

Այդ տեսակէտից հետաքրքրական են մեր պատմութեան 758, 770, 780 և 840 թուականները, իբրև ապստամբութեան տարիներ, իբրև այնպիսի ժամանակ, երբ հայը ջանք է անում դէն գցել իւր վրայից օտարի բեռը։ 785-ին Աբբասեան հարստութեան երկրորդ ամիրապետն էր իշխում՝ Աբու Ջաֆար կամ՝ Ջաֆար-Ալ-Մանսուրը (754—775)։ Այդ ժամանակ պե-

տութեան վարչական կենդրոնը Բաղդադ էր, որովհետև Դամասկոսը, իբրև հին օմէյեան հարստութեան յիշատակներով լի մի տեղ, իբրև օմէյեան կուսակցութեան բուն, թէ անտանելի և թէ վտանգաւոր էր նոր՝ Աբբասեան հարստութեան համար։ Օմէյեան հարստութիւնը ոչնչացնելուց հետ՝ Աբբասեան հարստութեանը չյաջողուեց, սակայն, համայն մահմեդականների ամիրապետ լինել՝ ամբողջ ամիրապետութիւնը, որն այդ թուականներին, բացի Ամերիկայի հիւսիսային ափերից՝ տիրում էր նաև Սպանիային, առ այժմ երեք կողմ եղաւ։ Աբբասեանների սրից ազատուած օմէյեան ցեղի մի ժառանգ՝ Նիշամ ամիրապետի թոռ Աւդըրահմանը՝ Սպանիայում հերոսական ջանքերից յետ հիմնեց նոր ամիրապետութիւն (759—788), նոյնպիսի խլրտումներ կային այդ միջոցին և Աֆրիկայում, ուր իւր Ռաշիդ ծառայի հետ ապաստան էր գտել Ալիի որդի Հասանի թոռ Էդրիզ I-ը, որն այդ տեղ հիմնեց Էդրիզեան իշխանութիւնը։

Բացի դրանից Պարսկաստանի կողմերում, բուն Արաբիայում օմէյեան հարստութեան կուսակիցները, չնայելով անընկարագրելի, սոսկալի հալածանքներին, որ կրում էին նոր հարստութեան երեսից՝ շարունակ ապստամբութիւններ էին յարուցանում՝ վրդովման մէջ պահելով Բաղդադի ամիրապետութիւնը։

Այս բոլոր պատմական անցքերը գաղտնի չէին, իհարկէ, հպատակներից, որոնք միայն աղօթարար էին արաբների անյաջողութեան համար։ Կամաց-կամաց, երբ անցաւ առաջին թափը, հպատակները գիտակցութեան եկան՝ թէ արաբները էլ առաջուանը չեն, թէ մօտ է և նրանց անկումը. հետևապէս այն միտքը՝ թէ միահամուռ ոյժով կարելի է ձեռք բերել ազատութիւն—այնքան էլ անիրագործելի չէր թւում։ Այդ տեսակ մտքերով էին տոգորուած հայ ընտիր իշխաններից մանաւանդ Գրիգոր (II) ու Դաւիթ Մամիկոնեանները, որոնք միշտ հետամուտ էին հարաւի անցքերին։ Ինքն՝ ամիրապետ Ալ-Մանսուրը ապստամբութեան համար հող էր պատրաստում իւր պետութեան մասերում։ Այդ ամիրապետը, ինչպէս, առհասարակ, Աբբասեան հարստութեան և միւս ամիրապետները, վերին աստիճանի մոլեռանդ մարդ էր, քրիստոնեաները նրա աչքում մարդ չէին հաշուում։ Զբաղուած լինելով նոր մայրաքաղաքի շինութիւններով՝ ծանր հարկեր դրեց իւր մանաւանդ քրիստոնեայ հպատակների վրայ. այդ նպատակով իւր եղբայր Աւդլային ուղարկեց նա Հայաստան (758)։

Աւդլեան ծանր հարկի տակ դրեց Հայաստանը. այս հարկից ազատ չէին մնում հոգևորականները, եկեղեցական կալուածները, ճգնաւորները և մինչև անգամ իւր ժամանակի մեռածները։ Հրամայեց Աւդլեան խաչերը եկեղեցիների գմբեթներից վերցնեն, զանգակի ձայնը կտրեն, ժամասացութիւնը դադարեցնեն. ուսում չլինի։ Եկեղեցական զարդերն սկսել կիսագնով հրէաներին վաճառել, խստիւ արգելեց մօրուս պահելը, որ միայն մահմեդականին է վայել. հրամայեց որ գլխներին երկայն՝ փափաղներ դնեն, վզներից կապարէ կնիք կախեն,—մի խօսքով ամեն բան նախատեսուած էր, որ մարդը կորցնի իւր արժանապատուութիւնը և դայ այն համոզման՝ թէ ինքը մահմեդականի համեմատութեամբ մի ստոր արարած է, հետևապէս մարդ լինելու համար պէտք է մահմեդական լինել։ Ահա թէ ինչպիսի նեղութիւններ են կրել հայերը... իւր կարգադրութիւններն անելուց յետոյ՝ Աւդլեան գնաց Բաղդադ։

Այդ ժամանակ հայ իշխանները մտածեցին «սա ի՞նչ ապրուստ է, աւելի լաւ չէ՞ միանգամից մեռնել»։ Այս խօսքերն աւելի դառնութեամբ արտասանողներն էին՝ Գրիգոր և Դաւիթ Մամիկոնեանները։ Իշխանները խորհրդի հրաւիրեցին Աշոտ Մսակեր մականուանեալ Բագրատունուն, որ ժամանակի հայոց Մեծ Պատրիկն էր, բայց նա, իբրև զգոյշ Բագրատունի, խորհուրդ տուեց, որ սպասեն մի առ ժամանակ ևն։

Գրիգոր և Դաւիթ Մամիկոնեանները, չհամբերելով, բռնեցին և Աշոտի աչքերը կուրացրին։

Սակայն ցանկալի ապստամբութիւնը գլուխ չեկաւ և արժուն այն հետևանքն ունեցաւ, որ Եզիդ ոստիկանը Բաղ-
2դատ կանչուեց և նրա տեղ հրամանատար և պատրիկ նըշանակուեց Բագրատ Բագրատունու որդի Սահակը, մի օրինաւոր մարդ, և հայերը խաղաղուեցին այս անգամ՝ գործի հենց սկզբում անյաջողութեան հանդիպելով։

X

Ալ-Մանսուրի ամիրապետութեան վերջին (770) և նրա որդի Մահտիի առաջին տարիներում (780), երկու ապստամբութիւն եղաւ, որոնց պատճառները նոյն աղբիւրից էին, ինչ որ 12 տարի առաջ և պարագաներն նոյն Մամիկոնեան տոհմից՝ ինչպէս նոյն թուին։ Մահտի ամիրապետը (775—785) Ալ-

Մանսուրի հակապատկերն էր՝ որքան հայրը ժլատ էր ծախսեր անելում, նոյնքան որդին շռայլ էր. որքան հայրը աննեռողամիտ էր օժէյեանների վերաբերութեամբ, նոյնքան որդին նեռողամիտ։ Մահտիի օրով Բաղդադն աւելի զարդարուեց նոր ապարանքներով, մզկիթներով. բացուեցին նոր-նոր փողոցներ։ Մեծ շռայլութիւն էր տիրում պալատում. հետևելով ամիրապետի օրինակին՝ ամենքն ուրախութեան մէջ էին։

Սակայն թէ Մահտիի և թէ Ալ-Մանսուրի բնաւորութիւնը միակերպ ձեռընտու չէր նամանաւանդ քրիստոնեայ հպատակներին՝—Զափար-Ալ-Մանսուրը ծանր հարկեր էր դնում, որովհետև ագահ էր, որդին նոյնն էր անում, որովհետև շռայլ էր, և տուժողն ի հարկէ, հպատակներն էին։ Մահտիի մի Մեքքա գնալը 8 միլիոն ոսկի նստեց (Վերէր), և այդ ծախսերի մեծ մասը թշուառ Հայաստանի վրայ էր ընկնում։

Սուլէյման ոստիկանից յետոյ Ալ-Մանսուր ամիրապետը նրա տեղ Հայաստան ուղարկեց Բէքիրին, որի վայրագութեան սահմանը դժուար էր որոշել. այդ ոստիկանը հետը բերած զօրքին սանձարձակութիւն տուեց և նրանք, ցրուած Հայաստանի զանազան գաւառները, սոսկալի աւերածութիւններ էին անում։ Հայերը չկարողանալով տանել՝ յարձակուեցին նրանց վրայ և ցրեցին. այդպիսով Բէքիրի ու հայերի մէջ կռիւ ընկաւ։ Բէքիրն օգնութիւն խնդրեց Միջագետքի Մուսա իշխանից և երկուսով միացած, հայերին ջարդեցին, սպանելով 700, գերելով 1200 մարդ։ Յետոյ էլ դաւաճանութեամբ բռնուեց Մեծ Պատրիկ Սահակ Բագրատունին և բերուեց Մուսի մօտ. Մուսան իկոյն սպանել տուեց տեսնելուն հետ, գրաւելով գանձերը։ Այսպէս վերջացաւ 770-ի ապստամբութիւնը։

Մահտիի ամիրապետութեան օրով Բէքիրի տեղ Հասան ոստիկանն եկաւ. անպիտանների անպիտանը, որը իւր խժդժութիւններով նախորդից անցաւ։ Հասանի մարդիկը, ցիր ու ցան եղած Հայաստանի զանազան կողմերը, էլ անառակութիւն չէր մնում, որ չանեն, հոգեպահուստ չէր մնում, որ չգտնեն։ Ժողովուրդի սրբութիւնները պղծելով, նուիրական կարգերը քանդելով՝ սոված շան պէս, հոտոտելով գաւառից գաւառ դուրս եկաւ Տարօն։ Մուշեղ Մամիկոնեան (III) չկարողացաւ համբերել. ժողովելով իւր շուրջը Մամիկոնեան քաջերին՝ յարձակուեց Հասանի զօրքի վրայ և մի երկու ընդհարման մէջ 4200 մարդ սպանեց։ Հալածելով՝ Մուշեղ հասաւ Այրարատեան նահանգը. այս տեղից գնաց Նաուղղակի Դուինի վրայ, ուր ոստիկանն էր նստում։ Մուշեղի օրինակից խրախուսուած, հայ իշխաններից

շատերը իրենց գաւառների տէրերը դարձան, և սկսուեց արաբների կոտորած։ Ապստամբութիւնը գնալով մեծ ծաւալ ստացաւ աւելի նրանով, որ մի անյայտ հայ անապատական մարգարէաբար սկսեց յայտարարել՝ թէ արաբների տիրապետութեան վերջն է, իզուր է լռելը։ Հայ իշխանները իրենց սաստիկ ոյժերը միացնելով՝ հազիւ կարողացան 5000 զօրք ժողովել, այն ինչ թշնամին 30,000 զօրքով վրայ տուեց, և հերոսական դիմադրութիւնից ու թշնամուց 3000 մարդ սպանելուց յետ, ընկան պատերազմի դաշտում Մամիկոնեան քաջերը՝ Մուշեղ, Սմբատ, Սամուէլ, իսկ մնացած զօրքը ցրուեց։ Այսպիսի վախճան ունեցաւ և 780-ի ապստամբութիւնը։

XI

Մաւու կամ (ըստ երոպական պատմագրերի) Մամուն ամիրապետի օրով (833) Հոլ ոստիկանն է նստում Դուին. նրա տեղ հայերը Սմբատ սպարապետի և իշխանների միջնորդութեամբ նոր ամիրապետ՝ Մութասիմ Բիլլահից, (833—842) խնդրում են ազգի վրայ պատրիկ կարգել Սմբատ սպարապետի մերձաւոր ազգական Բագրատ Բագրատունուն— Սասունի հզօր, երևելի հայ իշխանին։ Բագրատի պատրիկութեան օրով Բաբան անունով մի պարսիկ իշխան ապստամբութեան դրօշակ էր բարձրացրել (839)— ուզում էր Պարսկաստանն ազատի արաբական լծից։ Բաբանի շուրջը բազմաթիւ զօրք էր հաւաքուել։ Մութասիմ ամիրապետը դրա դէմ զօրքեր ուղարկեց, բայց յաղթուեցին։ Բաբան, սիրտ առած, իւր յաղթական արշաւանքն ուղղեց Միջագետքի վրայ։ Այդ միջոցին ամիրապետի զօրքի մէջ էր Մանուէլ Մամիկոնեանը, իւր ժամանակի անուանի քաջը, որ դրանից քիչ առաջ Բիւզանդիոնից էր եկել սիրալիր ընդունելութիւն գտել ամիրապետի մօտ՝ վշտացած յունաց Թէոփիլոս կայսրից, որին անգին ծառայութիւններ էր արել՝ փոխարէնն ապերախտութեան հանդիպելով։ Ամիրապետը այդ քաջին ուղարկեց Բաբանի դէմ, և Մանուէլ Մամիկոնեան արիւնահեղ ճակատամարտի մէջ, որ տեղի ունեցաւ Տիգրիսի ափերին, ստիպեց Բաբանին քաշուել Հայաստանի կողմերը։

Բաբան չյուսահատուեց, նոր զօրք ժողովեց և, իւր գործողութիւնների կեդրոնը Սիւնեաց լեռներն ընտրելով, մտքումը դրեց Հայաստանը կորզել արաբների ձեռից։ Հայոց Սմբատ սպարապետը իմաց արաւ ամիրապետին Բաբանի կրկին զօրանալը։ Այդ ժամանակ Մանուէլ Մամիկոնեանը կրկին

Բիւզանդիոն էր հրաւիրուել, նրա տեղ ամիրապետն ուղարկեց Աւֆշին զօրավարին։ Աւֆշին, զօրացած հայոց այրուձիով՝ Արարատայ կողմերում, վճռական պատերազմի մէջ խորտակեց Բաբանի զօրութիւնը։ Սմբատ սպարապետի որդի երիտասարդ Սահլ անունն քաջութեան օրինակ տուեց՝ կենդանի բռնելով Բաբանին ու բերելով Աւֆշինի մօտ։

Աւֆշին Բաղդադ վերադառնալով՝ ամիրապետի առաջ շատ գովեց Սմբատ սպարապետին և մանաւանդ նրա որդի Սահլին. և մինչ ամիրապետն ուզում էր մեծ պատուի տիրացնի Սահլին, մեռաւ երիտասարդ հասակում։ Աւֆշին գովելով Սմբատ սպարապետին՝ սաստիկ չարախօսեց նրա ազգական՝ հայոց Մեծ Պատրիկ Բագրատ Բագրատունուց՝ մեղադրելով նրան պատերազմի ժամանակ չօգնելու համար։ Նոր ամիրապետը, Ջաֆրէ, և Ջաֆար կամ Մութավաքիլ (յուսացող առ Աստուած) ըստ եւրոպական պատմագրերի, (847—861) ուղարկեց Աբուսէթ զօրավարին, որ բռնի Բագրատ Բագրատունուն ու շղթայակապ ուղարկի Դամասկոս, ուր այդ ժամանակ Բաղդադից տեղափոխել էր նա իւր աթոռը։

Ջաֆար Մութավաքիլը Աբբասեան հարստութեան ամենալիրը ամիրապետներից մինն էր. ամբողջ պետութեան մէջ այս ամիրապետը իւր վեզիր Ֆաթախի հետ անբարոյակաութեան կողմից հաւասար չունէր (Շլոսեր)։

Մոլեռանդ ամիրապետը հրամայեց, որ բոլոր հպատակները, մահմեդականներից բացի, արտաքին նշաններ ունենան, որոնցով կարելի լինի ջոկել նրանց ուղղափառներից. այն է՝ վզներիցը պիտի կապարէ կնքած ծանրութիւն լինէր կախուած, սովորական գօտիների տեղ թոկ պիտի կապէին մէջքերը, երկար, սրածայր փափախ պիտի դնէին գլխներին։ Ձի նստելու իրաւունք չպիտի ունենային. նստածները էշ կամ ջորի պիտի լինէր։ Հրամայուած էր քրիստոնեաներին դռներից սատանաների պատկերներ կախել, իսկ տներում կուռքերի ու խոզերի նկարներ պիտի լինէին պատերից կախած։

Ահա այս խրոխտ ամիրապետն ուղարկեց Աբուսէթին, որ շղթայակապ իրեն հասցնի հայոց Մեծ Պատրիկին։ Աբուսէթ եկաւ Տարօն և խաբէութեամբ յաջողուեց նրան բռնել ու շղթայել Բագրատ Բագրատունուն։ Այդ ժամանակ, ահա, Սասունցիք, որ անչափ սիրում էին իրենց իշխանին, Գրիգոր II Մամիկոնեանի առաջնորդութեամբ ընկան Աբուսէթի վրայ, սպանեցին նրան, ցրեցին զօրքը՝ ազատելով Բագրատունուն։

Սասունցիների այդ ասպետական քաջագործութիւնը, սակայն, անագորոյն աւերածութեան պատճառ դարձաւ ոչ միայն ամբողջ Հայաստանում, այլև նրա հարևան երկրներում —Աղուանից և Վրաց աշխարհներում։

Ամիրապետն ուղարկեց իւր դաժանագոյն զօրավարներից մէկին՝ Բուղային, հրաման տալով տակն ու վրայ անել ամբողջ Հայաստանը, իսկ Տարօնում քարը քարի վրայ չթողնել։ Բուղան արեամբ ողողեց սկսած Արածանու (արևելեան Եփրատի) հովտից մինչև կովկասեան լեռնաշղթան. բոլոր հայ իշխաններին շղթայակապ, բոկոտն և գլխաբաց քշեց Դամասկոս։ Այդ իշխանների հետ էր և Գրիգոր Մամիկոնեանը, որի վրայ առանձնապէս բարկացած էր ամիրապետը, իբրև ծայրահեղ հողի վրայ։

Ամիրապետը հայ իշխանների առաջ երկու ճանապարհ դրեց՝ ընդունել իսլամի հաւատը՝ տիրանալ աշխարհային փառքի կամ՝ խմել դառնութեան սոսկալի բաժակը։ Բոլոր հայ իշխաններից երեք ոգի միայն բացարձակ յայտնեցին իրենց պատրաստականութիւնը՝ դատարկել դառնութեան բաժակը. այդ երեք փառաւոր հայից մինը Գրիգոր Մամիկոնեանն էր, մինը Բագրատունեաց իշխանութեան հիմնադիր Աշոտ I—ի հայր Սմբատը, որ հաւատին հաստատ մնալու համար խոստովանող ասուեց, և երրորդը՝ անմահ Ստեփաննոսը, որ զարմանալի տոկունութեամբ դիմանալով սոսկալի տանջանքներին՝ արիաբար նահատակուեց, իսկ Գրիգոր Մամիկոնեան, որին մենք Գրիգոր II ենք ասում իւր պապի հետ չխառնելու համար, մի հանգով բանտից ազատուելով դուրս եկաւ Բագրևանայ գաւառը և, այն տեղից էլ՝ իւր հաւատարիմ ծառայի հետ Գաբաղենից սահմանը հասնելով՝ թագնուեց մի քարանձաւում, ուր և մի շաբթից յետ մեռաւ (855)։

Մութա վաքիլ ամիրապետը Ատրպատականի Ահմէդ ոստիկանի վրայ սաստիկ հրաման ուղարկեց, գեանի տակից էլ լինի, գտնի Գրիգոր Մամիկոնեանին ու Դամասկոս ուղարկի։ Ահմէտ ոստիկանը մարդ ուղարկեց Աշոտ I-ի մօտ, որ գտնի Գրիգոր Մամիկոնեանին. սա էլ, իմանալով հանգուցեալի տեղը, գլուխը կտրել տուեց և ուղարկեց ոստիկանին՝ ասելով թէ՝ ուզում էր Յունաստան անցնի, բայց չթողի։

Այսպէս ընկաւ Մամիկոնեան տան վերջին պատմական անձնաւորութիւնը, որով հայերիս մէջ վերջանում է մի ազնիւ, մի հերոս տոհմ, որ իւր ամբողջ գոյութեան ընթացքում ոչ թէ դատարկ փառքերի ետևից էր ընկած, այլ իւր ազգի շինութեան վրայ էր մտածում. ազգի համար էր շունչ քաշում, նրա համար էր շունչ տալի։

Ա. ԱԳԱՊԵԱՆ

ՄԻ ԽՈՇՈՐ ՄԱՐԴՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Աբգար Յովհաննիսեանի մահուան երկրորդ տարեդարձի առթիւ)

Մեռաւ Աբգար Յովհաննիսեանը, չքացաւ ասպարէզից մի ականաւոր հասարակական գործիչ, խորասուզուեց յաւիտենականութեան մէջ մի խոշոր անձնաւորութիւն...

Խոշոր մարդկանց առանձնայատկութիւններից մէկն էլ այն է, որ նրանք իրանց մահովն անգամ զգաստացնում են իրանց հայրենի հասարակութիւնը, ստիպում են նրան քննել իր մօտ անցեալը և լուրջ ուշադրութեամբ նայել իր ներկային...

Հանգուցեալ Աբգար Յովհաննիսեանը այն հազուագիւտ հասարակական գործիչներից մէկն էր, որոնց նշանաբանը էժանագին ժողովրդականութիւն ձեռք բերելը չի, այդ պատճառով նա ոչ մի րոպէ իր երկարատև գործունէութեան ընթացքում չշոյեց ամբոխի բնազդները նրա սէրը վայելելու համար...

Մեծ քաջութիւն չի պաշտպան հանդիսանալ յաղթանակող ճշմարտութիւնների, որոնք սովորաբար աւելի մատչելի են լինում ամբոխի հասկացողութեանը, թէև ոչ միշտ նրա օգտին են ծառայում... Այդ տեսակ «ճշմարտութիւններ» պաշտպանողների ճանապարհը միշտ հարթ է լինում և նրանք էժանագին յաղթանակներով են ընթանում իրանց հարթ ու հաւասար ճանապարհով...

Բայց հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը իր ամբողջ

գործունէութեան ընթացքում միշտ քաջութիւն ունեցաւ ճատագով հանդիսանալ հալածուած ու ոտնակոխ արած ճշմարտութեան և թագալոյծ արած գաղափարների... Եւ միշտ փուշ ու տատասկ է լինում այդպիսի գործիչների ճանապարհի վրայ...

Շատ աննպաստ ժամանակ հասարակական ասպարէզ դուրս եկաւ հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը։ Այդ մի ցաւալի ժամանակ էր, երբ զանազան ճրճռան ու փքուն ֆրազներ և անզուսպ ու անտակտ հայհոյանքներ մեր նուիրական սրբութիւնների դէմ խլացրել էին հասարակութեան ականջը, չփոթել նրա միտքը և անընդունակ դարձրել նրան լսելու և ըմբռնելու աւելի լուրջ և ողջամիտ գաղափարներ...

Եւ այդ՝ մեզ համար դժբախտ ժամանակում հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը միակ հասարակական գործիչն էր, որ շատ որոշ կերպով ըմբռնում էր մեր հասարակութեանը սպառնացող վտանգները և կատաղի ու անհաւասար կռիւ մղում այն անմիտ ու կործանիչ մոլորութեան դէմ, թէ մեր նուիրականը և հարազատը մոռանալում և ուրանալումն է մեր փրկութիւնը և մեր յառաջադիմութիւնը...

Հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը մենակ էր այդ անհաւասար կռւում իր բազմաթիւ թշնամիների դէմ, բայց նա ոչ մի րոպէ չընկճուեց։ Նա հաստատ ու անսասան գնաց իր ճանապարհով, մինչև որ օտարները աւելի լաւ ըմբռնեցին ու գնահատեցին նրա ուղղութեան և պաշտպանած գաղափարների ճշմարտութիւնը, քան թէ մենք...

Բնական է, որ այդ անհաւասար կռւում հանգուցեալ Ա. Յովհաննիսեանը գործեց նաև շատ սխալներ։ Բայց նա երբէք չգործեց սխալներից կամ աւելի ճիշտը յանցանքներից ամենամեծը՝ նա երբէք չշոյեց ամբոխը նրան դուր գալու և ժողովրդականութիւն վաստակելու համար...

Ընդհակառակը, Ա. Յովհաննիսեանը միշտ աշխատեց անխախտ պահել ու պաշտպանել այն, ինչ որ սուրբ է, հարազատ և նուիրական մեզ համար և որը միայն կարող էր փրկել մեր հասարակութիւնը բարոյական անդառնալի կորստից...

Անցան տարիներ և իրականութեան դառը դասերը մեզ ապացուցեցին, որ ճշմարտութիւնը Ա. Յովհաննիսեանի կողմն էր և որ յիրաւի մենք մեր ձեռքով քանդում էինք մեր հասարակական շէնքի հիմքերը... Եւ քանի աւելի հասունանայ մեր հասարակութիւնը, նա այնքան աւելի ու աւելի կըմբռնի ու կգնահատի Ա. Յովհաննիսեանի գործունէութիւնը...

Կանցնեն դարձեալ տարիներ, երևան կգայ նոր սերունդ, որի համար գոյութիւն չեն ունենայ այսօրուայ մանր-մունր հաշիւները, բայց որի մէջ վառ կմնայ այն մարդու յիշատակը, որ մտքերի ընդհանուր շփոթութեան և խառնակութեան մէջ կարողացաւ անխախտ պահել ու պաշտպանել մեր հասարակական նուիրական սրբութիւնները և մեր փրկութեան միակ յոյսն ու ապաւէնը...

Ե. ԹԱՂԻԱՆՈՍԵԱՆ

Բագու

ՀԱՅ ԱԶԳԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԽՆԴԻՐԸ [1]

Մոլեռանդ ազգասիրութիւնը պ. Նիկողոսեանի հոգու տիրապետող գիծը լինելով, առաջացրել է նրա մէջ բնաւորութեան մի քանի յատկանիշներ, որոնց վրայից անկարելի է լռութեամբ անցնել մի երկարամեայ հրապարակախօսի գաղափարներն այսքան մանրամասնօրէն քննելուց յետոյ, մանաւանդ որ ինքը պ. Ն-ը իւր գրքոյկի մի առանձին գլխում ընդարձակօրէն խօսում է միմիայն իւր անձնաւորութեան մասին, վեր հանելով իւր հրապարակախօսութեան բնորոշ յատկութիւնները։

Պ. Ն-ին կարելի է համեմատել Ռուսաց մէջ յայտնի սլաւեանոֆիլների հետ, որոնցից, ասենք՝ ոչ ի նպաստ իւր, նա տարբերւում է ուսման թերութեամբ, մինչ սլաւեանոֆիլները, մանաւանդ Խոմեակովը, ինչպէս յայտնի է, վերին աստիճանի բազմակողմանի և լայն մտաւոր զարգացման տէր մարդիկ էին։ Պ. Ն. ինքը պատմում է իւր գրքում, թէ ինչպէս նա «նեղանում էր գիմնազիական չոր ու ցամաք դասերից, որոնց մէջ չկար ոչինչ սնունդ եռանդի ու զգացմունքների համար», և որոնք նրան թւում էին բոլորովին զուրկ որևէ առնչութիւնից իւր ազգասիրական ձգտումներին հետ, և թէ ինչպէս նա իւր սիրտը թեթևացնում էր ոտանաւորներ գրելով՝ ազգին նուիրուած (էջ 67)։ Այսպիսի հայեացքը ուսման նշանակութեան մասին իւր հայրենիքին ու ազգին ծառայելու գործում այն հետևանքն ունեցաւ, որ պ. Ն. հայ հրապարակախօսութեան ասպարէզը մտաւ խիստ անբաւարար մտաւոր պաշարով և այնուհետև էլ, կեանքի պայքարում և լրագրական գրչամարտի մէջ ոչ ժամանակ ունեցաւ և ոչ էլ միջոց՝ իւր մտաւոր պատրաստութիւնը ամբողջացնելու։ Պ. Ն. ինչպէս ցոյց է տալիս նրա գրքոյկը և նրա հոգևոր ու մտաւոր ամբողջ էութիւնը, ամենևին չի էլ զգա-

---

[1]) Լուսայ 1906 № 2։

ցել այդպիսի պատրաստութեան կարևորութիւնը, շատանալով լոկ իւր մօր տուած խրատներով և յոյսը դրած իւր խորին հաւատոյ, ջերմ հայրենասիրութեան ու անսպառ եռանդի վրայ։ Արդիւնքն եղաւ այն վայրիվերոյ և թեթև գրասիրական աշխարհահայեացքը, որ մենք տեսանք վերը՝ դիտելով նրա մտաւոր կեանքի նեղ հորիզոնը։ Այժմ էլ, երբ նա արդէն հասունացած մարդ է և անցել է կեանքի ծանր դպրոցից, պ. Ն. դեռ հաւատարիմ է իւր այդ հայեացքին մտաւոր պատրաստութեան մասին։ Թուելով մի առ մի օրինակելի հրապարակախօսի յատկութիւնները (էջ 81), նա ամեն բան ասում է, բայց այդ կէտը անուշադիր թողնում, մինչդեռ իւր յիշատակած հայ հրապարակախօսները, մանաւանդ Ստեփաննոս Նազարեանցը և Միքայէլ Նալբանդեանցը, այլ և օտարազգի մամուլի ղեկավարները, անշուշտ մտաւոր մեծ պաշարով զինուած մարդիկ են։

Մի ուրիշ տեղ նա բացորոշ յայտնում է, թէ «փաստերի վրայ յենուելով, տրամաբանօրէն խորհելով և լրջաբար մտածելով՝ կարելի է բոլորովին վհատուիլ» (85), և դարձեալ լիովին ապաւինում է իւր մօր աւանդած կրօնական հաւատին։

Պ. Ն-ի այսպիսի տրամադրութիւնը անշուշտ առաջ էր բերելու փոխադարձ անհասկացողութիւն, խորթութիւն և նոյն իսկ կատաղի ընդհարումներ նրա և ուսեալ դասակարգի մէջ՝ թէ Տաճկաստանում և թէ Ռուսաստանում։ Պ. Ն-ի իդէալը լինելով ոչ թէ ևրոպական ուսումն ու կրթութիւնը, այլ՝ սլաւեանոֆիլների պէս՝ գեղջուկ ժողովուրդը, բնական էր, որ նրա դէմ կռիւ յայտարարէին այդ ուսման ու կրթութեան մասնակից տարերքը։ Կ. Պոլսում մանաւանդ բանակռիւը շատ տաք եղաւ և երկարատև, բայց, ինչպէս երևում է, վճռուեց վերջ ի վերջոյ ոչ ի նպաստ պ. Ն-ի թէև իւր պատմելով, Կ. Պոլսի իւր հակառակորդները «Մասիս», «Թերջիմանի-Էֆքեար», «Հայրենիք», «Լոյս», «Փունջ» և «Մամուլ» թերթերում «շատ բաներ ուշադրութեան են առել և մի քանի ժամանակից յետոյ հրապարակապէս խոստովանել իրենց սխալները» (74)։ Տաճկահայ ինտելլիգենցիան, որի «մտքի հասունութիւնն ու զգացումների ազնուութիւնը» վկայում է պ. Ն. չէր կարող իդէալացնել հայ ժողովուրդը և «չատագովել նրա արժանիքները», մինչ այդ ժողովուրդը դեռ ևս հեծում էր թանձր խաւարի ու ստրկութեան մէջ։ Իւր կոչումը հասկացող տաճկահայ ինտելլիգենցիան չէր կարող չտեսնել, որ ոչ թէ իջնելով առ ժողովուրդը և նրանից բան սովո-

բելով, այլ բարձրացնելով նրան մինչև իւր աստիճանը և մատակարարելով նրան իւր ստացած եւրոպական կրթութիւնը, ոչ թէ գովելով նրան ու փառաբանելով, այլ ցոյց տալով նրան իւր թերութիւնները, նա կարող էր արթնացնել ազգային գիտակցութիւն և այդու կատարած լինել իւր պարտքը։ Եւ այսպէս մտածելով էր անշուշտ, որ տաճկահայ ինտելլիգենցիան «ամօթահար արեց, յաղթահարեց, կրթեց ու հոգեպէս իրան հետ ամուր կապեց ըմբոստ և անզուսպ լեռնականին», (75) այն է՝ իրեն պ. Ն-ին։

Բոլորովին այլ կերպ վարուեցին Ռուսահայերը, երբ «1899 թուին լոյս տեսաւ գերմանացի գրագիտուհու՝ օր. Մագդա Նէյմանի «Армяне» (հայերը աշխատութիւնը», որին պ. Ն. նիւթեր էր մատակարել։ «Ռուս հասարակութեան աչքում բարոյապէս ընկած, չարաչար ղրպարտուած և նախատուած չարաբախտ հայ ժողովրդի պաշտպանութիւնն եղաւ այդ աշխատութեան ձեռնարկելու նպատակը» (էջ 7)։

Պ. Ն. շատ տարօրինակ բացատրութիւն է գտել ռուսների ատելութեան դէպի հայերս. նրա ասելով՝ այդ ատելութիւնը արծարծել են ռուսաց մէջ յոյն կրօնաւորները, որոնք Բիւզանդիոնի անկումից յետոյ ապաստանելով Ռուսաստան՝ դէպի հայերը տածած իրենց պատմական ատելութիւնը սկսեցին տարածել նաև ռուս ժողովրդի մէջ, «ներկայացնելով հայերին իբրև Արիոսին հետևող հերետիկոսներ, Քաղկեդոնի ժողովը չճանաչող հերձուածողներ, չարագրգիռ նենդ, խաբեբայ և ապականուած մի ժողովուրդ։ Յերիւրեցին ամեն տեսակ առասպելներ։ Ասում էին թէ հայերը, ինչպէս Աստուծուց անիծուած և ուղղադաւան սուրբերից նզովուած արարածներ, մոր արգանդից այնպէս հոտած և կեղտոտ են ծնւում, որ նորածինների գարշահոտութիւնը կտրելու համար՝ մի մատ ալով ծածկումեն նորանց ամբողջ մարմինը. թէ հայերը հրէից նման սոխով ու սխտորով ապրող մարդիկ են, ուստի նորանց բերանից միշտ գէշ հոտ է գալիս...

Հայերին սկսեցին ամենուրեք անուանել «տրիկլեատից ալեօնի արմեաշկայ»—երիցս անիծուած և աղած գարշելի հայ, կամ սովորաբար՝ «պրոկլեատի (անիծուած) արմեաշկայ»։ (էջ 8)

Եթէ խօսքը ռուս հասարակութեան ստորին դասակարգի մասին է, թերևս պ. Նիկողոսեանի այս բացատրութիւնը ընդունելի լինէր, թէպէտ այն էլ կայ, որ կրօնապաշտ ռուս ժողովուրդը, որին՝ ռուս եկեղեցին շարունակ կրթել է կրօնական

աննեռողամտութեան ու հալածանքի ոգով, խորշում ու զզվում է նաև հրէաներից, հերձուածողներից և այլափառներից։ Բայց բանն այն է, որ հայերիս ատում են նաև ռուս հասարակութեան բարձր դասակարգերում և մանաւանդ կառավարական վերին շրջաններում, որոնց համար ատելութեան շարժառիթ դժուար թէ լինէին յոյն կրօնաւորները։ Այստեղ ատելութիւնը մնունդ էր ստանում ոչ թէ խեղաթիւրուած կրօնական զգացմունքից, այլ ազգասիրական որոշ ուղղութիւնից, որ մեկուսացնելով հասարակութիւնը հանրամարդկային կեանքի հոսանքից՝ զարգացնում է նրա մէջ ինքնահաւանութիւն, ինքնապարծութիւն, ամբարտաւանութիւն, արհամարհանք և ժխտական վերաբերութիւն դէպի այլազգիներն ու այլակրօնները և հալածանք ու աննեռողամտութիւն դէպի ստորադրեալ ազգութիւնները։

Երբ ռուս հասարակութեան բոլոր խաւերում տիրում էր այս «ծակ» ազգասիրութիւնը, սկսուեց Տաճկահայաստանում բոլորովին անժամանակ, վերջին հայկական ազատական շարժումը, որի մէջ «ռուս ժամուլի մի ազդեցիկ մասը նկատում էր հակակառավարական ձգտումներ»։ (էջ 10)։ Արտաքին միջամտութեան յոյսը ջուրն ընկաւ, և շարժումը խեղդուելով արեան ծովի մէջ՝ առաջացրեց լքումն ու յետաշրջութիւն։ Ծայրայեղ հայրենասիրական ոգևորութեանը յաջորդեց սառնութիւն ու անտարբերութիւն։ «Ազգի համար այսչափ ծանր հանգամանքների մէջ» պ. Ն. անկարելի համարեց լուռ կենալ, ուստի և հրապարակ դուրս եկաւ ռուս հասարակութեան ապացուցանելու համար, «թէ նա դատելով ու դատափետելով հայ ժողովուրդը ամենափոքր գաղափար իսկ չունի նորա մասին։ թէ ռուս ինտելլիգենցիան առհասարակ ոչ շնորհք ունի Ռուսաստանի մէջ ապրող ազգերն ուսումնասիրելու և ոչ հակում՝ անաչառութեամբ ու արդարութեամբ նորանց մասին դատելու» (էջ 10)։

Այս բոլորը միանգամայն ճշմարիտ է, և պ. Ն. մեծ հայրենասիրական արիութիւն է ունեցել այն ծանր ժամանակամիջոցին, երբ ռուս ժամուլի մէջ մի խօսք անգամ արտասանելը յօգուտ այլազգիների համարւում էր դաւաճանութիւն ռուս ժողովրդի կարծեցեալ շահերին, բողոքի զօրեղ ձայն բարձրացնելու և պաշտպանելու իւր հալածուած ազգը մայրաքաղաքի առաջաւոր թերթերում։ 1892 թուից մինչև այսօր պ. Ն. զետեղել է իւր յօդուածները Հայ ազգի մասին „Русская жизнь, „Новости“, „Міровые отголоски“ և „С. Петербургскія Вѣдомости“ լրագիրներում, և այդ յո-

գուածների ժողովածուն ինքն ըստինքեան կարող էր կազմել մի ընդարձակ հատոր, եթէ լոյս ընծայուէր առանձին հրատարակութեամբ։ Թէ որքան յաջողութեամբ, հմտութեամբ և կորովով նա կատարել է իւր ստանձնած դերը, մեզ չի վերաբերում այստեղ քննել և ռուսահայ ընթերցող հասարակութիւնը շատ աւելի լաւ կարող է դատել այդ մասին՝ կարդալով յիշեալ ռուս օրաթերթերը։ Վերը անյողակի յիշեցինք միայն, որ նրա յօդուածները հայ ազգի մասին գրաւել են նոյն իսկ արտասահմանի մի լուրջ ամսագրի ուշադրութիւնը։ Յամենայն դէպս, պ. Ն.-ի հրապարակախօսական գործունէութեան այս կողմը արժանի է հայ ազգի կատարեալ համակրութեան, աջակցութեան և քաջալերութեան։ Թող հայեացքների տարբերութեանը չարգելի ճանաչելու նոյն իսկ հակառակորդի արժանիքներև արժանիքն ու ծառայութիւնները։ Այսպէս են վարւում հասունութեան չրջանը մտած ազգեր, և ոչ թէ խռովում, քէն ու ոխ պահում, զրպարտում, բամբասում, հայհոյում, «բոյկոտ» անում և այլ ամեն տեսակ տգեղ ու անարժան միջոցների դիմում, հակառակորդին վնասելու համար, ինչպէս որ վարւում են մեզ նման տհաս և սահմանամիտ հասարակութիւնները։ Մինչ տաճկահայ ինտելլիգենցիան ամօթահար արեց, յաղթահարեց, «կրթեց ու հոգեպէս իրան հետ ամուր կապեց ըմբոստ լեռնականին», ռուսահայ ինտելլիգենցիան, ընդհակառակը, լրագրաց էջերը նրա առաջ փակել, միջոցներ է ձեռք առել՝ որ նրա գրածները չկարդացուին, պարզամիտներին գըրգռել է նրա դէմ, օտար թերթերի խմբագիրներին մատնութիւններով ու զրպարտութիւններով լի նամակներ է գրել (7 գ)։

Երկոքեան հայ ինտելլիգենցիաների վարմունքի տարբերութիւնը բացատրելու է նոցա ստացած կրթութեամբ և բնակավայրի ազդեցութիւնով։ Մինչ տաճկահայ երիտասարդութիւնը իւր ուսումը ստացել է անմիջապէս Եւրոպայից՝ նրա առաջնակարգ մտաւոր կենդրոններում, ռուսահայերը նոյն Եւրոպական ուսումն ու կրթութիւնը ձեռք են բերել լոկ Ռուսիոյ միջնորդութեամբ և նրա շատ անգամ յետ ընկած քաղաքներում. միւս կողմից, Կ. Պոլիսը լինելով մեծ մայրաքաղաք և միջազգային ամենատեսակ յարաբերութեանց կենդրոն, անշուշտ, աւելի է նպաստել լայն հայեացքներ մշակելուն, քան Եւրոպայից մեկուսի ընկած, գաւառական և աննշան Թիֆլիսը։

Մատնացոյց անելով ռուսահայ ինտելլիգենցիայի ապիկարութեան վերայ ազնիւ միջոցներով կռուելու այնպիսի մի թոյլ հակառակորդի դէմ, որպիսին պ. Ն.-ն է, (նորա

հայեացքների մանրամասն քննութիւնը, կարծեմ, ցոյց տուեց նորա մտաւոր ոյժի չափը) և նոյն իսկ «յաղթահարելու, կըրթելու և հոգեպէս իրան հետ ամուր կապելու» նորան՝ ի մեծ շահ ընդհանուր ազգային գործի,—հարկաւոր է, սակայն, այստեղ էլ վեր հանել պ. Ն-ի չարաբախտ սխալը իւր ռուս հրապարակախօսական ասպարիզի մէջ։ Այդ սխալը նոյնն է, ինչ որ նա գործել էր և տաճկահայոց մէջ, միայն թէ այստեղ նա հանդէս է գալիս օտարի լեզուով, օտարների առաջ և մի օտարուհու անուան տակ ծածկուած։ Նա դարձեալ իդէալացնում է ռամիկ ժողովուրդը, իսկ ուսեալ դասի մէջ նկատում է լոկ հայ ժողովրդից հեստեալ զաւակներ։

«Օր. Նէյմանի «Армяне» գրքի առաջին երեք մասերի մէջ —գրում այստեղ պ. Նիկողոսեանը - վեր հանուեցին հայ ազգի ընտիր յատկութիւնները,—նորա պարկեշտութիւնը, աղնուութիւնը, մարդասիրութիւնը, արդարասիրութիւնը, ընտանեսիրութիւնը, վեհանձնութիւնը, պատուազգացութիւնը, աշխարհաշինութեան և քաղաքակրթութեան հոգին ու ընդունակութիւնները, քաղաքացիական ու զինուորական սիրագործութիւնները, եւրոպական և ասիական զանազան ազգերի պատմութեան մէջ կատարած կուլտուրական և շինիչ դերը, և այլն, և այլն» (130)։

Մենք վերը մերժեցինք պ. Նիկողոսեանի ազգապաշտութիւնն ընդհանրապէս և յատկապէս նորա ժողովրդապաշտութիւնը՝ կրթեալ դասի դիմաց, երբ խօսքը նորա հրապարակախօսութեան վերայ էր հայերէն լեզուով։ Մենք այդպէս վարուեցինք այն խորին համոզմամբ, որ բարոյական տեսակէտից ինչպէս չկայ ամենակատարեալ մարդ, այնպէս էլ չկայ ամենակատարեալ ազգ, և որ կատարելութիւնը, իբրև իդէալ, հասանելի է ոչ թէ ինքնաբաւական անձնագովութեամբ և ազգի արժանեաց փառաբանութիւններով, այլ ինքնաճանաչութեան զարգացմամբ, իսկ սա լինում է՝ ճանաչելով ուրիշներին *) շարունակ նոցա հետ փոխադարձ հոգեկան տուր և առ և յարաբերութիւններ պահպանելով, և ոչ թէ մեկուսանալով և իւր մէջ ամփոփուելով։ Ուստի, մոտեցնել հայ ազգը եւրոպական ազգերին, տարածել նրա մէջ եւրոպական ուսումն ու կրթութիւն, մենք առաջին պայմանը համարեցինք մեր ազգային ապագայ դոյութեան համար,—մինչ պ. Նիկողոսեանը, ընդհա-

---

*) «Der Mensch erkennt sich nur im Menschen» (Մարդս միայն մարդով է ճանաչում իրեն), ասում է Գէօթէն։

կառակը, կարևորութիւն չտալով այդ ուսմանն ու կրթութեանը, հայ ազգի փրկութիւնը միշտ որոնել է գեղջուկ և խաւար ժողովրդի մէջ։

Բայց մենք բոլորովին այլ կերպ վերաբերուեցինք պ. Նիկողոսեանի ազգապաշտութեանը կամ, աւելի լաւ ասենք, ազգապաշտպանութեանը, երբ խօսքն եկաւ նրա հրապարակախօսութեան վերայ ռուսերէն լեզուով։ Մենք վեր հանեցինք այդ հրապարակախօսութեան անուրանալի արժէքը հայ ազգի համար այն մտքով, որ դա արծարծում է օտարների մէջ նպաստաւոր կարծիք հայերի մասին և համակրութեան զգացմունքներ զարթեցնում դէպի մի թշուառ և ստրուկ ժողովուրդ, որ դեռ սպասում է իւր երջանիկ օրուան։ Այս տեսակէտից պէտք էր ողջունել և յիշեալ գերմանուհու ձեռնարկութիւնը՝ ջատագովելու ռուս հասարակութեան առաջ հալածուած հայ ազգի բարեմասնութիւնքը։ Սակայն, օտարուհու աշխատութեան մէջ հայ ստորին դասի ջատագովութիւնից դատ կայ և չարաչար ամբաստանութիւն ռուսահայ ուսեալ և բարձր դասի. «գրքի չորրորդ մասի մէջ,—գրում է մի փոքր յետոյ պ. Նիկողոսեանը,—խօսելով ռուսաց բարձրագոյն դպրոցներն աւարտող հայ ինտելլիգէնտների մասին, ի միջի այլոց ասուած է, թէ «այդ ինտելլիգէնտները ինչ-ինչ պատճառներով այնչափ փչացած արարածներ են դուրս գալիս, որ հայ ժողովրդի կատարեալ հակապատկերն են ներկայացնում։ Բացառութիւնները մի կողմն առնելով՝ նորանք ոչ պատիւ ունին, ոչ խիղճ, ոչ օրէնք և ոչ հաւատ. նորանք հայ ազգի ոչ կրօնական Պետին են ճանաչում, և ոչ աշխարհական պետին. մէկ խօսքով՝ ոչ Աստուծուն են ճրագ և ոչ սատանային կրակ»։ Մէջ բերելով այս կտորը օտարուհու աշխատութիւնից, պ. Ն. հարց է տալիս. «Կարո՞ղ է արդեօք մէկն ասել, թէ այս խօսքերը ճշմարիտ չեն»։

Հարկաւ, ոչ ոք չի կարող ժխտել պ. Ն.-ի ասածների ճշտութիւնը։

Մենք վերևն արդէն ակնարկեցինք թէ մեր երիտասարդութիւնը լիովին համակուած է իմաստասիրական ու քաղաքական թիւր ուսմունքներով, որոնք, իրենց կարգին արդիւնք են ներկայումս Արևմտեան Եւրոպայում տիրապետող իմաստասիրական և քաղաքական ուղղութիւնների և սեպհականուել են բոլոր կիրթ ազգերի երիտասարդութիւններից և ոչ թէ կազմում են յատուկ մեր թերութիւնը։ Ինքը պ. Նիկողոսեանը բերում է իշխան Մեշչերսկու և այլ ռուս քննադատների այս միտքը հաստատող վկայութիւնները, որոնք ասում են թէ

«մեր ինտելլիգենցիան ամենևին մի բացառիկ երևոյթ չէ կազմում, այլ նա սոսկ ընդհանուր և տխուր երևոյթն է արտացոլացնում» (132)։ Եթէ մենք էլ ռուսաց և այլ ազգերի նման ժամանակից չլինէինք ևրոպական կրթութեան, մեր մէջ երևան չէին գալ ոչ ատեիզմը, ոչ կոսմոպոլիտիզմը, ոչ սոցիալիզմը և ոչ անարխիզմը (47, ծանոթ. 1), այլ կապրէինք լոկ հնաւանդ հաւատով և հպատակուելով ծերերի հեղինակութեանը, ինչպէս որ ապրում է դեռ նահապետական կարգերին հաւատարիմ գիւղական ժողովուրդը։ Վերը նկատեցինք, որ ուսումն ու գիտութիւնը առաջ է բերում տարբեր մտածողութիւն և տարբեր հայեացքներ, որոնք շատ անգամ կարող են սխալ լինել, բայց այդ սխալն ուղղել կարելի է ոչ թէ հրաժարուելով ուսումից և գիտութիւնից, ինչպէս որ անում էին սլաւեանոֆիլները և նոցա հետ էլ պ. Նիկողոսեանը, այլ դարձեալ նոյն գիտութեան օգնութեամբ, որ սխալներով ու սայթաքումներով մեզ ի վերջոյ հասցնում է ճշմարտութեանը։ Դժբախտաբար, մարդս ուրիշ կերպ չի կարող գտնել ճշմարտութիւնը, եթէ ոչ սխալներով։ Միմիայն կրօնն է տալիս անսխալ ճշմարտութիւն, իսկ երբ որ մարդս հրաժարուելով կրօնից՝ սկսեց ինքնուրոյն որոնել ճշմարտութիւնը, նա գտնում է այն սոսկ երկարատև և տաժանելի խարխափումներից յետոյ, որոնց յարակից են շարունակ անկումներ, հիասթափութիւններ և խոտորմունքներ։

Եթէ ուրեմն այս ցաւն ընդհանուր է, և ցաւի դարմանն էլ արդէն գտնուած է, ինչ միտք ունէր չարախնդաց օտարի առաջ, օտար լեզուով և անուան տակ ձաղկել մեր ընտանեաց վիրաւոր անդամը։ Այլ խնդիր, եթէ օտարուհի հեղինակը կամ ինքը պ. Ն., յանձն առած լինէր հերքել փաստերով ու տրամաբանական դատողութիւններով հայ երիտասարդութեան մոլար հայեացքները։ Նա դրանով ծառայութիւն մատուցած կը լինէր ոչ միայն մոլորուած հայ ինտելլիգենցիային, որ յաճախ իզուր է որոնում մեր մէջ իւր մտքի ղեկավարներ և առաջնորդներ՝ զինուած ժամանակակից ճշմարիտ գիտութեան և իմաստասիրութեան ընտիր պաշարով, այլ և նոյն իսկ ռուս մատաղ սերնդին, որ կաշկանդուած է միևնոյն հակասող տեսութիւնների անել ցանցի մէջ։ Բայց նա այդ չի անում, այլ միմիայն ամբաստանելով «մեր դիպլոմաւոր, երկդիմի, տմարդի և եսական ինտելիգենտներին», յայտնում ու ապացուցանում է ռուս հասարակութեանը, թէ «երիցս անիծուած արմհաշկանները հէնց այդպիսիներն են, այլ ոչ թէ ռուսերէն չիմացող հայ

ժողովուրդը։» (!!) Պ Նիկողոսեանը իւր այս ընթացքն արդարացնում է նրանով, որ «դիպլոմաւոր ինտելլիգենցիան հարիւրին 1/3 տոկոս անգամ չի կազմում և գրեթէ ոչինչ առնչութիւն չունի այդ խեղճ ազգի չար ու բարեաց, որտմութեան և ուրախութեան, մտաւոր և բարոյական առաջադիմութեան գործի հետ» (132)։

Եթէ խօսքը քանակութեան վրայ է, ինտելլիգենցիան, ուսեալ դասակարգը ամեն ազգի մէջ էլ սակաւաթիւ է, քանի որ «դիպլոմը»,—ասենք պ. Նիկողոսեանի խօսքով—ձեռք բերելու համար հարկաւոր է տարիներ անցկացնել բարձրագոյն դպրոցներում և հազարներ վատնել, ինչ որ կարող է անել միմիայն ունևորը, իսկ ունևորները միշտ և ամեն տեղ անհամեմատ աւելի քիչ են չունևորներից։ Սակայն չնայելով իւր փոքր թուին, ինտելլիգենցիան, կիրթ դասակարգը, աւելի մեծ նշանակութիւն ունի հասարակական կեանքում, քան ժողովուրդը, հասարակ դասը։ Սա ներկայացնում է ամեն ազգի մէջ միանման անկերպարան խաժամուժ ամբոխ. կերպարանքն ու պատկերը նրան տալիս է նրա միջից ելած ինտելլիգենցիան։ Սա է մշակում ազգային լեզուն, ստեղծում արուեստական գրականութիւնը, առաջ վարում գիտութիւնն ու իմաստասիրութիւնը, և վերջապէս սա է, որ գլուխ է կանգնում հասարակական ու պետական կեանքին, երբ ազգը ստանում է կազմակերպութիւն։ Առանց ինտելլիգենցիայի չկայ ոչ մշակուած լեզու, ոչ գրականութիւն, ոչ գիտութիւն, և ոչ էլ հասարակական ու քաղաքական կեանք։ Նա է երկրի աղը, աշխարհիս լոյսը. եթէ նա անհամեց և լոյսը կորցրեց, ուրեմն փչացաւ և հասարակութիւնը, կորած համարելու է և ազգութիւնը։ Եւ հէնց մեր բոլոր դժբախտութիւնն այն է, որ մեր ինտելլիգենցիան չէ կանգնած իւր հասարակական կոչման բարձրութեան վերայ։ Նա չէ տոգորուած իդէալիստական գաղափարներով ու ձգտումներով, այլ առաջնորդւում է լոկ մատերիալիզմով թէ մտածողութեան և թէ կեանքի մէջ։ Նա չի հասկանում իւր պարտաւորութիւնը դէպի իւր թշուառ ազգն ու հայրենիքը և մոլորւում է ընկերվարական բարբաջանքների մացառուտներում։ Սակայն իդէալիզմը և նրա հետ կապուած ազգային գիտակցութիւնն ու ինքնաճանաչութիւնը կարող են զարթել դարձեալ և միմիայն ընդհանուր հոսանքի ազատութեան տակ, և ոչ թէ վերադառնալով առ ժողովուրդը, կամ նախատելով օտարների առաջ։ Մարդկութիւնը իւր յառաջադիմութեան մէջ անցնում է զարգացման պէս-պէս աստիճանները,

որոնցից իւրաքանչիւրի վրայ հանդէս է գալիս և լիուլի զարգանում այս կամ այն գաղափարը։ Կար ժամանակ, որ ազգատիրութիւնն ու ազգերի վերածնութիւնը սուրբ նշանաբան էր Եւրոպայի համար. բայց այդ շրջանին յաջորդեց ուրիշը, որի մէջ զարգացաւ ազգատեցութիւնը և ազգերին կուլ տալը իւր շահի համար. թերևս այժմ մենք նորից գտնուում ենք պատմական մի այլ շրջանի նախադռանը, երբ վերածնելու է ազգային գաղափարը հանրամարդկային սկզբանց վրայ։ Ցամենայն դէպս, մատաղ սերունդը իւր հայեացքներում արտացոլացնում է ժամանակակից մտքի յեղյեղուկ հոսանքն և արտայայտում իւր կենցաղավարութեան մէջ։ Միմիայն հասուն մարդն է, որ հոգու աչքով վերից դիտում է պատմութեան ընթացքը և իւրաքանչիւր անցաւոր երևոյթին իւր տեղն է տալիս ամբողջ շարժման մէջ։ Եւ հէնց այդպիսի հասուն մարդկանց պարտքն է ցոյց տալ երիտասարդութեանը իւր մոլորութիւնն և զգուշացնել նրան յափշտակութիւններից, ազդելով նորա մտքերի վրայ։ Եթէ մեզանում չի եղել ոչ ոք, որ կատարէր այս առաջնորդող դերը, ապա ցաւալի է այս երևոյթը ևս առաւել, քան երիտասարդութեան մոլորութիւնները։

Պ. Նիկողոսեանի յարձակումները օտար լեզուով ռուսահայ ինտելիգենցիայի դէմ՝ բնականաբար յարուցանելու էին կատաղի թշնամութեան այն արարքները, որոնց մասին պատմուած է գրքոյկում և որոնցից մի քանիսը յիշեցինք վերը։ «Այդ ինտելիգենցիայի մեծագոյն մասը «Մշակի» թելադրութեամբ, ինչպէս և երկու տէրանց ծառայող որևէ մի քնձրոտ խմբագրի և ընկ. գաղտնի հրահանգներով— պատմում է պ. Նիկողոսեանը—բոլոր (ամէն) ջանք գործ դրեց հայ ժողովուրդը մոլորեցնելու համար, տարածելով ամենուրեք, թէ Մագդա Նէյմանի գիրքը հայ ազգն ամբողջովին խայտառակում է, յաչս ռուս ընթերցողների նորան հոգի հետ հաւասար է անում»... (էջ 131). պ. Նիկողոսեանը չգտաւ բաւականաչափ համակրութիւն նոյն իսկ այն կողմից, որտեղից որ նա ակնկալում էր։ «Ռուսահայ զարգացած դասակարգից և դիպլոմաւոր ինտելլիգենցիայի այն մասից, որ սերտ կապ է պահել իւր ազգութեան հետ, շատ աւելի մեծ համակրութիւն էինք սպասում» «Армяне» գրքին, քան թէ նա ցոյց տուեց,— գանգատւում է պ. Նիկողոսեանը։ Այն մարդուն, «որը Ներսէս պատրիարքի և կ. Պոլսի ազգայիններից շատերի ասելով՝ խօսել է վսեմ Ներշնչմամբ,

գրել է ոչ մելանով, այլ սրտի արիւնով և արտասուքի կաթիլներով» (75), ռուսահայերը «մատնիչ» և «դաւաճան» անունով պատուեցին (133)։

Այսպիսի ծայրայեղութեան հասած թշնամութիւնից պ. Նիկողոսեանի և ռուսահայ ինտելլիգենցիայի մէջ՝ ելք պէտք է գտնել։ Կռիւը պէտք է մի օր վերջ ունենայ և պատերազմը կնքուի հաշտութեամբ, զի անվերջ կռիւը կարող է միմիայն ուժասպառ անել հակառակորդներին, չծառայելով հասարակաց բարւոյն։ Քննադատութիւնը պարտաւոր է ցոյց տալ հնարաւոր ելքը անիմաստ կռուից։

Լաւագոյն ելքը պատուաւոր հաշտութիւնն է փոխադարձ զիջումներով երկու կողմից էլ։ Պ. Նիկողոսեանը, ճանաչելով իւր սխալը, պիտի համաձայնի այսուհետև ձեռք ձեռքի տուած գնալ ինտելլիգենցիայի հետ՝ ի շահ ընդհանուր ազգային գործի, իսկ ինտելլիգենցիան՝ հրաժարուելով իւր մոլար ընթացքից, պիտի յանձն առնի անշահասիրութեամբ և բոլոր ոյժերով նուիրուել ժողովրդի վերածնութեան գործին։ Այս ելքը ամենից աւելի պատուաբեր լինելով երկու կողմին էլ, ամենաօգտաւէտն է նաև հասարակական տեսակէտից։ Այդպէս են վարուում թշնամիները հասուն ազգերի մէջ, երբ այդ պահանջում է ընդհանուրի շահը։ Ճկուել ու համակերպուել բարոյապէս դատապարտելի է, երբ որ խօսքը անձնական շահի վրայ է։ Մարդս պէտք է խիստ լինի դէպի իւր անձը, իւր խղճի հետ երբէք դաշն չկապի, չհամակերպուի հանգամանքներին՝ դրժելու համար բարոյական սկզբունքներին։ Բայց երբ որ այդ պահանջում է ընդհանուրի բարիքը, նա ոչ միայն պիտի զիջումներ անի, ոչ միայն ճկուի ու համակերպուի, այլ և, եթէ հարկն է, նոյն իսկ հրաժարուի իւր դաւանած նախկին համոզմունքներից և հակառակի իւր զգացմունքներին. պ. Նիկողոսեանը իւր գրքի 71 էջում թուարկում է իւր բոլոր բարոյական արժանիքները։ Դոքա նորան միանգամայն պատիւ են բերում։ Բայց հասարակական կեանքում մարդս չի կարող առաջնորդուել լոկ բարոյական սկզբունքներով։ Բարոյական սկզբունքների նպատակը անհատական բարիքն է, իսկ հասարակութեան մէջ հարկաւոր է ի նկատի առնել ընդհանուր բարիքը։ Այս բարիքի համար շատ անգամ հարկ է լինում զոհ բերել անհատի անձնական բարիքը, ուստի շատ անգամ մարդս ստիպուած է վարուել հակառակ անհատական բարոյականութեան։ Անհատական բարոյականութիւնը պահանջում է զիջումներ չանել և դաշն

չկապել իւր խղճմտանքի հետ, մինչ ընդհանուր բարիքը պահանջում է զիջումներ անել հակառակորդներին և չյամառել իւր հաստատունքի վերայ։ Անհատական բարոյականութիւնը պահանջում է չսպանել, իսկ ընդհանուր բարիքը պահանջում է գնալ պատերազմի դաշտը՝ թշնամուն սպանել։ Անհատական բարոյականութեամբ առաջնորդուելիս պէտք է գնալ միմիայն շիտակ ճանապարհով, իսկ «դէպի ազգն ունեցած բարոյական պարտքը» կատարելու համար՝ (71) պէտք է յաճախ ընթանալ ծուռ ու մուռ գծերով։ Պ. Նիկողոսեանը միշտ շփոթում է անհատական բարոյականութիւնը հասարակականի հետ և անձնական իդէալը ընկերականի հետ։ Այստեղ էլ յայտնուում են մտաւոր անբաւարար պատրաստութեան ցաւալի հետևանքներին։

Պ. Նիկողոսեանի ընաւորութեան գծերը դիտելուց կարելի է եզրակացնել, որ նա հեռու կմնայ զիջումներ անելու դիտաւորութիւնից և երբէք չի հաշտուիլ իւր թշնամու հետ։

Ուստի նրան մնում է մի երկրորդ ճանապարհ, որ գնայ և գլուխ կանգնի այն ժողովրդին, որին նա պաշտում է և իդէալացնում, դառնայ հայ դեմոկրատիայի առաջնորդ և վարիչ, և կազմակերպելով նրա ահագին ոյժերը՝ նորից պատերազմ դուրս գայ ինտելլիգենցիայի և նրա զինակից բուրժուազիայի դէմ։ Այս ճանապարհն են ընտրում դեմագոգները, որոնք չհաշտուելով իշխող դասի հետ՝ ձգտում են տապալել նրա տիրապետութիւնը։ Իւր այս «լեզգիական, ուտէական, լեռնական և առնական» (72) անհաշտութեամբ պ. Նիկողոսեանը յիրաւի ապացուցանում է, որ նա իւր մէջ կրում է հայի ընդածին ընաւորութիւնը ամենայն խկութեամբ, ինչպէս որ մենք այդ պարզեցինք վերը։ Պ. Նիկողոսեանը անհաշտ, առանձնական, ազատասէր, անհատական, բայց ոչ հասարակական նախնի հայերի հարազատ որդին է, և սրանումն է կայանում նրա ողջ բարոյական անուրանալի արժէքը և հասարակական բոլոր անյաջողութեանց գաղտնիքը։

Սակայն պ. Նիկողոսեանի առաջ բաց է և մի երրորդ ճանապարհ, եթէ նա չուզենայ ընտրել նախորդը և մնալ իւր ժխտական ընաւորութեան թերութիւններով։ Դա այն է, որ նա հրաժարուելով իւր ազգից, նուիրի իւր ոյժերը մի ուրիշ ազգի։ Եւ կարծես թէ նա այս ճանապարհի վրայ է արդէն։ Նա այս գրքում յայտնում է, որ «С. Петербургскія Вѣдомости» ռուս թերթի ամենօրեայ աշխատակիցն է (էջ 13, ծանօթ), և շարունակ հետաքրքրուելով մարդկութեան վերա-

բերող հրատապ խնդիրներով, արձագանք է տուել միշտ նոյն լրագրի էջերում տառապեալ ազգերի և դասակարգերի վշտերին (79)։

Եւ ոչ ոք կարող է դատապարտել պ. Նիկողոսեանին, եթէ նա չգտնելով համապատասխան պայմաններ իւր մտաւոր ու բարոյական ոյժերը գործադրելու համար իւր ազգի մէջ, բոլորովին խզի բարոյական կապերը թէ հայ ինտելլիգէնցիայից և թէ իւր պաշտած հայ ժողովրդից, զի ինտելլիգէնցիան էլ, մամուլն էլ, նոյն հայ ժողովրդի հարազատ պտուղներն են, մէկը միւսին արժանի։ Ի զուր է պ. Նիկողոսեանը իւր մօր բերանով անգոսնում իւր ազգն ու հայրենիքը չճանաչողներին, ինչպէս որ նա Բեհրուդ-բէգի բերանով նզովում է կրօնը փոխող հայերին (51)։ Ազգուրացութիւնը ոճիր էր համարւում հին ազգերի մէջ։ «Ոչ ոք չի կարող հայրենիքից հրաժարուել« (Nemo pohest exuere patrium), ասում են հռովմայեցիք։

Նոր ազգերի մէջ մարդս ազատուել է նաև հայրենիքի կաշկանդող կապերից, ինչպէս որ նա ազատուել է ընտանիքի և երկրի բնութեան ստրուկ լինելուց։ Ներկայումս մի ազգի անդամ առանց խղճահարուելու թողնում է իւր հայրենիքը և անցնելով մի ուրիշ երկիր, հաստատւում այնտեղ և միանում իւր շահերով ու ձգտումներով նոր հայրենիքի հետ։ Եւ որքան աւելի են զարգանում միջազգային յարաբերութիւնները, այնքան աւելի են հեշտանում պայմանները մի ազգից միւսին անցնելու համար։

Պ. Նիկողոսեանի գրքոյկը զուրկ լինելով տեսական որևէ նշանակութիւնից, պարունակում է, սակայն, իւր մէջ զուտ գրականական մի քանի արժանիքներ, որոնց վրայից չի կարելի լռութեամբ անցնել։ Եթէ պ. Նիկողոսեանի մարը իւր քարոզներով ու խրատներով չի կարող մեզ համար ուղեցոյց հանդիսանալ, իբրև մօտիկ անցեալի տիպար, նա, սակայն, ունի մեծ գեղարուեստական ու կենցաղակրթական նշանակութիւն, ցոյց տալով մեր նահապետական շրջանում տիրող բարքերի հրապուրիչ գեղեցկութիւնը։ Նոյն շրջանին են պատկանում և միւս տիպերը, որոնք հանդիպում են նրա պատմութիւններում և որոնք նմանապէս անդիմադրելի կերպով ձգում են մեր սրտերի համակրութիւնը։ Այդպէս են՝ Սիլվի օղլունց պառաւը (46), Բէհրուդ բէգը (47—53) և իւր պատիւը հրացանով պաշտպանող Թրքուհին (55). պ. Նիկողոսեանի մօր ասածները վերաբերում են հետևեալ նիւթերին.

1. Բաբելոյ յաղթանակը (20), 2. Զարի հատուցումը (21), 3. Հաւատ (22), 4. Ազգասիրութիւն (22), 5. Ազնուութիւն (23), 6. Իմաստութիւն (23), 7, Նախանձ (25), 8. Ընտանիք (26), 9. Ընկերական կեանք (27), (10). Կրթութիւն (30), 11. Ազգերի յատկանիշներ (31), 12. Հայ ազգ (34), և 13. Գաւառացի հայեր (35), և ունին բանասիրական անհերքելի արժէք։ Պ. Նիկողոսեանը յայտնում է մէկ տեղ, որ ունի ձեռագիրներ, որոնց մէջ պատմուած են մեր մօտիկ անցեալի հերոսների կեանքից շատ հետաքրքրական նիւթեր։ Ցանկալի էր, որ այդ նիւթերը չկորչէին հայ բանասիրութեան և գրականութեան համար։ Մի տաղանդաւոր հայ վիպագիր կարող էր այդ նիւթերից սքանչելի վէպեր արտադրել՝ հայ մատենագրութեան մնայուն զարդ կազմող։ Ափսոս, որ ինքը պ. Նիկողոսեանը չդառաւ բանաստեղծ՝ հայերի մեռած սրտերը վառելու համար իւր կրակոտ գրչով։ Դա էր լինելու նրա իսկական կոչումը։ Նորա ստեղծած Պրոպոպովը, եթէ դա ինքնուրոյն է, մեր գրականութեան ամենայաջող արտադրութիւններից մինը պիտի համարել (108—125)։

Այժմ մենք կարող ենք հեշտութեամբ լուծել պ. Նիկողոսեանին մտատանջող հարցը՝ հայ ազգի կեանքի ու մահուան մասին։ Մի անհատական բնաւորութեան տէր ազգ, որ դաւանում է քրիստոնէութիւնը, անհատական բարոյականութեան այդ գերագոյն կրօնը, և մշակել է այդ կրօնի հողի վերայ լեզու, գրականութիւն և օրինակելի բարոյական կեանք, չի կարող երբէք ձուլուելով կորչել, ինչպէս որ չեն կարող ձուլուելով կորչել ոչ բուդդայական դալմուխները և ոչ մահմետական թաթարները Ռուսաստանի լայնածիր տափարակներում։ Այդպիսի մի ազգ կարող է կորչել միմիայն սրի և սովի մահով։ Այս վտանգների առաջն առնելու համար հարկաւոր է ներքին կազմակերպութիւն։ Երբ որ այս տողերը վերջացնելու վրայ էի, Ռուսաստանում հրատարակուեց սահմանադրութիւնը, որ շնորհում էր Ռուսիոյ ազգաբնակութեանը քաղաքացիական ու անձնական իրաւունքների հետ նաև իրաւունք մասնակից լինելու ծայրագոյն իշխանութեան գործողութիւններին։ Դա հնարաւորութիւն է տալիս հաստատ հողի վերայ դնելու և ազգի քաղաքական կազմակերպութեան հարցը։ Մեր նիւթից դուրս է այս կէտի վերայ խօսելը։ Ապագան միայն կարող է ցոյց տալ, թէ որքան հայերը հասունացել են մեր ազգային գոյութեան այս էական խնդիրը նպատակայարմար լուծելու համար։

ԳԷՈՐԳ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Վեէննա 1905, հոկտեմբեր

ԱՐԵՏԱՐԱՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ[1]

V

Երբէք, երբէք իմ գիւրազգաց հոգին անկարող է մոռանալ մեր գիւղը։ Նրա հետ ես կապուած եմ կամ հազար ու մի վաղեմի նուիրական յիշողութիւններով, որոնք իմ առօրեայ կեանքում և կեանքի մեծ դասեր են կազմում և՝ ոյժ ու կարողութիւն են ներշնչում ինձ, երբ իմ խորտակուող նաւակը օրերով, ժամերով շրջագայում է ծովածուփ ալիքներով յուզուող ծովի վրայ և հանգչելու կայան որոնում իր համար։ Որքան քաղցրախոհ բոպէներ եմ ես անցկացրել այդ պարզութեան, այդ միամտութեան աշխարհում։ Եւ վերջապէս, ինչով ես սերտ կապերով կապուած չեմ նրանից։ Աշխարհի որ չարն ու բարին չէ վխտում գիւղում. գիւղն ամեն ինչ է։ Նահապետական հինաւուրց համեստութիւնը տակաւին այնքան զգալի սրբութեամբ է պահել—պաշտպանել իր վաղեմի իր նախնաւանդ ինքնուրոյն գոյները, որ յաճախ անկարող ես ինքնամոռացութեամբ չսաւառնել դէպի վերը, դէպի հեռուն... Գիւղումն եմ ես առաջին անգամ ճաշակել և՝ թշուառութեան դառնութեամբ լցուած դաւաթը եւ զուարճութեան վարդագոյն յոյսերը, որոնք, ա՜ւաղ, շատ վաղ ցնդուեցին ինձ համար՝ նման ջրի բշտիկների, և այն օրուանից սև վիշտը, ցաւոտ խոցերը, այրուող վերքերը և անմարսելի մաղձը ամեն տեղ, ամեն անկիւն իմ անբաժան ընկերներն են դարձել։

---

[1]) Լուսայ 1906, № 2.

Գիւղ... Ինչեր չես շշնջում դու ինձ՝ և՝ անմեղ մանկութիւն եւ լեղու։

Լեղո՜ւ, որով կարողանում եմ մերթակի թափել կրծքումս դիզուող անթիւ ու անհամար խոցերի կոյտերը և գէթ որոշ ժամանակով թեթևութիւն պարգևել իմ տանջուող, իմ տառապող մարմնիս։

Առանց այդ լեզուի, ո՞վ գիտէ ինչ էր լինելու իմ սև օրը։ Առանց այդ լեզուի ո՞վ գիտէ անբախտութիւնը պիտի բաց անէր իր ահարկու բերանը և կլանէր ինձ. սակայն այդ լեզուն իւրաքանչիւր այդպիսի ժամերում երգում է, սգում է, ողբում է իմ ծով վիշտը։

Եւ դա վշտի լեզու է...

Մեր գիւղում ամեն ինչ անմոռանալի է ինձ համար։ Անմոռանալի է և մեր հարևան Փշտանց Մարգարը։ Դա մի ողորմելի աղքատ էր։ Սկզբում սրանրա մօտին հօտադի, մշակի չարքաշ պաշտօն էր վարում. սակայն տարիների ընթացքում համոզուեց, որ այդ դառն աշխատանքով անկարող է ամոքել իր դարդը, ձեռք զարկեց առևտրի։ Սկսեց չամիչից օղի պատրաստել և իր շալակով ամեն օր 7-8 վերստ ճանապարհը կտրել ու այդ օղին մեր քաղաքում վաճառել։ Մեր քաղաքացիները, հօ՛, օղորմի իրանց հօրը, գայլի ախորժակով վայրկենաբար սպառում էին նրա բեռը, որը յաճախ փութից աւելի էր լինում, և շուկայում օրը-ցերեկով արիւնահեղ տուր ու դմբոց սարքում։ Այսպէս Մարգարը առևտրի, խաբէութեան համ ու հոտը առաւ. չէ՞ որ յաճախ օղիի մէջ ջուր էլ էր խառնում ու վաճառում օղիի դնի։ Է՜հ, մեր հաստատլուխ քաղաքացիները չէին էլ երազում, որ Մարգարը իրանց օղիի փոխարէն ջուր է խմացնում։ Այդ պատճառով Մարգարը յաճախ իր մենախօսութիւնների ժամանակ, երբ գործ ունէր քաղաքացիների հետ, կրկնում էր. «ձեր բաբան անիծուած՝ դուք մեզ էշ գիւղացի էք ասում, հիմի ո՞վ է մեզանից էշը, մենք, թէ դուք»։

Ասացի, որ Մարգարը առևարի, որի հետ յաճախ անբաժան էր և խաբէութիւնը, համ ու հոտն առաւ և սկսեց իր կոպէկները դիզել ու խոշոր տոկոսներով սրանների տալ։ Ինչպէս, որ նրանք 150-200 ածան հաւեր ունէին, միմիայն մեծ Զատկին էին ձուի երես տեսնում. կամ երբ Մարգարի կինը ազատւում էր՝ երեխայ էր բերում, Մարգարը ինքն իր ձեռքով նրա համար ձուածեղ էր պատրաստում։ Խեղճ կինը հրքան աշխատում էր, ջանքեր էր թափում ամեն օր մի քանի ձու գողանալ ամուսնուց, անկարելի էր լինում, որովհետև Մարգարը սովորութիւն ունէր իւրաքանչիւր երեկոյ մտնել միայնակ հաւաքունը և իր աչ ցուցամատով «սրնչ» (ստուգել) հաւերին։ Դրանցից նրանք, որոնք ձուով էին լինում, բաժանւում էին մի-ուներից և հատակուռ կողպէքով փակւում մինչև այն ժամանակ, երբ ածում էին իրանց ձուերը, որից յետոյ Մարգարը դարձեալ դուռը բաց էր անում, գուրսում, գուրգուրում էր իր աշխատաւոր մշակներին և դուրս թողնում։

Այս դէպքում նա սովորութիւն ունէր կրկնելու. «առէք, գնացէք, բալաներս, դուք ձեր պարտքից պրծաք»։ Եւ ուրախ-ուրախ ձուերը ժողովում էր ու դէպի քաղաքը աճապարում։ Իսկ աշնան մօտերքը նա ձուերն անմիջապէս քաղաքը չէր տանում վաճառելու, այլ ժողովում էր, բազմացնում և հազարների հասցնում նրանց թիւը և ձմրան, երբ ձուի երկուսը 5 կոպէկ էր դառնում, նոր սկսում էր անընդհատ կրել քաղաքը ու այնպէս սպառում։ Թէև յաճախ պատահում էին և կատկածաւոր ձուեր, սակայն նա այնպիսի սուր-սուր երդումներ էր ուտում, թէ՝ «տղաս մեռնի, հէրս չուն դառնայ, հոգիս կպրէ կարասի մէջ էրուի, թէ դրանք խարաբ են. չէ, չէ, աղբէր, ի՞նչ սուտ ասելու բան կայ, ձեզ ասում եմ, որ թազայ ձու են...

Այսպէս տարեց տարի Մարգարը սկսեց բազմա-

պատկել իր առևտուրը։ Էլ ի՞նչեր ասես, որ նա չէր վաճառում, այն էլ շալակով՝ ամրան շոգերին և ձմրան ցրտերին, քաղաքը տեղափոխելով իր ապրանքը։ Նա անխտիր վաճառում էր և՝ հաւեր, և՝ ձուեր, և՝ օղի, և՝ քացախ, և՝ կաղամբ, և՝ մածուն, և՝ իւղ, և՝ ամենբան, ինչ որ մեր քաղաքում վաճառւում էր։ Առևտուրի հետ աճեց և Մարգարի քսակը։ Նրա փողը ասելիք դարձաւ ոչ թէ միայն մեր գիւղում, այլ նոյն իսկ մեր գաւառում։ Եւ հետզհետէ Փշտօենց Մարգարը դարձաւ Խօջա-Մարգար։ Սակայն ճակատագիրը շուտ իր դժգոյն երեսը երևան հանեց Խօջայ-Մարգարին. Նրա խեղճ կինը հիւանդացաւ։

Որքա՜ն Սահունին ճիգեր թափեց՝ համոզելու Խօջա-Մարգարին բժիշկ հրաւիրելու, անկարող եղաւ մի բան հասկացնել նրան։

Նա մնաց անսասան և անխորտակելի։

«Բժիշկս-մժիշկս ո՞վ է, պարոն վարժապետ, դրանք տուտուց մարդկանց բաներ են, որոնց օղիի տեղ՝ ջուր եմ տուել, թաղայ ձուի տեղ՝ հոտած, քացախի տեղ՝ թթուած ջուր. չէ, Մարգարը խաբուող պտուղ չէ. մենակ Լոզմանն էր բժիշկ, էն էլ եկաւ ու գնաց. հիմի բանն Աստուած։

Վերջապէս. նրա կնոջ դրութիւնը դարձաւ անյուսալի. մեր հարևանուհիները զգացին, որ նա մեռնում է, ուստի սկսեցին խումբ-խումբ այցելել նրան։ Այցելողների մէջ էր և այրի Ծովերը, որը մի կարմրաթշիկ և հաստափոր կին էր։ Հէնց որ սրան խօջա Մարգարը տեսաւ, միտքը փոխուեց և աչքը չէր թարթում նրանից։ Մի քանի օրից յետոյ թշուառ հիւանդը մեռաւ։ Հարևանուհիները խմբուեցին հանգուցեալին լուանալու, որից յետոյ քահանան կարգը կատարեց և հանգուցեալին եկեղեցի տարան, որ միւս օրը թաղեն։ Եկեղեցում բազմութիւնը հոգոց ասել տուեց Խօջա-Մարգարի համար և մխիթարեց ու ցրուեց։ Դուրս եկաւ և Ծովերը,

ՊՐԸ ՆՈՐ ԷՐ ԴՈՒՐՍ ԴԱԼԻՍ ՀԱՆԳՈՒՑԵԱԼԻ ՏԱՆԻՑ։ ՓՈՂՈՑՈՒՄ ՈՉ ՈՔ ՉԿԱՐ։

Խօջայ Մարգարն իր կողն ու կուշտը նայեց և մօտեցաւ Ծովերին։ Վերջինս մօտեցաւ և մխիթարանք տուեց։

—Տօ, հէր օրհնած, մխիթարանքս ո՞ւր է։ Աստուած քեզ խլեաց, քեզ. սրանից յետոյ դու իմն ես ու կաս,— նկատեց առանց կարմրելու նրան Մարգարը։

—Խօջայ Մարգար, էդ ի՞նչ խօսք է, ախր դեռ հանգուցեալին չ'են թաղել, եօթը չ'են կատարել։

—Էհ, Ծովեր, դրանք իրանց համար, ես ու դու իրար համար։

—Մեղայ Աստծու։

—Մեղայ Աստծու ամենայն ժամ, չէս ուզում միթամ թէ, հա։

—Ա՛խր...

—Էլ ի՞նչ ախր, գնանք ձեր տուն, հիմի, գիտեմ, տղաղ դեռ դաշտից չի վերադարձել, ես իմ նշանաբանը քեզ տամ, որ հաւատաս, որ խօջայ—Մարգարը երկաթը տաք—տաք կծեծի։

Նրանք ճանապարհ ընկան դէպի Ծովերենց տունը...

Մութն էր, երբ Մարգարը դուրս եկաւ Ծովերի մօտից։

Խոջայ—Մարգարը կնոջ թաղելուց ի՞նն օր յետոյ նորից պսակուեց և նրա կեանքը դարձեալ իր սովորական դերի մէջ մտաւ։

Մի երեկոյ, երբ Մարգարը քաղաքից տուն վերադարձաւ, Ծովերը խոժոռուած դէմքով նկատեց նրան։

—Ա՜յ, մարդ, ես իմ մեղքը իմ շլինքից հանում եմ. էլ յետոյ չասես թէ՝ խորթ մեր էր, տղայիս վրայ ուշադրութիւն չդարձրեց, դու ես էդ մէկը, էն էլ հիմիկուանից աչքը դուրս է ցցել....

—Ի՞նչ կայ, Ծովեր ջան։

—Էլ ինչ լինի. տղաք Վարդերի Թոռան համար դէլ է դուրս տալիս։

—Սադօս։

—Սպա ո՞վ։

—Ա՛խր, էդ ճրբ է պատահել։

—Իրան հարցրու։

—Ո՞ւր է։

—Էլի նրանց տան բոլորը մուրիկ—մուրիկ պոլթայ է տալիս։

—Տէր Աստուած։

—Հիմի դու գիտես, մարդ։

—Կնիկ, ասում են լաւ աղջիկ է։

—Լաւ է, համա ոչ թէ քո տղայի համար։

—Էլի ինչ կայ։

— Սահուսենց Վարազդատի հետն են։

—Էդ ոչինչ ուզելու եմ. լաւ հողեր ունին և Սանդուխտը միակ ժառանգն է։ Համա քանի էն քաֆտառը՝ Վարդերը սաղ է, պիտի տաղ անենք։

—Դու տաղ կանես, բայց տղաք՝ ոչ։

—Էն ժամանակ խօսք կառնեմ, նշան կ'դնեմ. դժուար բան է խօջայ—Մարգարի համար։

—Տեսնենք։

Ընդհատ—ընդհատ խեղդող հազը կրկնուեց մի քանի անգամ Դարբնենց բակում։ Վարդերը և Սանդուխտը մնացին զարմացած. հազն անծանօթ էր, այն էլ օրուայ այդ պահուն՝ վաղ առաւօտեան։

—Սանդուխտ ջան, թռի տես, էն ո՞վ է.—հրամայեց Թոռան Վարդերը։

Սանդուխտը ծտի արագութեամբ դուրս թռաւ և իսկոյն վերադարձաւ այլայլուած։ Մատաղահաս սրտերը յաճախ կանխապէս գուշակում են այն, որն օրհասական հետևանքներ է ունենում ապագայում իրանց համար։

Ի՞նչ պատահեց քեզ, աղջի։

—Խօջայ—Մարգարն է։

—Խօջայ Մարգարը։

—Այո։

—Ի՞նչ ունի մեզ հետ,—ասաց ու, իրան դրստելով դուրս գնաց Վարդերը։

—Ողորմի Աստուած, Վարդեր։

—Ողորմի ծնողացդ, խօջայ Մարգար, համեցէք ներքև։

—Շնորհակալ եմ, եկեղեցուց էի գալիս, այնտեղ չէիր, զարմացայ, ասի ինչ է պատահել էդ պառաւին. մէ գնամ տեսնեմ, ու եկայ. դէհ, ճանապահ ձեր դռնոցն է. ինձ համար մի դժուար բան չէր։

—Շնորհակալ եմ, Խօջայ—Մարգար։

Շնորհակալութեան բան չ'կայ. դաշներս անցել են, ժահ ու մեռնել կայ. մենք իրար ղադր կիմանանք, մենք իրար լեզու կ'հասկանանք։

—Հալբաթ որ, համեցէ՛ք ներքև։

Նրանք մտան ներքև։ Խօջայ—Մարգարը նստեց զմբիլի վրայ, Վարդերը նրանից փոքր ինչ հեռու։

—Հէյ գիտի ժամանակ, 15—16 տարի առաջ ով որ ձեր դռնոցն անցնում էր, անմահական հոտ էր առնում. լուսահոգի Սահրատ կենդանի էր, ամեն ինչ բոլ էր, իր տեղն ունէր, բայց քո քեռու բախտից մի գիշերուայ մէջ ամեն բան փոխուեց։ Դու էլ, հէր օրհնած, ինձանից հեռու ես միշտ մտն գալիս. դէհ, ինչ ամօթ բան է, ամենքս էլ քո խաւար օրը գիտենք. չէ՞, մեզ էլ հոգի է պէտք։ Մեզայ Աստուծոյ, մեզայ...

Վարդերի աչքերը լցուեցին արտասուքով. նա հաղիւ կարողացաւ մրմնջալ.

—Իմս էսպէս եղաւ, խօջայ—Մարգար։

—Նեղսրտելու իրաւունք չունենք, Վարդեր, Աստծոյ կամքն է. որ հոգ ու մոխիր դարձնի, ինչ կարող ենք անել։

—Երանի թէ հոգ ու մոխիր դարձնէր, իր ամաչաթին առնէր՝ էս անտէր աշխարհից պրծնէինք։

—Մեղք է, մեղք, Վարդեր, քեզանից անբախտներ էլ կան. դեռ դու տուն ունես, տեղ ունիս, արտ ու ափ ունես, էսպէս թառլան թոռ ունիս։

—Ինչիս են պէտք, երբ սիրտս խորովւում է օր ու գիշեր։

—Մի դարդ արա, էս օրուանից յետոյ, դու բանի նեղութիւն չես քաշի, Խոջայ-Մարգարը մեռած չէ, նա էլ հոգի ունի տալու, հողածին է։

Վարդերը ոչինչ չխօսեց։

Կէս ժամ այստեղ զրոյց անելուց յետոյ Խոջայ-Մարգարը վերադարձաւ տուն։ Այստեղ նա կանչեց իր գիտցած մարդկանցից մի երեքին, որոնց ներկայութեամբ իր ծառայի միջոցով ուղարկեց Վարդերին տասն երեք ռուբլի, ապա վեկսել գրել տուեց, որին և ստորագրեցին, այդ իր գիտցած երեք անձնաւորութիւնները, որ Վարդերը պարտ է վերցրել Խոջայ-Մարգարից 33 ռուբլի, այն էլ գիւղերին և Խոջա-Մարգարներին յատուկ %% ներով։

—Սանդուխտ, դուռը ծեծում են,—ձայն տուեց Վարդերը։

Սանդուխտը դուրս թռաւ ու շուտով վերադարձաւ։ Նրա ետևից դալիս էր Խոջայ-Մարգարենց ծառան։ Այս վերջինս յանձնեց Վարդերին մի շորի կտորի մէջ կապած այն 13 ռուբլին։

—Էս ինչ է,—հարցրեց Վարդերը։

—Չգիտեմ,—պատասխանեց ծառան և շտապով դուրս գնաց։

Վարդերը և Սանդուխտը հետաքրքրութեամբ լցուած բաց արեցին կապոցը ու մնացին ապշած։

—Էս ինչ նաղլ է,—ակամայ թռաւ Վարդերի շրթունքներից։

—Տատի, էդ նաղլ չէ, էստեղ մի խոշոր բան կայ. Խոջայ Մարգարից էսպիսի բան, օ, շատ հեռու է։

—Չէ, որդի, նոր եմ յիշում նրա խօսքերը. «էս օր-

ուանից յետոյ դու բանի կարօտութիւն չես քաշիլ. Խօջայ-Մարգարը մեռած չէ, նա էլ հոգի ունի, հոլածին էր։

—Մի հաւատա, տատի։

—Ի՞նչ կայ որ։

—Էն կայ, որ մեռած խղճմտանքը էսպէս անսպասելի կերպով չէր կարող զարթել. չէ՞ որ մենք մի 15 տարի սրանից առաջ աւելի վատթար դրութեան մէջ ենք եղել. ի՞նչու այդքան ժամանակուայ ընթացքում նա իր հոգին միտը չի գցել. հիմի ինչ պատահեց։

—Մենք հօ նրա գլխի տէրը չենք եղել. է՛ն ժամանակ չի գցել, հիմի է գցում։

—Տատի, իզուր ես էդպէս կարծում. նա դրանով քո և իմ լեզուն է ուզում կարճացնել իր առաջը. նա ուրիշ բան է մտածում։

—Ես բան չեմ հասկանում։

—Իսկ ես հասկանում եմ։ Մամոնային իրանց հոգին, ուշք ու միտքը, պատիւ ու խղճմտանքը վաճառող մարդիկ ապարդիւն տեղ իրանց կոպէկը էստեղ-էնտեղ շաղ չեն տալիս, նրանց համար բարեգործութիւն չ'կայ։ Չէ, տատի, դու մառախլապատ երկնքից արև ես ուզում. էդ դժուարին գործ է։

—Բա ինչ անենք։

—Մի վերցրու, կամ յայտնիր այդ մասին Սահունունուն։

—Հա, էդ լաւ ասիր։

—Որ լաւ ասացի, տատի, դէհ էնպէս էլ արա։

—Կանեմ, էսօր կտեսնեմ Սահունունուն։

Երեկոյեան եկեղեցու զանգակները իրանց հենց առաջին ձայնի հետ դուրս բերեցին Վարդերին իրանց տանից։ Նա շտապեցրեց իր քայլերը-դէպի եկեղեցին, հաստատ իմանալով, որ Սահունին ամեն օր ներկայ է լինում եկեղեցու ժամերգութեանը։

Եկեղեցուց դուրս գալուց յետոյ, Վարդերը և

Սահունին երկար, երկար առանձնացած փսփսում էին։ Վերջապէս, նրանք ուղեւորուեցին Վարդերենց տունը։ Սահունին իր աչքերին չէր հաւատում. տասն և երեք ռուբլի ըարեգործութիւն, այն էլ Խոջայ-Մարգարի կողմից. դա մի խորհրդաւոր առեղծուած էր, որ նա ձգտում էր լուծել։

—Վարդեր, էստեղ մի դաղտնիք կայ։ Ես այս գումարը վաղը կտանեմ հենց այս շորով մեր առաջնորդարանը և ցոյց կտամ եպիսկոպոսին։

—Ախր, գուցէ, մարդը ուղիղ սրտով է տուել։

—Ո՛չ, Վարդեր, մի հաւատա, եթէ ես չեմ սխալւում, նա այս գումարով ուզում է ձեզ իր ծուղակը գցել, նա ուզում է ձեզ որսալ, նա անշուշտ մի ծրագիր ունի իրագործելու։ Ասում ես, էս առաջի անգամն է, չէ՞։

—Այո՛, առաջի անգամն էր, որ իմ շէմքը ճանաչեց և էս անտէրը ուղարկեց. մի քանի անգամ էլ նրա որդուն Սագոյին եմ մեր փողոցում տեսել, էն էլ վերջերին։ Սագոյի անունը ասես մի բան պարզեց Սահունու համար. նա լռեց, նա տակաւ առ տակաւ սկսեց քննադատել Վարազդատի յաճախակի այցելութիւնները Վարդերենց տունը, նրա ընդհարումը Սագոյի հետ, կռիւը և մասամբ գլխի ընկաւ՝ թէ ինչ է ուզում անել Խոջայ-Մարգարը։ Նա հասկացաւ, որ Խոջայ-Մարգարը ուզում է ուզել Սանդուխտին և փող է տալիս այժմեանից, որ հակառակ դէպքում, պնդել կարողանայ, որ իր գումարը վերադարձնեն իրան, այն էլ ով գիտէ, որքան է գրել 13 ռուբլու փոխարէն 113 գրած լինի, և ով գիտէ ինչ։ Նա տեսաւ, որ Սագոն անշուշտ սիրահարուած է Սանդուխտի վրայ. հաւանական է, որ Վարազդատն էլ անտարբեր չէ դէպի նա, որից և առաջ է եկել նրանց կռիւը։ Նա ցաւեց իր հոգու ամբողջ էութեամբ, որ իր գթասրտութիւնը այժմ ինչով է փոխարինւում, նա տեսնում էր եկեղեցու օրէնքի խախտումը այն դէպքում,

եթէ իրօք Վարազդատն էլ անտարբեր չէ։ Չէ որ նա որդեգրել էր Սանդուխտին։ Սակայն եղածը եղած է։ Նա դուրս եկաւ Վարդերենց տանից։ Միւս օր նա տեսնուեց առաջնորդի հետ և երկար խօսեց ու վճռեցին լռել։

Ապա սկսեց հետևել Վարազդատին ու Սագօին։ Դուրս եկաւ, որ իր ենթադրութիւնները սրանց վերաբերեալ ճիշտ են եղել։

Այդ ժամանակներում դրանց հարևան երկրում օրհասական փոթորիկները ահեղ մռնչիւններ էին արձակում, և տանջուողը, տուժողը, արհամարհուողը, անարգուողը միշտ թոյլն էր լինում, որ օրերով, ժամերով լողում էր իր սեփական արեան մէջ։ Սահուն-նին վճռեց մի կերպ անցնել այնտեղ, ուր թերևս գտնէր Սահրատին, եթէ իրօք իր ենթադրութիւնը ճիշտ լինէր, և նա դեռ կենդանի լինէր, և այն էլ այնտեղ։

Իսկ եթէ այստեղ չ'գտնէր նրան, կ'նշանակէր, որ նա մեռած կամ սպանուած է, որից յետոյ պէտք է վերադառնար ու իր դիտցածը իրագործէր Սանդուխտի վերաբերեալ։ Նա չէր ուզում իր բարեգործութեամբ գնած լինել նրան։

ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱՏԷ

(Կշարունակուի)

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ

(Ս. Քամալեանի երկու գրքոյկների առիթով)

Մեր արիւնալից օրերում գրականական գրոյցները հազիւ թէ ուշագրաւ լինեն։ Վաղուայ գալիքը դեռ յայտնի չէ և բոլոր նշանները հայութեան համար լուրջ վտանգի ահռելի գուշակութիւններ են բերում։ Մի խաղաղ ժողովուրդ, որ դարերի ընթացքում ձգտել է աշխարհաշինութեան և քաղաքակրթութեան տենչանքներով ու իդէալներով է ապրել, այսօր էլ քսաներորդ դարում, չի կարողանում ստանալ մարդկային ամենատարրական իրաւունքներ։ Հայը հազարաւոր տարիներ կռուել է շրջապատող խաւարի և մոլեգին վայրագութիւնների դէմ և այսօր էլ ոչ մի երկրում գլուխ դնելու տեղ չունի։ Ճակատագրական է հայի ողբերգական պատմութիւնը և իզուր կլինի ու անարդարացի հայի վիճակը մեկնել նրանով թէ հայը իւր արատների շնորհիւ արժանի է իւր ճակատագրին, որպէս ձգտում են ապացուցանելու մեր հարևան վրացիների իշխանները ու շովինիստ ազատամիտները, որոնք պատմութիւնը մոռացել են և իրենց գլուխը գալիք օրերը նախատեսել չեն կարողանում։ Իսկապէս ասած հայ ժողովուրդը խմբովին ապստամբական շարժումներ չէ ստեղծել ոչ միայն Կովկասում, այլ և Թիւրքիայում դարերի ընթացքում։ Հայի բոլոր մեղքը կայանում է նրանում, որ նա քաղաքակրթութեան ձգտում ունի և անսպառ հոանդով ձգտում է ազատութեան, բայց ոչ անկախութեան։ Հային շատ քիչ են ճանաչում ոչ միայն դրացիները, այլ և տիրապետող ազգերը, մինչև այսօր ոչ մի օտար հրապարակախօս չէ նկատել այն նշանաւոր երևոյթը, որ հայը ստրկութիւն չէ ճանաչել իւր պատմական կեանքում և որ այսօր էլ նոյն իսկ մուրացկան հայ մարդը աղջիկ չէ տալիս ծառայելու ուրիշի տուն, որ հայ աղախին դասակարգ դեռ այսօր էլ չէ ստեղծուել։ Հայը այն բացառիկ ժողովուրդներից է, որի համար անհատական ազատութեան գաղափարը պաշտամունք

է եղել։ Քաղաքակրթութեան և անհատական ազատութեան սէրը հային առաջին քրիստոնեայ ազգը դարձրեց։

Քրիստոնէութեան շրջանից սկսուեցին հայ պատմութեան ողբերգական էջերը։ Հինգերորդ դարուց սկսած մինչև ռուսների Կովկաս գալը հայը երազում էր քրիստոնեայ տէրութեան հպատակ դառնալ, որովհետև անկախութեան հնարաւորութիւն չէր տեսնում։ Բայց սակայն միշտ ձգտում էր անհատական և ազգային առանձնայատկութիւնների անկախութիւն ունենալու։ Ահա հայի այս ազատասիրական իդէալների մէջ պէտք է որոնել թէ հայի տառապանքների գլխաւոր պատճառներից մէկը և թէ օտարների ատելութեան շարժառիթներից ամենազօրեղը։

Մի ազգ, որ հազարաւոր տարիներ հպատակ է եղել օտարի լուծի, բայց ոչ միայն պահել է ազգութիւնը, այլ և ամենածանր բոպէներում գիր ու գրականութիւն է ստեղծել, այդ ազգը պէտք է որ կենսունակութեան մեծ պաշար և դիմադրութեան ահագին ոյժ ունենար. և ամեն անգամ, երբոր բռնութիւնը իւր ճիրանները մեկնել է հայի անհատական ազատութեան, նրա ընտանիքի կամ եկեղեցու դէմ, հայը յուսահատական հերոսութեամբ է կռուել իւր գոյութեան համար։ Հայը շատ քիչ է ապստամբուել, բայց շատ յաճախ է բողոքել, յաղթութիւններ սակաւ է ունեցել, բայց հերոսները այս ազգի մէջ անպակաս են եղել։ Հայը թոյլ է իբրև ամբողջութիւն և զօրեղ է իբրև անհատ։ Պ. Քամալեանի վերոյիշեալ երկու գրքոյկները, որոց նիւթը առնուած է հանգուցեալ Աբովեանի «Վէրք Հայաստանի» և Ծերենցի «Երկունք» երկերից, այնպիսի պատմական ժամանակամիջոց են պատկերացնում, երբ հայի վերոյիշեալ պատմական յատկանիշները շատ վառ գոյներով են երևան գալիս, իսկ միւս կողմից ապացոյց են, որ մեր կեանքում պատմութիւնը զարմանալի կերպով կրկնւում է։

Հայը մի կախարդական շրջանակի մէջ է ընկել շատ վաղուց, որը նրան պատել է խաւարի և բռնութեան օղակով, բայց չի կարողացել մեռցնել իսպառ հայի հոգեկան կորովը և յառաջադիմութեան ձգտումները։ Նոյն իսկ Անդրկովկասի նրա հարևանները, որ անարդար կերպով ատում են մեզ և որոնք թէ թուով և թէ հարստութեամբ անհամեմատ հայից բարձր, չեն կարող ոչ իրենց նորագոյն գրականութեամբ և ոչ իրենց կրթական և հասարակական հիմնարկութիւններով համեմատուիլ հայի հետ։ Մի դարուց աւելի չէ, որ հայերը այստեղ հիմնել

են վեց սեմինարիաներ և միլլիոններ են ծախսել մատաղ սերնդի կրթութեան վրայ, հիմնել են բազմաթիւ ժողովրդական դպրոցներ, թատրոն և գրադարաններ, որ ոչ վրացին և ոչ թուրքը չէ կարողացել անելու, թէև մեր երկրի հողային հարստութիւնը և մեծաքանակ խաշնարածութիւնը թուրք բէգերի ու վրացի իշխանների և առհասարակ մեր հարևանների ձեռքին է։ Բայց սակայն քանի հային ճնշել են, այնքան զօրեղացել է նրա տոկունութիւնը և բռնակալների զարհուրելի աւերմունքների ժամանակ էլ՝ հայ վարդապետը մի վանքի մթին խուցի մէջ կանթեղի աղօտ լուսի տակ գրել է ժամանակի պատմութիւնը կամ յօրինել է սրտաբուխ շարականներ ու մեղեդիներ։ Այսօր էլ Երմոյաները քանդում են մեր գիւղերը, բռնաբարում են կանանց ու աղջիկներին, իսկ հայ վարժապետը էլի չի յուսահատւում և մատաղ սերնդի համար ընթերցանութեան գրքեր է գրում։ Այսքան զօրեղ է հայի կենսունակութիւնը և հաւատը լաւագոյն ապագայի համար։ Մենք արդէն առիթ ենք ունեցել յիշելու, որ հայը այնքան էլ անզօր չէ եղել իւր պատմական անցեալում, որքան կարծում են մեզ չճանաչող տիրապետողները և շատ թեթև կերպով բաւական է աչքի տակով անցնելու հայոց պատմութիւնը համոզուելու համար, որ հայի ինքնուրոյնութեան ոգին խիստ յուսահատական է։ Եթէ և ճիշտ է, որ հայը հազիւ թէ անկախ տէրութիւն ստեղծելու հնարաւորութիւն ունի, բայց նոյնպէս հաստատ է, որ հայ ժողովուրդը շատ զօրեղ դաշնակից է և վտանգաւոր թշնամի։ Մօտակայ արևելքում կատարուած ամեն ժամանակների պատմական անցքերում հայը միշտ նշանաւոր դերակատար է եղել։ Պարթևների, Պարսից, Բիզանդացոց, Արաբների, Տաճիկների և Ռուսների արշաւանքների պատմութիւնը սրան ապացոյց է։ Եւ այս այս բոլոր տիրապետողները վկայ են եղել հայի քաղաքակրթութեան անհուն սիրոյն և խաղաղասիրութեան, իսկ միւս կողմից հայի խիզախ և յուսահատական դիմադրութեան, երբ որ մեր երկիրը տիրապետողները ձեռնամուխ են եղել դիպչելու հայի ազգային սրբութիւններին։ Սարգիս Քամալեանը գրականական լեզուով պատմել է Ծերենցի «Երկունք» վէպի և Աբովեանի «Վէրք Հայաստանի» երկի համառօտ բովանդակութիւնները, որոնց նիւթը առնուած է այնպիսի պատմական մօմէնտներից, երբ հայ ժողովրդի վերոյիշեալ պատմական և հոգեկան առանձնայատկութիւնները մարմնացան ժողովրդական հերոսների, Սասունցի Յովնանի և Քանաքռցի Աղասիի մէջ։ «Եր-

կունքի» նիւթը առնուած է իններորդ դարու արաբների տիրապետութեան ժամանակների պատմութիւնից, երբոր հայոց Բագարատ Պատրիկը միացաւ Պարսից Բաբա իշխանի հետ ընդդէմ արաբացոց և այս պատճառով Հայաստան ուղարկուեց ամիրապետի կողմից մի խստասիրտ զօրավար Բուղա անունով, որ պարսից հետ միանալու համար աւերեց Հայոց երկիրը, բոլոր գաւառները ասպատակներ սփռեց (Озѣровскій, Ермолаевъ և tutti quanti), քաղաքների և գիւղերի բնակիչներին անխնայ կոտորեց, անհամար գերիներ բռնեց, որոնց մեծ մասը տանջանքների մէջ նահատակուեցան։ Եւ այս բանի մէջ, ասում են պատմագիրները, անօրէն ոստիկանին օգնական ու գործակից եղաւ Սմբատ Բագրատունին, որ կարծում էր թէ այսպիսով նորա բարկութիւնից կազատուի, բայց Բուղան միւս նախարարների հետ Սմբատին էլ խաբէութեամբ տարաւ Բաղդադ (Հայոց աղգասիրութեան ներկայ փոդրադէչիներն էլ կարծում էին թէ Դաշնակցութեան մասին ճառեր ասելով, Փոխարքայի մօտ ճաշելով և Շիրինկինի հետ մտերմանալով Ղարաբաղի կանայք չպիտի բռնաբարուին)։

Ահա այս ժամանակ է դուրս գալիս Յովնան Սասունցին և հայ ժողովրդին հասցրած ոճրագործութիւնների դէմ ժողովրդական բողոք ստեղծում և սարսափելի հարուածներ է հասցնում արաբական զանազան բանակներին։

Ժողովրդական է հայ եկեղեցին և ժողովրդական է հայի վրէժխնդրութեան ոգին։ Յովնան Սասունցին բաղմաթիւ անգամ է երևան եկել հայի ժողովրդի մէջ, չնայելով որ այդ ժողովրդի մէջ միշտ անպակաս են եղել և Մեհրուժաններ և վատեր։ Ծերենցի պատմական այս շրջանից առած վէպի բովանդակութիւնն է Քամալեանի առաջին գրքի շարժառիթը։ Հեղինակը մի կարճ առաջաբանում պարզում է թէ ինչու է նա այս գիրքը գրել։ Այս շարժառիթը հասկանալի է, այսինքն հեղինակը կամենում է ժողովրդականացնել Յովնանի պատմութիւնը կամ այն բոլորը, ինչ որ ես վերև պատմել եմ։ Երկրորդ գրքի նիւթը ռուս պարսկական պատերազմից (1827—1828 թ). քիչ առաջ կատարուած անցքերի և հայութեան դէմ եղած զրկանքների ժամանակ տեղի ունեցած բողոքների արդասիքն է։ Այս ժամանակ էլ Հասան խանի «ստրաժնիկները» գալիս են Քանաքեռ գիւղը և մի սիրուն աղջիկ են կամենում բռնութեամբ տանել խանի հարեմը, որի դէմ զինուի ուժով բողոքում է հայ ժողովրդի դիմադրող ոգին

դէմս հերոս Աղասիի։ Աբովեանցը այս անցքերը պատմել է իւր «Վէրք Հայաստանի» անզուգական բոմանտիկ երկի մէջ, իսկ Քամալեանցը կրճատած պատմում է այս բոլորը գրականական լեզուով։

Այժմ գրականական քննադատութեամբ զբաղուելու ժամանակը չէ և այս երկի բովանդակութեան համառօտ պատմելն էլ շատ հեռու կտանէր մեզ, որովհետև մենք մտադիր չենք այս անգամ բէցենցիա գրելու։ Մի հարց միայն կարող է ուշադրութեան արժանի լինել, այսինքն թէ որքան կարևոր են այսպիսի փոխադրութիւններ և ինչ պատճառներով։ Շատ հին ճշմարտութիւն է, որ մեր ժողովրդի ինտէլլիգենտ դասակարգը և քիչ թէ շատ հարուստ վաճառականը, բուրժուան, հայերէն չի կարդում։ Ասոքս իհարկէ լրագիրների մասին չէ, թէև կարդացուում են, բայց նոյնպէս չնչին քանակով։ Քանի որ մեր կեղծաւոր ինտէլլիգենցիան աւելի սիրում է հրապարակական ազգասիրութեամբ պարապել, քան թէ իրօք ուսումնասիրել իւր հայրենիքն ու ժողովուրդը, պատմութիւնն ու լեզուն, քանի որ նոյն իսկ իւր ընտանիքում հայ ինտէլլիգենտը մայրենի լեզուով խօսել չի սովորել, ուրեմն շատ պարզ է, որ նա և գլուխ չունի մեծահատոր վէպերի և գրական վաստակների վրայ տքնելու։

Փոքր բրոշիւրները գրականական սահուն լեզուով գրած մեծ ծառայութիւն կարող են մատուցանել մայրենի պատմութեան և գրականութեան ժողովրդականացման գործին և այս տեսակէտից Քամալեանի ձեռնարկած գործը արժանի է ամենայն խրախուսանքի։ Այս տեսակ աշխատութիւնները շատ պէտքական են և դպրոցական հասակի մանուկների և նոյն իսկ երիտասարդների համար, որոնք նոյնպէս հնարաւորութիւն չունին շատ անգամ ձեռք բերելու մեր հեղինակների թանկագին գործերը։

Եւրոպայում և նոյն իսկ Ռուսաստանում կլասիք հեղինակների գրուածների ժողովրդական հրատարակութիւնները և փոխադրութիւնները շատ մեծ ծառայութիւն են մատուցանում երկրի լուսաւորութեան գործին և պէտք է ամեն կերպ նպաստել, որ մեզանում էլ մեծ ծաւալով տարածուեն այս տեսակ հրատարակութիւնները։ Շատ լաւ կլինէր, եթէ մեր պատմագիրների երկերը և Սլիշանի մեծահատոր աշխատութիւնների պատշաճաւոր և կարևոր կտորները հրատարակուէին աշխարհաբար լեզուով։

Գալով պ. Քամալեանի հրատարակած գրքոյկներին՝ պէտք է նկատեմ, որ լեզուն առհասարակ շատ կոկ է և կանոնաւոր, բայց այս աշխատութիւնների մէջ, որպէս և նրա նախկին մի քանի գրուածներում, տեխնիկա կամ արուեստ չկայ, Քամալեանը աւելի հարազատ փոխադրող և ժողովրդական բանահիւսութեան հաւատարիմ միջնորդ է ընթերցողի համար քան վերաստեղծող։ Սակայն պ. Քամալեանը ունի առանձին հրատարակած և շատ գեղեցիկ առակներ «Արձագանքում», ունի «Ծովինար» և «Աստուած աղքատի կերպում» պատմութիւնները, ուստի և նա արժանի է այս ասպարիզում ամենայն համակրութեան և աջակցութեան։

Դ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ԵՐԳ ԵՍ ԽՆԴՐՈՒՄ

Երգ ես խնդրում դու ինձանից,
Տանջուա՜ծ ընկեր սրտաբեկ.
Երգ ես խնդրում ծնուած յոյսից,
Այրուած սրտից ուրախ երգ...

Ախ, ինչ երգեմ... ինչպէս երգեմ
Ես քեզ համար ազա՜տ յոյս...
Երբ որ կեանքն է մաշում սրտեր
Եւ հանգցնում վերջին յոյս...

Երկար կեանքը ինչ էլ անենք
Նա իր ճամբով կընթանայ.
Ա՜խ, ի՞նչ անենք թող տրորուենք
Մեր յոյսերով անխնայ...

Մեր արցունքն էլ մեծ ծով դարձաւ
Գոյք չշարժեց ժայռերի.
Մեր սրտերն էլ փշրուեցաւ,
Մէջը վշտի ծովերի...

Երգ ես խնդրում դու ինձանից.
Բայց ի՞նչ երգեմ յուսաշունչ.
Երբոր կեանքն է արիւնալից.
Հոգիս արիւն լուռ ու մունջ...

Յ. ԽԱՆԼԱՐԵԱՆ

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԷԼՍ [1]

Կարլ Կաուցկու

Մենք ներկայումս գիտենք, որ Մարկսը և Էնգելսը իրաւացի էին, բայց ոչ-բոլորի համար ախորժելի է դառն ճշմարտութիւնը։ Այն բոլոր անհատները, որոնք կարծում էին, թէ յեղափոխութեան համար ոչինչ հարկաւոր չէ, բացի բարի կամքից, նրանք՝ բոլորը, որոնք կարծում էին, թէ յեղափոխութիւն կարելի է ստեղծել ցանկութեամբ,—մի խօսքով, Անգլիայում ապրող նժդեհների մեծամասնութիւնը կանգնեցին Մարկսի և Էնգելսի դէմ։ «Նոր Ռէյնեան լրագիրը» կորցրեց իր ընթերցողներին և դադարեց հրատարակելուց։ Համայնականների ընկերութեան մէջ ծագեց աղանդաւորութիւն։ Գերմանիայում նրա աւելի ժրաջան անդամները բանտ նետուեցին՝ միևնոյն ժամանակ կորցնելով շուտափոյթ ապստամբութեան յոյսը սոցիալիստական պրոպագանդան (քարոզչութիւնը) մի ժամանակ հաւասարուեց զերոյի։

Այդպիսով, քաղաքական գործունէութեան մասին նրանք չէին կարող հաշուի առնել։ 1850 թուականից նրանք երկուսը զրկուած էին Գերմանիայում գրականութեամբ պարապելու հնարաւորութիւնից։ Ո՛չ մի հրատարակիչ չէր ընդունի նրանց աշխատութիւնների հրատարակութիւնը, ոչ մի լրագիր չէր ընդունի նրանց յօդուածները։ Այդ ժամանակ Մարկսը բոլորովին խորասուզուեց տնտեսա—պատմական աշխատութիւնների մէջ և միևնոյն ժամանակ գրեց հատուածներ «—New-lork Tribune»։ Էնգելսը գնաց 1850 թուին Մանչեստր և նորից ընդունուեց իր հօր գործարանը գործակատարի պաշտօնով. 1864 թուին նա անդամ դարձաւ նախաձեռնութեան, 1869 թուին նա բոլորովին հրաժարուեց առևտրական գործունէութիւնից։

Քսան տարի Մարկսը և Էնգելսը ապրեցին օտարութեան մէջ երբեմնապէս այցելելով իրար։ Բայց և այդ ժամանակ

---

[1]) Լուսայ 1906, № 2.

նրանց մէջ գոյութիւն ունէր հոգեկան յարաբերութիւնը։ Նրանք համարեա միշտ նամակներ էին գրում իրար, որոնց մէջ նրանք փոխանակում էին իրանց հայեացքներով քաղաքական, տնտեսական, և գիտական աշխարհի երևոյթների վերաբերմամբ։

Մանչեստրում Էնգելսը չը թողեց գիտական պարապմունքները։ Ամենից առաջ նա ուսումնասիրեց ռազմական գիտութիւնները, որոնց շատ կարևոր էր համարում։ Բացի դրանից, նա սովորեց բնական գիտութիւնները և համեմատական լեզուաբանութիւնը, որը իր սիրած գիտութիւնն էր։ Ֆրանս—պրուսական պատերազմի ընթացքում [22]) նա գրեց մի շարք քննադատական յօդուածներ պատերազմի վերաբերմամբ Լօնդօնի «Pall Mall Cazette» ում, և ի միջի այլոց օգոստոսի 25-ին նախագուշակեց, որ Սեդանի կռուում Ֆրանսիական բանակը կը ջախջախուի։

Եթէ առաջ էլ տեղի ունէր աշխատանքի բաժանումն Մարկսի և Էնգելսի մէջ, հիմայ՝ Էնգելսի Լօնդօն տեղափոխուելուց յետոյ (1870 թ) աշխատանքի այդ բաժանումը հաստատուեց վերջնականապէս, Մարկսը շարունակեց սիստեմատիքաբար իր նոր թէօրիայի մշակումը, իսկ Էնգելսը աշխատում էր մի կողմից պաշտպանել դա հակառակորդների յարձակումներից, իսկ միւս կողմից—հետապնդում էր բոլոր ժամանակակից հարցերը այդ սկզբունքների տեսակէտից։ Ի հարկէ, նրանք մանրակրկիտօրէն չէին առաջացրել աշխատանքի բաժանումը, շատ յաճախ նրանք աշխատում էին միասին, մշտապէս փոխանակուելով իրանց հայացքներով։ Աշխատանքի այս բաժանումը հանդէս է գալիս գլխաւորապէս որպէս հետևանք այն բանի, որ մինչդեռ Մարկսի աշխատութիւնների հետևանքները կենդրոնացած են «կապիտալի» շուրջը, Էնգելսի հետազօտութիւնների արդիւնքները ցրուած են բազմաթիւ փոքր գրքոյկների մէջ։ Այդ գրքոյկները գրուած են օրուայ չարիքների մասին, բայց դրանք ամենօրեայ ճանճեր չեն—դրանք դեռ ունեն մեզ համար շատ մեծ նշանակութիւն, որովհետև ամեն անդամ տալիս են իրերի պատմական դրութեան խիստ բնորոշումը և եզրափակումներ են անում ամենահիմնական սկզբունքային նախաբաններից։ Նոյն իսկ ներկայումս ստիպուած ենք յաճախ հաշուի առնել նմանօրինակ պատմական դրութիւնները, որոնք ի տես էին առնուած Էնգելսի գրքոյկներում։ Միևնոյնը կարելի է ասել նրա քաղաքական գրքոյկների մասին, որովհետև դրանց մէջ

---

[22]) 1870—1871.

Նա յաճախ մշակում է իր թէորիայի զանազան կողմերը։ Ուսաի դրանք չեն հնացել մինչև իսկ հիմայ, որի մասին փառաւորապէս կարելի է դատել այն բանի շնորհիւ, որ ներկայումս էլ այդ գրքոյկները նորից հրատարակւում են։ Այդ գրքոյկների թուին է պատկանում նրա բնակարանային հարցի մասին գրքոյկը, որը լոյս տեսաւ 1872 թուին, «Սոցիալական կեանքը Ռուսիայում» և մի քանի այլ գրքոյկներ։

1877 թուին Էնգէլսը հրատարակեց իր բանակռիւը Դիւրինգի հետ։ Սա մի տարի առաջ էր նրանից, երբ Բիսմարկը (գերմ. պետական յայտնի գործիչ) ռեյխստագում [23]) անցկացրեց սոցիալիստներին ընդդէմ օրէնքը։ Գերմանական սոցիալ-դէմօկրատիայի մի քանի ներկայացուցիչները շատ յանդուգն ցնորքներով էին թռչում։ Նրանց թւում էր, որ մօտ է այն օրը, երբ սոցիալ-դեմօկրատական ֆրակցիան [24]) մեծամասնութիւնը կազմելով գերմանական ռայխստագում՝ կսկսի քննել «սոցիալիստական պետութեան» ներմուծման հարցը։ Սոցիալ դէմօկրատները մտածելով գլուխ էին ջարդում, թէ ինչպէս անեն, որ այդ փոփոխումը լինի հասարակ և անզգալի։ Սոցիալ-դէմօկրատիան «ծագող արեգակն» էր, և նրան միացան ոչ միայն պրոլէտարիատը, այլ և բազմաթիւ դժգոհ տարրեր, չընդունուած հանճարները, բուրժուազիայի կողմից տապալուածներ, որոնք յոյս ունէին խնամակալութիւն գտնել պրոլէտարիատի մօտ. դրանք էին օրինակ՝ ծաղկի կտրիչու հակառակորդները, ամեն տեսակ մանր գրագէտներ և այլն։ Դրանց շատ դժուար էր զանազանել բուրժուազիայի այն տարրերից, որոնք միացան սոցիալ-դէմօկրատիային՝ իրապէս համակրելով սոցիալ դէմօկրատիային։ Այն անհատները, որոնք համախմբուում էին սոցիալ-դէմօկրատիայի շուրջը զուտ անձնական նիւթական շահերի տեսակէտից, հանդիպում էին իրանց նոր ընկերներին գրկաբաց։ Բայց կուսակցութիւնը շատ էլ չէր շահում իր այդ համախոհներից։

Սոցիալ դէմօկրատիայի այդ համախոհների թւում կային շատ պրոֆէսորներ և բարձրագոյն կրթութեան տէր մարդիկ, բայց այդ պարոնները ոչ մի դիտաւորութիւն չունէին վերջնականապէս զատուելու բուրժուազիայից։ Նրանք ցանկանում էին սոցիալ-դէմօկրատիայի միջնորդութեամբ որոշ դեր խաղալ և այդպիսով հրաւիրել իր վրայ բուրժուազիայի ուշա-

---

[23]) Օրէնսդիր բարձրագոյն մարմին Գերմանիայում։ [24]) Նրա մի ճիւղաւորումը։

դրութիւնը։ Այդ պատճառով նրանք ցանկանում էին գիտական սոցիալիզմը դարձնել սալոնային [25]) գիտութիւն, նրանք ուզում էին սոցիալ-դէմոկրատիան զրկել իր պրոլէտարական գունաւորումից։

Եւ ահա այդ պարոնների մուտքը սոցիալ-դէմոկրատիայի բանակը պէտք է արգելուէր։ Այդ ամենայայտնի սալոնային սոցիալիստներից էր, անկասկած, Բերլինի պրիւատ-դոցէնտ [26]) Է. Դիւրինգ, մի մարդ, որ ունէր խոշոր մտաւոր ընդունակութիւններ, բայց և որը տանջւում էր վեհութեան մոլեգնութեամբ։ Նրա հանճարեղութիւնը, ինչպէս ինքն էր կարծում, զրկում էր նրան այն առարկաների հիմնական ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնից, որոնց մասին նա գրում էր և խօսում։ Նա այն շահամոլներից չէր, ինչպէս Շէֆֆլէ, և Բերլինում սկսեց խիստ ազդեցութիւն ունենալ սոցիալ դէմոկրատական կուսակցութեան աւելի երիտասարդ տարրերի վրայ։ Նրան չէր կարելի անուանել չնչին հակառակորդ, և կուսակցութեան անդամները խնդրեցին Էնգելսին դուրս գալ Դիւրինգի դէմ և մատնանիշ անել մի կողմից նրա փիլիսոփայութեան ամբողջ դատարկութիւնը, իսկ միւս կողմից—շեշտել սոցիալ-դէմոկրատիայի իրական պրոլէտարական հայեցակէտը։

Այդպիսով ծագեց Էնգելսի գիրքը «Յեղաշրջում կատարուած գիտութեան մէջ պ. Եւգենիյ Դիւրինգի կողմից»։ Մի քիչ յետոյ դա՝ բացառութեամբ մի քանի բանակուային տեղերից՝ լոյս տեսաւ առանձին գրքով՝ «Գիտական սոցիալիզմի աճումը» վերնագրով։ Այն պատճառը, որ հարկադրեց Էնգելսին գրելու այդ գիրքը Դիւրինգի դէմ, վաղուց արդէն մոռացուած է։ Սոցիալ դէմոկրատիան մոռացել է և՛ Դիւրինգին և սոցիալիզմի այն պոչերը, որոնցից սոցիալ-դէմոկրատիան ձեռք քաշեց՝ սոցիալիստների դէմ եղած օրէնքի հրատարակութիւնից յետոյ։ Այդ օրէնքը ունէր և իր լաւ կողմը, այն է նա ցոյց տուեց կուսակցութեան, թէ որտեղ պէտք է որոնել յուսալի ընկերներ։ Բայց չընայելով իրերի փոփոխուած դրութեանը, Էնգելսի գիրքը չէ հնացել և մինչև հիմայ։ Դիւրինգը վերին աստիճանի բազմակողմանի մարդ էր—նա գրում էր մատեմա-

---

[25]) Գիտութիւն, որ կամփոփուէր ցուցահանդէսների դահլիճներում միայն։ [26]) Համալսարանի աստիճան. պրոֆէսորական պօրտֆէյլի նախադասը։

տիկայի, մեխանիկայի մասին, փիլիսոփայութեան և քաղաքական տնտեսութեան մասին, օրէնսդրութեան և նախնական պատմութեան մասին և այլն։ Այդ բոլոր ասպարէզներում Էնգելսը յաղթում էր Դիւրինգին, որովհետև՝ ունենալով Դիւրինգի բազմակողմանիութիւնը՝ նա զանազանւում էր նրանից այն բանով, որ գիտէր այդ առարկաները հիմնականօրէն։ Գիտելիքների այդպիսի խորութիւն ներկայումս կարելի է տեսնել միայն միակողմանի կրթուած մասնագէտ—գիտնականի մօտ։ Իր թռիչքային և մակերևոյթային դրութեամբ ժամանակակից գիտութիւնը շատ նման է արդիւնաբերութեան ժամանակակից ձևին—ներկայի գիտութեան և արդիւնաբերութեան պտուղները էժան են եւ վատ։ Բայց դա չի նշանակում, թէ վատ պտուղների համար, եթէ դրանք մանաւանդ մօտային են ներկայումս, չեն վճարւում ահագին գներ։

Դիւրինգի մակերևոյթային բազմակողմանիութեան յայտնուելուն մենք պարտական ենք Էնգելսի գրքի լոյս աշխարհ գալուն, որի մէջ ժամանակակից գիտութեան ընդհանուր հարցերը քննուած են պատմութեան ըմբռնման նիւթապաշտական տեսակէտից։ Մարկսի «կապիտալի» հետ միասին այս գիրքը հանդիսանում է որպէս ամենանշանաւոր աշխատութիւն ժամանակակից գիտական սոցիալիզմի թէօրիայի վերաբերմամբ։

Կրկին վերադառնանք Էնգելսի իրական գործունէութեանը։

Ինչպէս թւում էր, հանդարտուած Եւրոպայի ցամաքի վրայ բանուորական շարժումը 1848 և 1849 թուի դէպքերից յետոյ սկսում է տաքանալ ոչ միայն Գերմանիայում, այլ և Ֆրանսիայում, Բէլգիայում, Անգլիայում և մինչև անգամ Իսպանիայում և Իտալիայում։ 1864 թուին Անգլիայում կազմուեց մի ընկերութիւն, որի նշանաբանն էր միացնել այդ բոլոր ջլատուած, մառախուղային ձգտումները և ցանկութիւնները մի կարող ամբողջութիւն, որը պարզօրէն գիտակցէր իր բանուորական շարժման նպատակները։ Այդ ընկերութիւնը, որ ստացաւ «ինտէրնացիօնալ» [21]) անունը և որը ի ցոյց հանեց կազմակերպելու և քարոզելու պահանջը բոլոր երկրների բանուորների մէջ, չէր կրում ամենևին դաւադրական բնաւորութիւն, ինչպէս շատերը տրամադիր են ենթադրելու։ Մարկսը այստեղ հոգևոր ղեկավարն էր։ Հասկանալի է, որ այն ընկերութեան կողմն անցաւ և Էնգելսը։ Բայց իր բոլոր ուժերը նուիրել սրան նա կարողացաւ միայն 1870-թուականից, երբ արդէն

---

[21]) Միջազգային։

թողել էր իր վաճառականական պարապմունքները և տեղափոխուել Լոնդոն։ Եւ այդ վայրկեանին, երբ սկսուեց Ֆրանսպրուսական պատերազմը, այդպիսի մի ոյժ, ինչպիսին էր Էնգելսը, աւելի քան գնահատելի էր։

Ֆրանս-պրուսական պատերազմը, որ այդքան մարդիկ կորզեց, Եւրոպայում առաջացրեց մի ահագին փոթորիկ։ Այդ փոթորիկը չէր սահմանափակուում Գերմանիայով և Ֆրանսիայով։ Եւրոպական տէրութիւնները օգտուել էին առիթից, որ քաղեն իրանց արդիւնքը թշնամու ոչ նպաստաւոր տէրութիւնից։ Այսպէս Վիկտոր Էմմանուելը [28], գրաւեց Հռոմը, իսկ Ռուսաստանը յայտարարեց, որ նա չի ընդունում այն դաշինքը, որ երաշխաւորում էր Սևծովեան չեզոքութիւնը։

«Ցաղթուած ժողովուրդը» [29]) բարձրացրեց ապստամբութեան դրօշակը. «կայսրութեան» [30]) անկումից և խաղաղութեան դաշինքից յետոյ միապետական-ազգային ժողովը իրան նպատակ էր ընտրել յանձնել հանրապետութիւնը. այդ ժամանակ էլ կանգնեց Փարիզը, որ փրկէ ազատութիւնը։ Մի անգամ էլ կրկնուեց 1848-թուի հին կատակերգութիւնը. մանր բուրժուազիան ուղարկեց մեռնելու բանուորներին պատնէշների վրայ և կռուի ամենատաք տեղը՝ վախենալով իր հզօր դաշնակցից, վճռեց կաթուածահար անել նրա ուժերը։ Բայց 1871 թուի պրոլէտարիատը աւելի հասուն և ուժեղ էր, քան 1848 և 1849-թուականի պրոլէտարիատը։ Որքան երկար էր տեւում կռիւը, այնքան նա զգալի էր դառնում պրոլէտարիատի համար, և հիմայ պարզուեց, որ մի միայն պրոլէտարիատն է հանդիսանում յեղափոխական շարժման հիմնաւոր ուժը։ «Ինտերնացիոնալի» անդամները փարիզեան պրոլէտարիատի ամենավճռական և գիտակից մասն էր. թէև «Ինտերնացիոնալը» չէ Կոմմունայի հրատարակման շարժառիթը, բայց այնուամենայնիւ, նրան էր վիճակուած կառավարել Կոմմունային առնուազն ինտեսական տեսակէտից նրանից յետոյ, երբ արդէն կռիւը տաքացել էր։ «Ինտերնացիոնալի» վրայ բարդուած էր կոմմունայի պատասխանատուութիւնը, և նա հեռու լինելով հերքելու մտքից՝ յայտարարեց իրան միաբան Փարիզեան ապստամբութեան։ Դա

---

[28] Իտալիայի թագաւոր։ [29]) Ակնարկուում է Ֆրանսիացիների մասին։ [30]) Դա այն շրջանն է Ֆրանսիայում, երբ երկրի ղեկավարը՝ օգտուելով զինուորական ուժից, կառավարում է երկիրը իր հայեցողութեամբ, մի այնպիսի բոնակալական շրջան Ֆրանսիական պատմութեան մէջ, ինչպիսին էր Ռուսիան նախ քան 1905 թ. հոկտեմբեր 17-ի մանիֆէստը։

ուրիշ տուեց նրա դէմ արհամարհանքի մի տարափ։ «Բարեմիտ»-ները վաղուց ի վեր նայում էին ահով և սարսափով «ինտերնացիոնալի» վրայ հիմայ՝ կօմմունայի անկումից յետոյ, նա համարեա ամենուրեք ենթարկւում էր տարագրութեան։ Քիչ թէ շատ հեղինակաւոր անգլիական բանուորները երես դարձրին նրանից։ Քաղաքական տեսակէտից այդ ժամանակ անգլիական բանուորները արմատական բուրժուազիայի կողմնակիցներն էին, ուստի և նրանք հեռացան «ինտերնացիոնալից» նրանից յետոյ, երբ նա «խայտառակուեց» իր դէպի կօմմունան ունեցած համակրութեամբ։ Միևնոյն ժամանակ «ինտերնացիոնալի» մէջ տարաձայնութիւն ընկաւ։ Մարկսից և Էնգէլսից առաջ սոցիալիստները չէին հասկանում դասակարգային կուիւ էութիւնը։ Դասակարգային կուիւը իր բնոյթով հանդիսանում է քաղաքական. նրա նպատակը կայանում է քաղաքական իշխանութեան յափշտակութեան մէջ բանուորների կողմից, որը և կը շահագործի այդ իշխանութիւնը ի նպաստ իր շահերի։ Մարկսից և Էնգէլսից առաջ սոցիալիստները չէին հասկանում, որ նոր հասարակութիւնը պէտք է հանդիսանայ որպէս հետեւանք բանուորական դասակարգի պայքարի հին հասարակութեան դէմ, նրանք ցանկանում էին հիմնել նոր հասարակութիւն հին հասարակութեան քամակին՝ հեռու վերջինիս ապականեցուցիչ ազդեցութիւնից։ Ուստի նրանք խորհուրդ էին տալիս հեռու մնալ ոնէ դասակարգային կռուից. նրանք կարծում էին, որ ցրուած միայնակ, ամենաառաջադէմ քարոզիչների «գործողութեան պրոպագանդը» կարող է համոզել ժողովրդական մասսաները սոցիալիզմի օգտակարութեան և անհրաժեշտութեան մէջ։ Այդ սոցիալիստները տեսնում էին բանուորական և կապիտալիստական դասակարգերի հակադրութիւնների մէջ ոչ թէ պատմական առաջադիմութեան շարժիչը, այլ մի «ցաւալի թիւրիմացութիւն», որը նրանք կամենում էին վերացնել. բացատրելով կապիտալիստներին իրանց սեպհական, իրական շահերը։ Ուստի և այն միջոցները, որոնք գործադրում էին այդ խաղաղ սոցիալիստները իրանց իդէան անցկացնելու համար վերին աստիճանի անմեղ էին. նրանք ցանկանում էին հիմնել արտադրող ընկերութիւններ, սոցիալիստական գաղութներ և այլն։

Մարկսի և Էնգէլսի հսկայական ծառայութիւնը կայանում է նրանում, որ նրանք ցոյց տուին այն գործարանական (органическій) կապը, որ կայ թէօրէտիկ (տեսական) սոցիալիզմի և բանուորական գործնական քաղաքական շարժման մէջ, նրանք

ցոյց տուին, որ մի միայն պրոլետարիատը կարող է վճռական դեր խաղալ հին հասարակութեան վերանորոգման գործում։ Մասնաւոր անձնաւորութիւնների ջանքերի փոխարէն պէտք է երևան գայ՝ նրանց կարծիքով՝ բանուորական դասակարգի ուժը. մարդի բարի կամքի փոխարէն ծառայում է բնական անհրաժեշտութիւնը, որը և ստիպում է բանուորներին մահուան սարսափի տակ բողոքել կապիտալիստական շահագործման դէմ։

Մարկսը և Էնգէլսը ապացուցին, որ հասարակութեան վերանորոգումը պէտք է հետևանք լինի բոլոր երկրների գիտակցող պրոլետարիատի ընդհանուր աշխատանքի. նրանք ցոյց տուին, որ արդիւնաբերութեան նոր ձևը չէ կարող ծագել առանձին, ինքնավար ընկերութիւններից, զաղութներից կամ համայնքներից, այլ և միայն միացեալ ազգութիւնների արդիւնաբերութեան ձևերի և աշխատանքի հաւասար կազմակերպութեան սեպհականացումից։

Այսպէս էր Մարկսի և Էնգէլսի հիմնական հայեցակէտը որը պարզուած էր «Համայնական հրովարտակի» մէջ։ Այդ հայեցակէտն էր ծառայում «Ինտէրնացիոնալի» հիմքը։

Այն ինչ, երկրի դրութիւնը փոխուեց. հին խաղաղասէր սոցիալիզմը ապրում էր իր գոյութեան վերջին օրերում Ամենուրեք երևացին բանուորական կուսակցութիւններ՝ պարսոցիալիստական և քաղաքական ծրագրով. 1848 թիւը պատառեց գիտակցող սոցիալիստների աչքի քողը, ցոյց տալով, ոչ բանուորական դասակարգը և բուրժուազիան տարբեր տեսակի շահեր ունեն։ Եւրոպայում ամենուրեք վառուեց դասակարգային կռիւը։ Խաղաղ սոցիալիզմը կորցնում էր իր ոտների տակի հողը, և քաղաքական գործունէութեան հարցը բանուորական դասակարգի համար դարձաւ կենսական հարց։

Եւ այնուամենայնիւ հին սոցիալիզմը նորից հանդէս եկաւ գլխաւորաբար տնտեսապէս—յետամնաց այն երկրներից, որտեղ բանուոր դասակարգը հազիւ սկսել էր արթնանալ, ինչպէս օր. Իսպանիայում և Իտալիայում, կամ այն տեղերից, որտեղ մանր բուրժուական տարրը գերակշռել էր բանուորական դասը (Փարիզ), կամ երկրներից, որտեղ բանուորական դասակարգը քաղաքականօրէն իրաւազուրկ էր (Բէլգիա), կամ, վերջապէս, այն երկրներից, որտեղ բանուորների դասակարգային կռուի մասին խօսք անգամ չէր կարող լինել (Ռուսաստան)։ Բայց այդ ոչ—քաղաքական սոցիալիզմն էլ չէր կարող լինել խաղաղ։ Բանուորների դասակարգային կռիւը խիստ լարուել էր։ Այդ միջոցներից մէկը դաւադրութիւնն և ցոյցն

էր։ Երևաց մի մարդ, որ կարողացաւ Պրուդոնի հին, ոչ—քաղաքական սոցիալիզմը յարմարեցնել պայքարի փոփոխուած պայմաններին։ Այդ մարդն էր Բակունինը, որ երևան եկաւ որպէս հիմնադիր նորագոյն անիշխանութեան։

Բակունինի ազդեցութիւնը «Ինտերնացիոնալի» վրայ օրէցօր աճում էր, և անհրաժեշտ էր նրա դէմ միջոցներ գործադրել, որովհետև հակառակ դէպքում այն գործը, որի վրայ աշխատել էին Մարկսը և Էնգէլսը իրանց ամբողջ կեանքի ընթացքում, կը հաւասարուէր զերոի, իսկ ինքը՝ սոցիալիզմը իր քաղաքական ուժից, որի առաջ դողում էին հին կուսակցութիւնները, կ'ընկնէր գաղտնի, ներքին կապակցութիւնից զուրկ դաւադիրների աստիճանին, որի դէմ կռուելու գործը տիրապետող դասակարգերը ուրախութեամբ կը յանձնէին ոստիկանութեան։ Այդպիսով ծագեց հսկայական մի կռիւ Մարկսի և Բակունինի մէջ, որը տեղի տուեց «Ինտերնացիոնալի» աղանդաւորութիւնների և նրա անկման։

Էնգէլսը, որ «Ինտերնացիոնալի» խորհրդի անդամն էր, ունէր այդ կռուում ամենաեռանդուն մասնակցութիւն։ Մենք ուրիշ ոչինչ չենք կարող ասել նրա այդ ուղղութեան գործունէութեան մասին, որովհետև դա ոչ միայն լրագրային յօդուածի սահմանից դուրս է, այլ և պահանջում է գլխաւոր խորհրդի բողոքագրերի, գրագրութիւնների ուսումնասիրութիւնը, որոնք մինչ հիմայ հրատարակութիւն չեն գտել։

«Ինտերնացիոնալի» անկումից յետոյ և վերջանում է Մարկսի ու Էնգէլսի անմիջական իրական կուսակցական գործունէութիւնը։ Բայց նրանք մինչ իրանց մահը չէին դադարում ահագին ազդեցութիւն ունենալուց թէ գիտական և թէ քաղաքական սոցիալիզմի զարգացման վրայ։

Չի կարելի ասել, թէ տիրապետող դասակարգերի տարաձայնութիւնները և հետապնդումները «Ինտերնացիոնալի» անկման պատճառներն էին. կարելի է ասել, որ դրանք շտապեցրին դրա մահը։ Հիմնական պատճառ պէտք է համարել այն որ «Ինտերնացիոնալի» խղճը իրագործուեց— բանուորական շարժումը ամենուրեք առաջադիմում էր և բանուորական դասակարգի միջազգային համերաշխութիւնը այնքան ամուր էր, որ կարիք չունէր այլ ևս արտաքին ձևական կապակցութեան (acconiania), որպիսին հանդիսանում էր «Ինտերնացիոնալը»։ Գերմանիայում ընտրութիւնների ժամանակ սոցիալ-դէմոկրատիան տարաւ փառաւոր յաղթանակը և յաւակնութիւն ունէր մտածելու, որ կարող է ներգործել օրէնսդրութեան վրայ։ Այն-

տեղ, ուր կուսակցութիւնը այդքան զօրեղ է, կուսակցական գործունէութիւնը որոշուում է իրերի քաղաքական և տնտեսական առանձնայատկութիւններով, մինչդեռ բանուորական շարժման սկզբնական շրջաններում գործը ընթանում է գլխաւորապէս սկզբունքների քարոզչութեամբ։ Շարժումն հետզհետէ ընդունում էր ազգային գունաւորումն ոչ թէ այն մտքով, որ ժառանգուել էր բանուորների միջազգային համերաշխութիւնը, այլ այն պատճառով, որ նրա (շարժման) վրայ շատ մեծ ազդեցութիւն ունէին այն ժողովրդի և կայսրութեան բնորոշ առանձնայատկութիւնները, որոնց շրջանում նրանց վիճակուած էր գործել։

Որպէս հետևանք սոցիալիզմի առաջադիմութեան «ինտերնացիոնալը» իբրև կազմակերպութիւն աւելորդ համարուեց և բեմից հեռացուեց. նմանօրինակ դեր կատարեց նաև «Արդարամիտների ընկերութիւնը»։ Իսկ բանուորական դասակարգի միջազգային համերաշխութիւնը մնաց անձեռնմխելի, և նրան կրողներն էին Մարկսը և Էնգելսը։

Մարկսը և Էնգելսը տեղաւորուեցին Լոնդոնում՝ արդի կապիտալիստական աշխարհի կենդրոնում։ Հանդիպելով միշտ բոլոր ազգերի նշանաւոր սոցիալիստների հետ, Մարկսին և Էնգելսին յաջողուեց հիմնաւորապէս լուծել տնտեսական և քաղաքական զարգացումը ընդհանրապէս և կուսակցութեան կեանքի հարցերը մասնաւորապէս։ Այդ ընդհանուր հայեցակէտը՝ հնկայական գիտութեան և փորձառութեան հետ հանդերձ, որ նրանք ձեռք բերին շնորհիւ իրանց յիսնամեայ մասնակցութեան պրոլետարական շարժման մէջ, հնարաւորութիւն ստեղծեց նրանց համար ամեն մի կուսակցութեան զարգացման համար զանազանել էականը երկրորդականից և ըմբռնել այն հայեցակէտը, որ ունէին իւրաքանչիւր երկրի սոցիալիստ բանուորները՝ կեանքի նոր ծագած հարցերի վերաբերմամբ։ Այս բանը նրանց գործողութիւնների մէջ միշտ նկատուում էր, ուստի և դժուար չէ հասկանալ, որ բոլոր երկրների սոցիալիստները ճակատագրական րոպէներում դիմում էին Մարկսի և Էնգելսի խորհրդներին։ Նրանք չէին մերժում ոչ ոքի, որի սրտին մօտ էր բանուորական շարժումը։ Նրանք ղեկավարում էին Եւրոպայի և Ամերիկայի ամբողջ մարտնչող պրոլետարիատը։ Սրա ապացոյցը կարող են լինել բազմաթիւ գրքոյկները, յօդուածները և ահագին քանակութեամբ նամակները զանազան լեզուներով։

1883 թուին վախճանուեց Մարկսը։ Ամբողջ գործը ծանրացաւ հիմայ Էնգելսի ուսերի վրայ. նրան վիճակուեց նախ

վերջացնել Մարկսի կիսատ թողած գիտական աշխատութիւնները։ Էնգէլսը պէտք է վերջացնէր նոյնպէս Մարկսի հետ սկըսած աշխատութիւնը, որտեղ նրանք քննում էին ներկայ ժամանակի երևոյթները պատմական մատերիալիզմի տեսակէտից։ Բացի դրանից, նա պարտաւորուած պէտքէ պաշտպանէր իր թէորիան զանազան կողմերից թափուող յարձակումներից։ և այնուամենայնիւ, չը նայելով այս բոլոր աշխատութիւններին. նա ժամանակ էր գտնում՝ լրացնելու իր գիտական պաշարը։ Ամենակարևոր հարցերից մէկը Էնգէլսը համարում է Մարկսի աշխատութիւնների հրատարակութիւնը։ Շնորհիւ նրա ջանքերի 1883-ի վերջերում լոյս տեսաւ լրացրած և հեղինակի ծանօթութիւններով հանդերձ՝ «կապիտալի» առաջի հատորի երրորդ տպագրութիւնը։

1883 թուի ամառը Էնգէլսը հրատարակեց մի գիրք «ընտանիքի, մասնաւոր սեփականութեան և պետութեան ծագումը» վերնագրով։ Ինչպէս յայտնի է, այդ գրքում Էնգէլսը բացատրում է Մորգանի հետազօտութիւնները՝ լայնացնելով իր՝ սեփականներով։ Մորգանը՝ շնորհիւ իր նախապատմական ժամանակամիջոցների մասին արած հետազօտութիւնների, եկել է պատմութեան նոյն նիւթապաշտական ըմբռնմանը, որին և եկել էին Մարկսը և Էնգէլսը իրանց պատմական աշխատութիւնների հիման վրայ. Համքարական գիտութիւնը ընդունեց Մորգանի գիրքը, ինչպէս առաջ Մարկսինը, գերեզմանային լռութեամբ։ Մարկսը և Էնգէլսը լրացրին Մորգանի հետազօտութիւնների պատմական թերութիւնները, նրանք այդ բոլորը դրին պատմութեան նիւթապաշտական ըմբռնման շրջանակը, և պատմութիւնը ներկայացաւ ընթերցողին իբրև զարգացման մի երկար շղթայ։ Ահա թէ ինչ էր արուած այդ փոքրիկ գրքում։

Մի տարուց յետոյ երևաց Մարկսի «կապիտալի» երկրորդ հատորը, որը քննում է կապիտալի շրջանառութեան պրոցէսը [31])։ Իսկ առաջի հատորը հետազօտում է արժողութեան արդիւնաբերութեան և լրացուցիչ արժողութեան (прибавочная цѣнность) խնդիրը։ Երրորդ հատորը վերաբերում է արդիւնաբերութեան ամբողջ պրոցէսսին, քննում է լրացուցիչ արժողութեան բաժանումը զանազան բաղկացուցիչ մասերի և այլն։

Հրատարակելով Մարկսի աշխատութիւնը, Էնգէլսը մինչև ոյն ժամանակ խիստ զբաղում է հրապարակախօսական գոր-

---

[31]) Ընթացքը։

ծունէութեամբ։ Նա ունէր ամենաեռանդուն մասնակցութիւն շատ սոցիալիստական հանդէսներում, ինչպէս օր.՝ «Socialdemokrat», «Neue Zeit», «Socialiste» և այլն։ Միևնոյն ժամանակ նա աչքի էր անցկացնում իր աշխատութիւնների թարգմանութիւնները, որոնք լոյս էին տեսնում այդ ժամանակ օտար լեզուներով։ Նրա վրայ է ծանրացած «կապիտալի» առաջին հատորը անգլիական հրատարակութեան վերստուգման հոգեժաշ աշխատութիւնը, որը (անգլ. հրատ.) լոյս տեսաւ 1887 թուին։

Ահա թէ ինչ էր գրում Կաուցկին Էնգէլսի մասին 1887 թուին։

Վերջին տարիներում Էնգէլսը նախկինից քիչ էր աշխատում, երբ անգութ մահը խլեց նրան սոցիալ-դէմոկրատական կուսակցութեան շարքերից։

Մահուանից առաջ նա՝ լցուած վեհանձնութեամբ, կարող է բացականչել, որ «ամենուրեք միանում են տանջուածների շարքերը, որոնք ձեռք են կարկառում միմեանց իրանց պետութիւնների սահմաններից։ Պրոլէտարների միջազգային զօրքը պատրաստ է կռուի, և մօտեցող հարիւրամեակը կը պսակէ նրան յաղթութեամբ։»

Թարգմ. Բ. ԹՈՐՈՅԵԱՆՑ

Կարս

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

ԹԷՈԴՈՐ ՆԷՕԼԴԷՔԷ (Th. Nöldeke).

Շտրազբուրգի համալսարանի նշանաւոր արևելագէտը՝ Թ. Նէօլդէքէն անցեալ կիսամեակի վերջին՝ մարտի երկուսին տօնեց իւր ծննդեան եօթանասնամեակը և հրաժեշտ տուաւ ուսուցչապետական ամբիոնից, որին 25 երկար տարիներ ծառայել էր։

Բազմաշխատ ուսուցչապետը ծնուած է Համբուրգում 1836 թուի մարտի 2-ին։ Գեօթինգէնի համալսարանում նա սովորեց աստուածաբանութիւն և լեզուաբանութիւն, եղել է նաև Վէննայի, Լայդէնի և Բերլինի համալսարաններում, որից յետոյ նա 1861-ին սկսեց դասախօսել Գեօթինգէնում։ 1868 հրաւիրուեցաւ Քիլ աստուածաբանութեան ուսուցչապետ. իսկ 1872 սկսած գործեց նա եռանդով իւր սեմական լեզուների ուսուցչապետ Շտրազբուրգի համալսարանում։ Երկար կը լինէր թուել այստեղ այն բազմաբովանդակ և բազմապիսի երկասիրութիւնների շարքը, որը նրան համբաւաւոր և հեղինակաւոր դարձրեց Եւրոպայի արևելագէտների շրջանում։ Ալեզարդ ուսուցչապետի մեծ նշանակութիւնը նորանում է կայանում, որ նա իւր լուրջ ու խոր ուսումնասիրութեամբ ընդհանրապէս արևելեան և մասնաւորապէս սեմական լեզուներում յայտնագործեց այնպիսի սահմաններ, որոնք լեզուագիտութեան և աստուածաբանութեան՝ այսինքն հին կտակարանի ուսումնասիրութեան համար թանկագին գիւտեր դարձան։ Նա էր որ իսրայէլական ազգի և կրօնի պատմութեան ուսումնասիրութեան համար գերման աստուածաբաններին առանձին եռանդով յանձնարարում էր սեմական լեզուների՝ եբրայեցերէնի, արաբերէնի, արամայերէնի և ասորերէնի, հմտութիւնը. և այսօր Գերմանիայում համարեա չկայ մի սեմագէտ—արևելագէտ կամ հին կտակարանով զբաղուող աստուածաբան, որ իրեն ուսուցչապետ Նէօլդէքէի աշակերտ չհամարի։ Նա ունեցել է նաև հայ ունկնդիրներ. նորա ուսումնասիրութիւնները Սասանեանների վերաբերմամբ առանձին նշանակութիւն ունին մեր պատմութեան ժամանակագրութիւնը ճշտելու։ Ուսուցչապետ Նէօլդէքէն Շտրազբուրգի համալսարանի փառք ու պատիւն էր. Գերմանիայից դուրս այս համալսարանը, իւրը Նէօլդէքէի համալսարան ծանօթ էր. և ահա այս համալսարանն է որ այս տարուայ մարտի 2-ից զրկւում է իւր գիտութեան ամենալուսաւոր ջահիցը։

ՄԻՍԱԿ ԽՈՍՏԻԿԵԱՆ

Շտրասբուրգ.

ՄԱՐԴ ԽՃԱՆ։ Բոլոր լուղորդները հաւատացնում են, որ ծովում լողանալը աւելի հեշտ է քան գետի մէջ։ Այդ բանը այսպէս են բացատրում, որ ծովի ջուրը աւելի շատ աղ պարունակելով իւր մէջ՝ աւելի թանձր է լինում գետի ջրից։ Լինում են դէպքեր, երբ այդ տեսակ ջրի մէջ լողանալու համար ստիպուած են լինում իրանց մարմնից զանազան տեսակ ծանրութիւններ կապել. հակառակ դէպքում անհնար է լինում ջրի մէջ խորասուզուել, այլ միշտ մարմինը ջրի մակերեւոյթի վրայ է մնում։ Այդ անյարմարութիւնը զգալի է գլխաւորապէս չաղ մարդկանց համար, որովհետև չաղութիւնը միշտ ջրի երեսին է մնում։

Բայց կան և այնպիսի մարդիկ, որոնք ինչպէս ասում է բժիշկ Կարտացը «Nature» լրագրում, չեն կարողանում մնալ ջրի մէջ և միշտ խցանի նման բարձրանում են ջրի երեսը։ Մի երիտասարդ բժիշկ Ֆերրիյէն նորերս այդ տարօրինակ հիւանդութեան մասին մի քանի հետաքրքրական հետազօտութիւններ է կատարել։

Մի նորատի օրիորդ, որ բոլորովին առողջ տեսք ունէր, չէր կարողանում աւազանի մէջ նստած դիրքով մնալ. ամենաչնչին շարժումից, մարմինը տեղափոխւում էր և միշտ կարծես թէ դէպի ջրի մակերևոյթն էր քաշւում։ Մի ուրիշ հիւանդ ջրի մէջ կարողանում էր միայն կանգնել. հենց որ ուզում էր նստել՝ գլխի ծանրութիւնից ընկնում էր երեսի վրայ։ Այդ նշանակում է որ մարմնի ներքևի մասը աւելի թեթև է, քան նոյն ծաւալով ջուրը փայտի կտորի կամ խցանի նման ձգտում է բարձրանալ ջրի երեսը։

Այդ երևոյթը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի տեսակ հիւանդութիւն, կմախքի կամ ոսկրների ծանրութեան պակասութիւն։ Զանազան պատճառների ազդեցութեամբ ոսկորի մէջ փոխւում է հանքերի բաղադրութիւնը, պակասում են մի քանի աղեր. ոսկորները թեթևանում են և կորցնում իրանց ընդիմադրութեան ոյժի մեծ մասը. Ֆարրիյէն այդ հիւանդութիւնը անուանել է osteocia։

Այդ հիւանդութեան ժամանակ կրի բացակայութիւնը այնքան էլ կարևոր երևոյթ չէ համարւում։ Այդպիսի հիւանդութիւնները տարածուած են առհասարակ այնպիսի տեղերում, որտեղ խմելու համար աւազաններում հաւաքած անձրևի ջուր են գործածում, թէպէտ իհարկէ միայն այդ չէ պատճառը։ Պատճառներից մէկն էլ բաւարար չափով հանք չպարունակող սնունդն է։

Վերոյիշեալ հիւանդութիւնից հետևեալ միջոցներով են բժշկւում։ Կերակրի մէջ աւելացնում են պակասորդ հանքը, տալիս են ֆոսֆատ, վիֆոսֆատ, կարբոնատ և Վիշի ու Սէն Գալմիէ ջրերը և այլն։ Վերջապէս հիւանդներին կերակրում են խորոված մանրիկ ձկներով։ Մի քանի ամիս այս եղանակով բժշկուելուց յետոյ՝ հիւանդները կարողանում են ազատ կերպով լողանալ գետի մէջ։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Մեր ներքին տեսութիւնը։—Գեներալ նահանգապետի կարգադրութիւնը մամուլի մասին։—Դպրոցական համազումար։—Բարձրագոյն դպրոց Կովկասում։—Ներքին լուրեր։

Շուշուայ թեմի Վարանդայ գաւառի հայ գիւղերը աւերուեցան ու հիմնովին քարուքանդ եղան, ամենաանպատկառ ձեւով եւ քոնաքարութեան բազմաթիւ դիպուածներով։

Այդ մասին մեր ընդարձակ ներքին տեսութիւնը շարուած եւ սրբագրուած էր արդէն, երբ լոյս տեսաւ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի ներքոյգրեալ շրջաբերական հրամանը, որի պատճառով անկարող եղանք հրատարակել մեր պատրաստի յօդուածները։

Թիֆլիսի գեներալ նահանգապետը կայացրել է հետեւեալ որոշումը.

Առաջարկում եմ Թիֆլիսի թերթերի խմբագիրներին այլ ևս չը տպագրել իրանց խմբագրութեամբ լոյս տեսնող հրատարակութիւնների մէջ և արտատպութիւններ չանել ուրիշ քաղաքների թերթերից այն բոլոր տեղեկութիւնների մասին, որոնք վերաբերում են զինուորական-վարչական անձանց, նրանց վարչութիւններին և կարգադրութիւններին, մանաւանդ զինուորական տեսչութեան և գլխաւոր շտաբի գաղտնի հրամանների մասին, որոնք նախասահմանուած են զօրքի համար, և ոչ թէ հասարակութեան։

Սրանից անկախ՝ միանգամայն արգելում եմ տպա-

գրել տեղեկութիւններ ինչպէս զանազան զօրախմբերի, թէ պատժական և թէ ուրիշների մասին, որոնք ուղարկւում են բարձր իշխանութեան կարգադրութեամբ, նոյնպէս և այդ զօրախմբերի հետ ուղարկուող վարչական պաշտօնեաների գործողութիւնների մասին, մինչև որ տեղեկութիւններ լոյս կը տեսնեն մամուլի պաշտօնական օրգաններում, ինչպէս օրինակ. «Правит. Вѣстникъ»-ում, «Русскій Инвалидъ»-ի մէջ, կամ «Кавказъ» թերթի պաշտօնական բաժնում։

Միևնոյն ժամանակ անհրաժեշտ եմ համարում նորից կրկնել իմ պահանջը, որ խմբագիրները աւելի ուշադիր վերաբերուեն իրանց խմբագրութեամբ լոյս տեսնող թերթերում զանազան լուրեր տպագրելու ժամանակ, որովհետև լուրերը ստուգելիս այդպիսիները համարեա սուտ են դուրս գալիս, գրգռում են հասարակութիւնը և խախտում հաւատը դէպի տպագրական խօսքը։ Այն պարբերական թերթերը, որոնց ես կը նկատեմ, որ չեն ցանկանում ենթարկուել իմ այս պահանջներին, անմիջապէս կը փակուեն, իսկ նրանց խմբագիրները, օրէնքով ինձ վերապահուած իրաւունքով, կարտաքսուեն իմ իրաւասութեան ներքոյ գրուած գենեռալ-նահանգապետութեան սահմաններից։

14 ապրիլի 1906 թ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Թիֆլիսի թեմական առաջնորդի անունով ստացուել է Վեհափառ Հայրապետի մարտ 20 թուակիր հետևեալ կոնդակը.

«Տեսնելով դպրոցների համար հաստատուն ծրագրի ու կանոնադրութեան անհրաժեշտ կարիքը՝ որոշեցինք ներկայ տարուայ մայիս ամսին գումարել սբ. Էջմիածնում մի ժողով թեմական առաջնորդներից և Ռուսաստանի մեր վիճակային դպրոցների ուսուցիչներից և հոգաբարձուներից՝ քննելու համար մեր եկեղեցական-ծխական դպրոցների կանոնադրութեան ու ծրագրի այն նախագիծը, որ մշակել է Մեր կողմից կարգուած Թիֆլիզի յանձնաժողովը, որպէսզի քննութիւնից յետոյ Մեր հաւանութեանն ու հաստատութեանը ներկայացնէ իր

եզրակացութիւնը։ Բացի դրանից Մեր առանձին հրահանգների համաձայն, որ տալու ենք իր ժամանակին՝ խորհրդակցութիւն է կատարուելու մեր թեմական դպրոցների և Մայր Աթոռս Ճեմարանի բարեկարգութեան համար։

Արդ՝ Հայրապետական Մեր այս կոնդակով պատուիրում ենք ձեր գերաշնորհութեանը նախ՝ որ վեր կենաք գաք Մայր Աթոռս ժողովին մասնակցելու. իսկ եթէ անձամբ գալը անհնար լինի՝ արտօնութիւն ենք տալիս՝ ձեր կողմից մի ներկայացուցիչ ուղարկելու։ Երկրորդ՝ առաջարկել Ներսիսեան թեմական դպրանոցի ուսուցչական և հոգաբարձական խորհուրդներին նոյն դպրոցի համար ծրագրի ու կանոնադրութեան մի նախագիծ կազմել և իրանց ներկայացուցիչների ձեռքով հասցնել Էջմիածնի կարգադրիչ յանձնաժողովին։ Երրորդ՝ ընտրել տալ ուսուցչական և հոգաբարձական մարմինների առանձին-առանձին ներկայացուցիչներ այս կերպով.

ա) Ներսիսեան թեմական դպրոցից երկու ուսուցիչ ու մի հոգաբարձու։

բ) Թիֆլիզ քաղաքի եկեղեցական ծխական ուսումնարաններից երկու ուսուցիչ և երկու հոգաբարձու։

գ) Սղնախի, Թելաւի և Զաքաթալի գործակալութիւնների եկեղ. ծխ. ուսումնարաններից մի ուսուցիչ։

դ) Գօրու փոխանորդութեան եկեղ. ծխակ. ուսումնարաններից մի ուսուցիչ։

ե) Բաթում քաղաքի և Արտուինի գործակալութեան եկեղ.-ծխակ. ուսումնարաններից մի ուսուցիչ և մի հոգաբարձու։

զ) Ախալցխա քաղաքի եկեղ. ծխակ. ուսումնարաններից մի ուսուցիչ և մի հոգաբարձու։

է) Ախալքալաք քաղաքի և գաւառի եկեղ. ծխակ. ուսումնարաններից մի ուսուցիչ։

ը) Գանձակի 3-փոխանորդութիւնից մի հոգաբարձու, և

թ) Շամշադինի, Ղազախի, Բօրչալուի և Լօռու գործակալութիւնների եկեղ.-ծխակ. ուսումնարաններից մի ուսուցիչ։

Այս բոլոր պատգամաւորները գումարուելու են Էջմիածին մայիսի 7-ին, որոնց ճանապարհածախսը հոգալու են դպրոցները։

Ժողովի խորհրդակցութեան սկիզբը նշանակեցինք մայիսի 7-ին և նրա վախճանը նոյն ամսի 20-ին։

Բացի այդ տեղեկացնում ենք ձերդ գերաշնորհութեան, որ կարևոր նախապատրաստութիւնների համար Մեր կոնդակով մի կարգադրիչ յանձնաժողով ենք կարգել Մայր Աթոռում տէր

Նահապետ եպիսկոպոսի նախագահութեամբ և սուրբ Էջմիածնի Ճեմարանի մասնագիտական բաժնի ուսուցիչների անդամակցութեամբ։

Եւ Մենք աղօթքներ ենք վերառաքում առ բարձրեալն Աստուած, որ պահէ ամենքին միակամ սիրով այս մեծ գործում, պարգևելով ոյժ և կարողութիւն կոչեալներին՝ յաջողութեամբ գլուխ հանելու Մեր, Ազգիս և Եկեղեցու ակնկալութիւնը, որ է հայ մանուկների հարազատ կրթութիւնն ու լուսաւորութիւնը։»

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսում համալսարան կամ մի այլ բարձրագոյն դպրոց ունենալու խնդիրը շատ վաղուց է հրապարակ եկել մեզանում, մի քանի անգամ արծարծուելու մշակուել է, բայց միշտ արգելքների հանդիպելով կառավարութիւնից մնացել է անիրագործելի։ Այժմ հանգամանքները փոխուելով՝ կառավարութեան բարձրագոյն ներկայացուցիչը Կովկասում՝ փոխարքան ինքն է խնդիր յարուցանում այդ մասին՝ ուղարկելով քաղաքագլխի պաշտօնակատարին հետևեալ գրութիւնը.

«Ինութեան հարստութիւններով օժտուած կովկասեան երկիրը, իր արդիւնաբերութիւնը զարգացնելու համար վաղուց կարիք է զգում բարձրագոյն տեխնիկական մի ուսումնարանի։ Մի այդպիսի դպրոց հիմնելու միտքը Թիֆլիսում ծագել է դեռ ևս 1890-ական թուականներին և այդ հարցը եռանդով պաշտպանում էր Թիֆլիսի քաղաքային հասարակական վարչութիւնը, որը քանիցս անգամ միջնորդութիւն է արուցել յիշեալ քաղաքում պոլիտեխնիկական ինստիտուտ հիմնելու յզիւղատնտեսական և լեռնագործական բաժանմունքներով։ Այդ առիթով 1898 թուին քաղաքային դուման յատկացրել էր 100-000 բուբլի միանուագ և 30,000 բուբլի տարեկան, միևնոյն ժամանակ խոստանալով յատկացնել ձրի 200 դեսեատին քաղաքային գետիններից։

Բացի դրանից, Թիֆլիսի քաղաքային դումայի 1897 թուի հրաւէրով, զանազան քաղաքային հասարակական հիմնարկութիւններ, արդիւնաբերական ընկերութիւններ և առանձին անհատներ պատրաստակամութիւն են յայտնել նուիրել Թիֆլիսի պոլիտեխնիկումին միանուագ 27,000 և տարեկան 20,000 բուբլի։ Վերջապէս 1903 թուին Ա. Ի. Մանթաշեանը ցանկութիւն է յայտնել իր վրայ վերցնելու պոլիտեխնիկական ինստիտուտի

շէնքի բոլոր ծախսը, մինչև 600,000 ռուբլի գումարը և նուիրել՝ 100,000 ռուբլի, թոշակաւորներ պահելու համար միևնոյն դպրոցում. այդպիսով մինչև այժմ առաջարկուած են միանուագ 957,101 ռուբլի նուիրաբերութիւններ և 50,200 ռուբլի տարեկան, և 200 դեսեատին գետին։

Զը նայելով այդ բոլորին, պոլիտեխնիկումի հարցը մինչև այժմ բաւարար լուծումն չէր ստանում, որովհետև նուիրաբերողները պնդում էին, որ դպրոցը բացուի անպատճառ Թիֆլիսում, իսկ ուսումնարանական և կովկասեան վարչութիւնը՝ Վլադիկավկազում։ Այսպիսի դրութեան մէջ էր գտնուում պոլիտեխնիկումի հարցը մինչև վերջին ժամանակները, երբ հայ-թուրքական համագումարի խորհրդակցութեան ժամանակ մուսուլման Հաջիևվի առաջարկութեամբ որոշում կայացուեց խնդրամատոյց լինել հիմնելու Թիֆլիսում պոլիտեխնիքական ինստիտուտ իմ անունով և այդ նպատակով հանգանակութիւն բանալ ամբողջ երկրում։

Իմ կողմից, պոլիտեխնիկումի հիմնելը Թիֆլիսում անյետաձգելի մի պահանջ համարելով և վերաբերուելով այդ հարցին կատարեալ հաւակլանքով, ես գործը լաւ հողի վրայ դնելու համար, անհրաժեշտ համարեցի.

1. Թոյլ տալ ժողովարարութիւն սկսել ամբողջ Կովկասի շրջանում և խնդրել բարձրագոյն հաւանութիւն հանգանակութիւն բանալու նոյն նպատակով ամբողջ կայսրութեան մէջ, ի նկատի ունենալով, որ ապագայում պոլիտեխնիկումում կարող են ուսանել Թուրքեստանի և Կովկասի մօտ գտնուող Ստաւրոպոլի, Տաւրիկեան և Վոյսկո-Դոնեան նահանգների բնակիչները։

2. Այդ նպատակով կազմել մասնաժողով իմ օգնական Սուլթան-Կրիմ--Դիրբի նախագահութեամբ, մասնակցութեամբ՝ գաղտնի խորհրդական Տ. Ս. Մեղվեդեվի, Դ. Ս. Բուդեվեշի, Դ. Մ. Պետրովի, Դ. Ս. Զավադսկու, Ս. Ս. Ֆիշերի, Թիֆլիսի նահանգապետ Բարոն-Բաուշ Ֆոն-Տրաուբենբերգի, Զունկովսկու, Պետերսոնի, իշխ. Զամբակուր-Օրբելիանու, իշխ. Զերքեզովի, Ադելխանովի և Ա. Ի. Մանթաշեանի։

3. Ցանձնարարել մասնաժողովին անյապաղ միջոցներ ձեռք առնել որոշելու այն գումարները, որ արդէն առաջարկել են զանազան անհատներ և հիմնարկութիւններ։ Ցարաբերութիւն սկսել հասարակական, փոխատու և արդիւնաբերական հիմնարկութիւնների հետ և պարզել նրանց աջակցութեան ու մասնակցութեան չափը, տարածել կոչեր, հանգանակութեան թերթեր և առհասարակ հոգալ միջոցներ ձեռք բերելու։

4. Բանակցութիւն սկսել քաղաքային վարչութեան հետ, որպէսզի նա հող յատկացնէ պոլիտեխնիկումի շինութեան համար, միևնոյն ժամանակ կազմել հարկաւոր նախագիծ ու նախահաշիւ։

5. Մանրամասն հրահանգ և ուղեցոյց մշակել այդ մասնաժողովի համար։ Այդ նպատակով յատուկ խորհրդակցութիւն պէտք է տեղի ունենայ յիշեալ և ուրիշ պաշտօնեաների մասնակցութեամբ և Կրիմ-Գիրէի նախագահութեամբ»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

▬ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրած է Թիֆլիսում հրատարակուող հայերէն «Արշալոյս» օրաթերթը՝ զինուորական դրութեան ամրողջ ժամանակ, մէջը յեղափոխական մի կոչ տպելու համար և պատասխանատուութեան է կոչուած Նորա ժամանակ. խմբագիր Յ. Մանանդեանը։

▬ Այս հաւարում վերջանում է Ժ. Ժ. Ռուսսօի «Էմիլ»-ի հայերէն թարգմանութեան II մասը, որ գերմ. թարգմանել է մեր աշխատակից պ. Իս. Յարութիւնեանը և տպւում էր «Լումայ»-ում որպէս յաւելուած։ Նոյնը արտատպուած և լոյս է տեսնում նաև առանձին գրքոյկով։

▬ Բագւում հրատարակուող «Баку» լրագիրը անցել է ակցիոներական ընկերութեան ձեռքը, որ հրաւիրել է որպէս խմբագիրներ՝ մեր տաղանդաւոր աշխատակից պ. Մինաս Բերբերեանին, որ այժմ բնակւում է Վեննայում և Բուքայիսի նախկին նահանգապետ Ստարոսելսկուն։

▬ Ապրիլի 18-ին լոյս տեսաւ «Նոր-Դարի» վերջին հաւարը մի նշանաւոր առաջնորդող յօդուածով մեր արդի կեանքի նեխուած երևոյթների մասին։ Այդ հաւարում խմբագրութիւնը յայտարարում է, որ «Նոր-Դարը» դադարեցնում է ժամանակաւորապէս՝ նիւթական պակասութեան և այլ հանգամանքների պատճառով։ Զափազանց ցաւում ենք այդ կարևոր և լուրջ թերթի դադարման համար և զարմանում ենք, թէ ինչպէս հայ ժողովրդի մեծ մասը, սրտի խորքից համակրելով «Նոր-Դարի» արտայայտած գաղափարներին, չգիտեցաւ մինչև այսօր ապահովել նորա գոյութիւնը, այն հայ ժողովուրդը, որ գիտի՛ տասնեակ հազարներ շռայլել ուրիշ՝ մոդայական հայ թերթերի համար։ Գէթ այժմ թող կատարէ նա իւր պարտքը։

▬ Մեր յայտնի գրագէտ երդուեալ հաւատարմատար պ. Գարեգին Ենգիբարեանը հրաւիրուած է ս. Էջմիածնի Սինոդի և Մայր Աթոռի իւրիսկոնսուլտ։

▬ Ազգի մէջ «խիստ մեծ ժողովրդականութիւն» վայելող «Մշակ» հայերէն լրագիրը վերջին օրերս սկսել է հրատարակուել երկու լեզուով.—պաշտօնական բաժինը՝ ռուս լեզուով, իսկ մնացեալ յօդուածները՝ հայերէն։

▬ Ս. Էջմիածնից մեզ ուղարկուած է մի հրաւէր ստորագրուած սինոդի անդամ Տ. Նահապետ եպիսկոպոսից, սինոդի պրոկուրորի ամուսին տ. Եկատերինա Լ. Ֆրէնկէլից և պ. Յ. Յովհաննիսեանից, որից իմանում ենք որ մայիսի 21-ին Էջմիածնի անտառում նշանակուած է ժողովրդական զբօսանք և վիճակախաղ՝ Երևանի նահանգի հայ ժողովրդին օգնութիւն հասցնելու և չքաւոր երեխաների ուսման վճարը հատուցանելու համար։ Նուէր կարելի է ուղարկել դրամով կամ իրերով՝ կամ պրոկուրորի տ. ամուսնուն և կամ Էջմիածնի սինոդի դիւանին։

▬ Պ. Աստուածատուր Բէկ-Յովսէփեանը՝ իւր «Մկա վախ չունիմ» գրքոյկից 10 օր. յանձնել էր խմբագրութեանս տնօրինութեան։ Մենք այդ օրինակներն ուղարկեցինք Երևանի նահանգի նորաբաց չքաւոր հայ դպրոցների գրադարաններին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ԿԱՑԱՑԱԾ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ ԼՕՆԴՈՆՈՒՄ

Նորերս Լօնդոնում կազմակերպուեց մի նոր ընկերութիւն «International Lastern Question Association» անունով։ Այս ընկերութեան նպատակն է լինելու անգլիական հասարակութեան մէջ արծարծել հայոց և մակեդոնական հարցերը և նախապատրաստել մտքերը՝ այդ հարցերը բարեյաջող և արմատական կերպով լուծելու համար։ Ընկերութեան նախագահ է ընտրուել անգլիական պարլամենտի անդամ և յայտնի հայասէր Ստիվէնսօնը. փետրուարի 10-ին կայացել է այս ընկերութեան կոնֆերէնցիան Westminister Palace Hotel-ի դահլիճում։ Թայմզ լրագիրը հաղորդում է ժողովի մանրամասնութիւնները։ Ժողովին նախագահել է յայտնի ֆրանսիացի սենատոր Դէստուրնէլ դը Կոնստանը. ի միջի այլոց ներկայ են եղել southwark-ի եպիսկոպոսը, Ստիվէնսօնը, անգլօ-հայկական ընկերութեան նախկին նախագահ յայտնի Կանոն Մակ Կոլը, պրոֆ. Ագար Բիտը, Պիէր Կիեարը, յայտնի հայասէր Վիլլարին և այլք, անգլիական և ֆրանսիական պարլամենտների շատ անդամներ և յայտնի գործիչներ։ Ժողովի սկզբում կարդացուում են բազմաթիւ նամակներ, որոնցով շատ յայտնի անհատներ ներողութիւն էին խնդրում, որ անձամբ չեն կարողացել ներկայ գտնուել. սրանց թւում են եղել Բիրմինգամի եպիսկոպոսի և Ստիվէն Գլադստօն քահանայի նամակները։ Յետոյ դ'Էստուրնէլ դը Կոնստանը կարդում է մի շարք նամակներ Ֆրանսիայից ուղարկուած, որոնց հեղինակները Տաճկաստանի ճնշուած ազգերի շահերի պաշտպան են հանդիսանում, առանց կրօնի և ազգի խտրութեան։ Սրանց թւումն է լինում նաև սենատոր և նախկին մինիստր Բէրտըլոյի նամակը։

Ժողովի նախագահը մի ճառով շեշտում է, որ անգլօ-ֆրանսիական համաձայնութիւնը չպէտք է սահմանափակուի միայն իւր գոյութեամբ, այլ պէտք է աշխատի ընդհանուրի

օգտին և ըստ կարելոյն ամեն տեղ տարածէ իւր բարերար ազդեցութիւնը։ Այդ համաձայնութիւնն իւր գոյութեան ապացոյցը տուել է մի քանի անգամ Կոստանդնուպօլսում։ Ֆրանսիական դեսպան Կամբոնը և անգլիական դեսպան Կերրին առաջին անգամ ցոյց տուին այնտեղ իրենց համաձայնութիւնը հայկական խնդրում. դրանք երկուսն էլ փոխադարձ համաձայնութեամբ և իրենց համարձակութեամբ նպաստեցին թէ իրենց կառավարութիւնների և թէ հասարակական կարծիքի բողոքին և վրդովմունքին։ Բայց այս բողոքը մինչև այսօր անհետևանք է մնացել, որովհետև Եւրոպական պետութիւններն անջատուած են եղել և անհետևանք կմնայ մինչև այն ժամանակ, քանի որ կտևի այս անջատուած դրութիւնը։ Քաղաքակրթուած մեծ պետութիւնները հետզհետէ թուլանում են՝ ստիպուած լինելով սահմանափակել իրենց գործունէութիւնը և մեծացնել ապարդիւն ծախքերը, մինչդեռ սուլթանի բարբարոս կառավարութիւնը ազատ կերպով և անպատիժ ճնշում է իւր հպատակներին և արիւնով հեղեղում իւր պետութիւնը։ Տաճկական անկարգութիւնների ու կամայականութիւնների միակ պատճառն է Եւրոպական պետութիւնների անջատուած դրութիւնը։ «Միացեալ նահանգների բարի ցանկութիւնները և նախագահ Ռուզվէլտի ձեռներէցութիւնը միատեսակ անհետևանք կմնան մինչև այն ժամանակ, քանի որ Սուլթանը կօգտուի պետութիւնների մրցութիւնից և կպրի ի հաշիւ եւրոպական նիւթապաշտութեան (ծափահարութիւններ)։ Այդ պատճառով մենք չպէտք է դադարենք Սուլթանի կառավարութիւնը բնորոշել իբրև ոճրագործութիւն և խայտառակութիւն մեր ժամանակի համար։ Բայց մենք պէտք է առանձնապէս հրաւէր կարդանք բոլոր քաղաքակիրթ ազգերին միանալ և վերջ դնել այս խայտառակ դրութեան, որի համար դրանք բոլորն էլ պատասխանատու են։ Մենք պէտք է օգնութեան կանչենք ոչ միայն պետական մարդկանց, պարլամենտներին, փիլիսոփաներին, բանաստեղծներին և ֆիլանտրոպներին, որոնք կարելի է Անգլիայում աւելի շատ են, քան ուրիշ տեղ, այլ և աշխատանքի մարդկանց թէ գիտութեան և թէ արդիւնաբերութեան գործաւորներին։ Եթէ արևելքի ճնշուած ազգերի պաշտպանների ձայնը չլսուի, տաճկական անկարգութիւնները կմնան մշտական սպառնալիքներ։ Նրանք, ովքեր քաղաքակիրթ պետութիւններին առաջարկում էին վերջ դնել այդ անկարգութիւններին, դրանով առաջարկում էին ոչ թէ միայն մի բարի գործ անել, այլ և լիովին ձեռնտու մի ձեռնարկութիւն։

Դրանով նրանք միայն կամենում էին զանազան աւազակախմբերով աւերուած երկիրը դարձնել խաղաղ, աշխատասէր և հարուստ վաճառատեղի»... (աղմկալի ծափահարութիւններ)...։ Ներկայ եղողներից շատերը նոյնպէս ճառեր են արտասանում և վերջը միաձայն ընդունւում է հետևեալ որոշումը. «Ներկայ ժողովն արտայայտում է իւր խորին ցաւակցութիւնը, որ չնայելով իրենց հանդիսաւոր խոստմանը, որ ամփոփուած է Բերլինի վեհաժողովի պայմանագրութեան 23 և 61 յօդուածների մէջ, ստորագրող պետութիւնները իսկական միջոցներ չեն ձեռք առել՝ վարչական բարենորոգումներ մըտցնելու Տաճկական պետութեան եւրոպական ու ասիական վիլայէթներում և թախանձանօք դիմում է այդ պետութիւններին և Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգներին՝ մշակելու և Սուլթանին առաջարկելու այնպիսի ծրագիր, որ ապահովէ արդար և մարդասէր կառավարութիւնը Տաճկաստանի բոլոր նահանգներում։

Վեզուվի արտավիժումը։ Վերջին տարիների ընթացքում այնքան սարսափների ականատես եղանք, այնքան դըժբախտութիւնների հանդիպեցինք, որ մեր զգացմունքները բրտացան, կոշտացան, մեր նեարդերը բթացան. ոչ մի դըժբաղդութիւն ու ահռելի պատահարներ այլ ևս ներգործութիւն չեն ունենում մեզ վրայ, այլ ևս մեր սրտի նուրբ թելերը չեն շարժւում. այսօրուայ լսածը վաղը մոռանում ենք և կրկին նոր բան սպասում։ Այս տարաբաղդ հանգամանքն է պատճառը երևի, որ վերջին ժամանակներս արտասահմանում տեղի ունեցած մի քանի խոշոր դժբախտ դէպքերը բոլորովին անկատելի անցան մեզ համար. Վեզուվի արտավիժումը, Կուբիէրի ածխահանքերի մեծ դժբախտութիւնը և Կալիֆորնիայում երկրաշարժի պատճառած ընդարձակ աւերումները ուրիշ ժամանակ մեծ տեղ կգրաւէին մեր մամուլի էջերում, իսկ այժմ բաւականանում ենք միայն հեռագիրների հաղորդած կարճ տեղեկութիւններով և անմիջապէս մոռացութեան տալիս։

Երբէք Վեզուվի հրաբխային գործունէութիւնն այնպիսի սարսափելի ուժով չէր հանդէս եկել, ինչպէս այս անգամ։ Այն ժամանակից սկսած, երբ երկրաբանութիւնը զբաղւում է հրաբուխների ուսումնասիրութեան ճիշտ մեթոդների հետազօտութեամբ, ոչ մի դէպք չի եղել, որ հրաբուխների շուրջն ապրող ազգաբնակութիւնն այնպէս յանկարծակի գար, ինչպէս

այս անգամ։ 1902 թ. Մարտինիկի երկրաշարժը և Սէն-Պիէրի կործանումը մի քանի գիտնականներ արդէն գուշակել էին, թէև դրանց կարծիքը մերժուեց և արկածի հենց նախօրը հանգստացնող լուրեր հրատարակուեցան։ Վեզուվի լաւայի արտավիժման հետ միաժամանակ սաստիկ զօրեղ երկրաշարժներ եղան։ Վեզուվի գլխաւոր հրաբխի համարեա կէսը կտրուել է, «կարծես թէ կտրուած լինի սուր ածելիով», ինչպէս ասում է ականատես թղթակիցներից մէկը։ գագաթի բարձրութիւնը մօտ 250 մետր պակասել է։ Զոհերի թիւը դեռ ճշտութեամբ յայտնի չէ. հեռագրները հաղորդում են, որ հարիւրաւոր մարդիկ թաղուել են Ս. Զուզէպէի, Օտօեանի, Բինվէնտի և Անունցիատի աւերակների տակ։ Վտանգուած է նաև Վեզուվից հիւսիս ապրող ազգաբնակութիւնը. միայն Նէապոլում արդէն 10,000 փախստականներ կան. նոյնքան հաւաքուել են նաև Կաստելամարէում և Կաղերտա գաւառում։ Տօրէ Անունցիատի բնակիչները սարսափահար են եղել. թէև դեռ մի շաբաթ առաջ կարծում էին, թէ իրանք վտանգից ազատ կլինան։ Թէ այդտեղ և թէ Նէապոլում ահագին քանակութեամբ մարդիկ կրօնական խելագարութիւն կոչուած հիւանդութիւնն են ստացել. մի թղթակից հեռագրում է Հռովմից. «Անունցիատի բնակիչների տրամադրութիւնը բնորոշում է հետևեալ դէպքովը։ Երբ լաւայի հրաբորբոք հոսանքներն սկսում են մօտենալ քաղաքին, քահանան խաչելութիւնը, Աստուածամօր պատկերը ձեռքերին դիմաւորում է լաւային. հոսանքը հետզհետէ մօտենում է և քահանան ահագին բազմութեան հետ միասին ստիպւում է յետ քաշուել։ Այդ միջոցին մի քանի կանայք նկատում են, որ Աստուածամօր պատկերի արկղի ապակին կոտրուել է. այդ է համարւում ահա անյաջողութեան պատճառը»։ Քարի և աւազի անձրևը ամբողջ տարածութիւններ ծածկում է հաստ շերտերով. փոշիով և մոխրով լցուած է օդը՝ տներում, փողոցներում և ափերին մօտեցող նաւերում։ Նաւերից մէկի վրայ եղած մարդիկ համարեա խեղդւում էին ներշնչած օդից և ստիպուած եղան յետ դառնալ։ Պոմպէյն վտանգից զերծ է մնացել, որովհետև լաւայի հոսանքը կանգ է առել Բոտասարում, լուր կայ նոյնպէս, թէ Պօցուօլի քաղաքը, որ մի քանի վերստ հեռու է Պոմպէյից, կամաց-կամաց ծովի մէջ է ընկղմւում։ Լրագիրների գրածներին նայելով՝ Իտալիային հասած այս դժբախտութեան արհաւիրքն այնքան հրաբխի արտավիժումը չէ, որքան ազգաբնակութեան նախապաշարումն ու տգիտութիւնը և կառավարութեան անգործունէութիւնը։ Հարկաւ լաւայի հո-

սանքի առաջն առնելու ոչ մի հնար չկայ, բայց ազգարնակութիւնն ու կառավարութիւնը կարող էին նախազգուշացուցիչ միջոցներով որոշեալ չափով դժբախտութիւնների առաջն առնել և զոհերի թիւը քչացնել։ Հրաբխի շրջակայքի բնակիչները կարող էին ժամանակին հեռանալ, բայց անհոգ դտնուելով՝ զոհ են գնացել իրենց անմտութեանը. մի խումբ գիւղացիներ իրենց քահանայի առաջնորդութեամբ նոյն իսկ լաւայի հոսանքին դիմաւորել են աղօթքներ ասելով և բոլորն էլ հոսանքի տակ ընկնելով՝ կենդանի այրուել են։ Նէապօլում 800 բանուոր միասին զոհ են գնացել հանգամանքին, որ չնայելով գործարանի խախուտ տանիքին, դուրս չեն գնացել այդ տեղից, երբ տանիքը ծածկուել է հինգ մետր հաստութիւն ունեցող մոխրի ու քարերի շերտով. եթէ գործարանի պատերը նոյն իսկ գրանիտից լինէին, դարձեալ դժուար թէ տունը դիմանար այդ ահռելի ծանրութեանը։ Չնայելով այդ հանգամանքին գործարանում շարունակում են աշխատանքը և բոլորը միասին ճըմլւում ծանրութիւնից քանդուող շէնքի տակ. փաստեր շատ կան արտասահմանեան լրագրութեան մէջ։ Սպանուածների թիւը հազարից շատ է անցել, իսկ վնասը 400 միլիոն ոսկուց աւելի են հաշուել։

Իտալացիք էլ ուրեմն հեռու չեն գնացել մեր տգէտ ամբոխից, որ ժանտախտի, խոլերայի, երաշտի ու մորեխի ժամանակ խաչ ու խաչվառով են գթութիւն հայցում....։

Կուրիերի աղէտը։ Եւրոպայում տեղի ունեցած մի երկրորդ մեծ աղէտն էլ Կուրիերի (Պա-դը-կալէի դեպարտամենտում) ածխահանքերում պատահած սարսափելի բռնկման և հրդեհին բազմաթիւ մարդկային զոհեր տալն է. հազար մարդուց աւելի բանուորներ սպանուեցան այդտեղ և մօտ մի ամսուայ ընթացքում շարունակ դիակներ և կենդանի թաղուած մարդկանց մարմիններն էին հանւում։ Աղէտից երեք օր անցնելուց յետոյ հանքերի ինժեներների ժողովը որոշում է կայացրել թէ պէտք է բոլոր կենդանի թաղուած բանուորներին մեռած համարել. բայց մի զարմանալի և անբնական դիպուածով աղէտի ժամից քսան օր անցնելուց յետոյ, ածխահանքերից կենդանի հանում են տասներեք մարդ։ Սրանք առանց կերակրի և ըմպելիքի կենդանի էին մնացել 300 մետր խորութիւն ունեցող փոսերի մէջ։ Ազատուածներին անմիջապէս տանում են հիւանդանոց, լողացնում, մաքուր սպիտակեղէն, զգեստ հագ-

ցնում և տաք անկողիններում պառկեցնում։ Սկզբում բժիշկները մեծ զգուշութեամբ էն դրանց կերակրում տալով միայն սուրճ և կաթը, բայց դրանցից երկու երեքն այնքան ուժասպառ եղած լինում, որ այդ կերակուրն էլ չեն կարողանում ընդունել. բոլորն էլ կմախք էին դարձել, բայց զարկերակը և ջերմութեան աստիճանը կանոնաւոր էին. ամենքն էլ խօսում և հասկանում էին. առանձնապէս աչքի էր ընկնում իւր աշխուժութեամբ և խօսելու ցանկութեամբ այդ խմբի առաջնորդ Նէնի բանուորը, որի մասին ընկերները միաբերան վկայում էին՝ «եթէ Նէնին չլինէր, մենք այլ ևս լոյս աշխարհ չէինք տեսնի»։ Կարճ կերպով առաջ բերենք Նէնիի հետաքրքրական պատմութիւնն այս սոսկալի արկածի մասին. «Ես գտնուում էի 326 մետր խորութիւն ունեցող հանքի մէջ, երբ բռնկումն առաջացաւ. վազեցի ընկերներիս մօտ և տեսայ, որ նրանցից մի քանիսը վիրաւորուած էին առաստաղից և պատերից ընկած քարերով. մեր շնչառութիւնն հետզհետէ դժուարանում էր, սկսեցինք փախչել։ Բոլոր լապտերները յանկարծակի մարել էին բռնկումից և կատարեալ խաւար էր մեր շուրջը. շօշափելով և յիշողութեամբ էինք գտնում ճանապարհը. աշխատում էինք հասնել ջրհորին, որ այնտեղից վերև բարձրանանք, բայց մեր բաղդից ջրհորն էլ լցուել էր հողով ու քարերով։ Յուսահատուած նորից դէպի ցած գնացինք, մաքրելով ճանապարհը. բայց շարունակ այնպիսի արգելքների էինք հանդիպում, որ ստիպւում էինք կրկին վերադառնալ. այսպէս անցնում էին օրեր. բարեբաղդաբար ես ժամացոյց ունէի, իսկ ընկերներիցս մէկը լուցկի, որով և որոշում էինք ժամանակը։ Առաջին ութ օրուայ ընթացքում սննդի պակասութիւն չէինք զգում՝ կերակրուելով մեր ունեցած և սպանուած բանուորներից վերցրած պաշարեղէնով. իւրաքանչիւր քայլափոխին դիակների էինք հանդիպում։ Ութ օրից յետոյ այլ ևս կերակուր չգտնելով՝ սկսեցինք նեղուել քաղցից և մանաւանդ ծարաւից. ուրախանում էինք, երբ պատահմամբ սատկած ձիու մարմին էինք գտնում և անմիջապէս պատառ պատառ անելով ուտում. երբեմն երբեմն էլ մի քանի կաթիլ ջուր էինք գտնում, բայց մեծ մասամբ մեր ծարաւը յագեցնում էինք մեր մէզով։ Ընկերներս երբեմն յուսահատւում և լքւում էին, բայց ես յուսադրում էի նրանց և ասում, շուտով կփրկուենք և բոլորս միասին կլուսանկարուենք։ Վերջին օրերը բաժանուեցանք երկու խմբի—ամեն մի խումբը բաղկացած էր տասը հոգուց—և զանազան ուղղութեամբ գնալով՝ որոնում էինք ելքը։ Մի քանի օրից յետոյ կրկին իրար-

գտանք, բայց մեր խմբից պակասեցին 3, իսկ երկրորդ խմբից 4 մարդ. այսպիսով մնացինք 13 բանուոր և սաստիկ ուժասպառ էինք եղել, որովհետև վերջերը համարեա թէ չէինք քնում։ Նկատելով, որ օդը մի փոքր լաւացաւ, վճռեցինք փոքր ինչ հանգստանալ և քնել։ Զարթնելով՝ նորից շարունակեցինք մեր ճանապարհը և ընկանք նեղ անցքը. յանկարծ օդի թարմ հոսանք զգացինք և ես հասկացայ, որ ելքը մօտ պէտք է լինի և ընկերներիս յայտնելով այդ մասին, ամենքս դէպի առաջ վազեցինք և ճիշտ որ շուտով հասանք մեր փրկութեան տեղը»։ Նէնիի և ընկերների անպաճոյճ ու ողբերգական պատմութիւնները վերին աստիճանի յուզող տպաւորութիւն են անում ընթերցողի վրայ։ Ֆրանսիական կառավարութիւնը Նէնիին պարգևեց պատուոյ լեգէոնի շքանշանը։

Երկրաշարժը Կալիֆօրնիայում։ Նոր աշխարհն էլ անմասն չմնաց գարնան ծանր աղէտից. Կալիֆօրնիայում սաստիկ զօրեղ երկրաշարժը, որ կապ ունի Վեզուվ հրաբխի ժայթքման հետ, մեծ աւերմունքներ պատճառեց։ Ս. Խոզէում բազմաթիւ շէնքեր են կործանուած և մեծ քանակութեամբ մարդիկ սպանուած։ Ս. Ֆրանցիսկո քաղաքում 1000-ից աւելի մարդիկ են սպանուած և 300,000-ի չափ էլ անտուն, անտէր են մնացել։ Սանտակրուց, Մօնտէշէյ, Զիլրոյի, Գոլէստէր քաղաքներն աւերուած են և բազմաթիւ մարդիկ զոհ կան։

Ս. Ֆրանցիսկոյի ամբողջ թաղերը քարուքանդ են եղել. Ջրանցքի և գազի բոլոր խողովակները ոչնչացել են, առաջացել է ահագին հրդեհ, եօթը միլիոն արժէք ունեցող քաղաքային տունն աւերակների կոյտ է դարձել։ Շատ շէնքեր փուլ գալով՝ իրանց տակն են թողել բնակիչներին. Հրդեհը տարածւում է անարգել, որովհետև ջրմուղները փչացած լինելով՝ ջուր չէ ճարուում, որ հրդեհը հանգցնեն։ Հարկաւ սարսափելի իրարանցումն է տիրում քաղաքում և պահապան զինուորները հրահանգ ունին հրացան պարպելու գողերի և յափշտակիչների վրայ։ Քաղաքի ամենագեղեցիկ և հարուստ փողոցն արդէն այրուել ոչնչացել է. մի քանի յայտնի ամերիկացի լրագրողներ իրենց վերջին շունչը փչեցին աւերակների տակ. շատ տեղ հրկաթուղու և հեռագրի գծերը փչացել և հաղորդակցութիւնը խանգարուել է։ Թատրոնները, հիւրանոցները և նշանաւոր ատանֆօրդեան համալսարանը բոլորովին ոչնչացած են։ Ս. Ֆրանցիսկոյի շրջակայքում աւերուել ու քարուքանդ են եղել ուրիշ մի քանի քաղաքներ։ Ահռելի վնասներ են կրել նաև Նաֆայի հովիտը և ծոցի շուրջը գտնուող բոլոր քաղաքները։

Ս. Ֆրանցիսկոյի կենդանի մնացած բնակիչներին սով է սպառնում։ Կառավարութիւնը պատուիրել է Պորտլանդի և Սիտի պաշտօնեաներին ժթերքներ գնել և շուտով ուղարկել քաղաք՝ մաքսային մակոյկներով։ Երկու հարիւր բժիշկներ ամեն ջանք թափելով՝ աշխատում են շուտափոյթ օգնութեան հասնել աւերակների տակից հանուած կենդանի զոհերին։ Բոլոր հրդեհուած շէնքերի համար կրակի դէմ ապահովագրական ընկերութիւնները որոշել են վնասը հատուցանել։ Միմիայն Ս. Ֆրանցիսկոյում վնասները հաշուել են մօտաւորապէս մօտ 200 միլիոն դոլլար։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գրադարան «Կեանքի» № 1. Վ. Վոդովոզով. ընդհանուր ընտրողական իրաւունքը արևմտքում. թարգմ. Կ. Միքայէլեան. Թիֆլիս 1906. 10 կ.

,, № 2. Բ. Իշխանեան. տնտեսական զարգացման ֆազերը. Թիֆլիս 1906. 15 կ.

Քամալեանց Ս. Սասունցի Յովնան. պատմական վէպիկ։ Թիֆլիս 1906 գ. 30 կ.

Զաւախեցի. պատկերներ. I գրքոյկ. Թիֆլիս 1906 գ. 60 կ.

Hovhan Hagopian. The Relations of the Armenians and the Franks During the Reign of Leon II, 1186—1219. Boston 1905

Յ. Յակոբեան. գրպանի բառարան անգլիերէնէ հայերէն. Բոստոն. տպարան Արարատ հրատարակչական ընկ. 1905.

Կոմս Լ. Տալստոյ 1. Ասորեստանի արքայ Ասսարհադդոնը. 2. Երեք հարց. թարգմ. Դր. Շաբուղաղեան. հրատ. Գ. Բաբուրեանցի. Թիֆլիս 1905 գ. 5 կ.

Ապահ.—Պատասխանատուները. բաց նամակ բոլոր Հնչակեան ազնիւ զինուորներուն. Գահիրէ, 10 մարտ 1906. ձրի։

Հաշիւ Վանքի աւագ եկեղեցու մուտք ու ծախքի 1904 յունիս 27-ից31 դեկտ. 1905 ամի։—Նոյն 1905 թուի համար։

Հաշիւ Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածնի մուտք ու ծախքի 1905 թ.

Հաշիւ Մողնի եկեղեցու 1904 և 1905 թ.։

Թաւրիզ. Աղ. տէր Վարդանեանց.—«Նապոլէոն և Ալէքսանդր I ցարը» յօդուածի թարգմանութիւնը ստացանք։

Վենետիկ. Պ. Նորայր Բիւզանդացուն.—Այո, աւերակ դարձաւ Շուշին, Արցախի նախկին փարթամ և հռչակաւոր մայրաքաղաքը. բարբարոս թուրքերի ձեռքով հրդեհուելով՝ մի քանի հարիւր տուն հիմնովին այրուեցան, միջի բոլոր զոյքերով. և հազարաւոր հայեր, երեկ հարուստ և ապահով, այսօր մուրացկանի դրութեան մէջ են։ Եւ դեռ շարունակուում են այդ խժդժութիւնները, միայն այժմ արդէն... ոչ թուրքերի ձեռքով։

Կարս. Բ. Թ.—Դժբաղտաբար մենք անկարող ենք ոչ մի արտատպութիւն անել մեր հաշուով. այս տարի գոհ պիտի էինք հայ թերթերը, եթէ կարողանան իրանց գլուխը պահել։

Երեւան. Կ. Արզ.—№ 6 7 ուղարկեցինք նորից։

Բազու. Աւագ Մարխանեանց. № 1 ուղարկեցինք նորից։

Շտրասսբուրգ. — Խոստուկին. — Ձեր բանաստեղծութիւնը ստացանք և կտպուի առաջիկայ համարում։

Ն. Նախիջեւան. ա. Շողուեանց. — Ձեր բանաստեղծութիւնները ստացանք. կտպենք ինչ որ կարելի է։

Շուշի. Ց. Խանլարեան.—Բանաստեղծութիւնները ստացանք։

Պ. Արշակ Զօպանեանի թարգմ. «Միրէյօն» կանոնաւոր կշարունակենք միւս համարից։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Գ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍԿԵՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր դրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով։

Ամսագրի նպատակն է՝ ա) ներշնչել մանուկ ընթերցողներին արծարծելով նրանց մէջ սէր դէպի մարդը և դէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ) զարգացնել նրանց ճաշակը և դ) ուրախութիւն եւ աշխոյժ մտցնել մանկական կեանքի մէջ։

Ամսագիրը ունենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ որ կազմուած կը լինի հետեւեալ զրքերի ԳՐԱԴԱՐԱՆԻՑ

1. Երեխայի կրթութիւնը մինչև 6-8 տարեկան հասակը։ 2. Երկիւղն ու քաջութիւնը սկզբնական կրթութեան մէջ։ 3. Երեխաների քուն։ 4. Երեխաների քմահաճութիւններն և դիւրագրգռութիւնը։ 5. Սովորութիւնները, նրանց նշանակութիւնն ու կրթութիւնը։ 6. Ինչպէս պէտք է ծանօթացնել երեխաներին սեռական կեանքի հետ։

Բաժանորդագինն է ճանապարհածախսով

Տարեկան. ՀԱՍԿԵՐ	4 ռ, առանց մանկավարժ. բաժնի	3 ռ.	
Հին բաժանորդների համար	3 ռ. 4	2 ռ. 75 կ.	
Կէս տարուանը	2 ռ.	1 ռ 50 կ.	
Արտասահմանում տարեկան	12 ֆր.	9 ֆր.	

Հրատարակ. սկզբից մինչև 1906 թ. վերջը. 4 ռ.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կատարինէ Լիսիցեանց

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բէհբութեան փող. 25.

(Тифлисъ, Редакція журнала „Аскеръ", կամ Tiflis, (Caucase) Rèdaction du jurn. «Hasker». Թիֆլիսում կարելի է գրուել նաև «Գուտտենբերգ» գրախանութում և «Հէրմէս» տպարանում, իսկ Բագուում՝ Сотрудникъ գրախանութում։

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

БАКУ

НА 1906 ГОДЪ, IV ГОДЪ ИЗДАНІЯ

ПОДПИСНАЯ ЦѢНА НА ГАЗЕТУ „БАКУ".

Съ доставкой въ Баку: на годъ 7 р. 11 м. 6 р. 50 к., 10 м 6 р. 9 м. 5 р. 50 к. 8 м. 5 р., 7 м. 4 р. 50, 6 м. 4 р., 5 м. 3 р. 50 к., 4 м, р., 3 м. 2 р 50 к., 2 м. 1 р. 50 к., 1 м. 1 р.

Съ пересылкой въ другіе города: на годъ 8 р. 50 к., 11 м. 7 р. 50 к. к. к., н. 7 р., 9 м, 6 р. 50 к., 8 м. 6 р. 7 м. 5 р. 50 к., 6 м. 5 р. 5 м. 4 р. 50 10 4 м. 4 р., 3 м. 3 р. 2 м. 2 р. 50 к., 1 р 50 к.

За границу: на годъ 15 р., на полгода 8 р.

Подписываться можно на всѣ сроки, но неиначе какъ съ перваго числа каждаго мѣсяца.

За перемѣну адреса просятъ высылать 5 семикопѣйчныхъ марокъ.

Отдѣльные номера «Баку" продаются въ конторѣ газеты и у разносчиковъ по 5 к.

Пріемъ и печатаніе объявленій

Плата за объявленія: для мѣстныхъ впереди текста за строку петита (или занимаемое ею мѣсто)—15 к., позади текста—10 к. Для иногородныхъ впереди текста 20 к., позади текста 10 к. за строку петита. Многократныя объявленія по соглашенію съ конторой. Объявленія отъ лицъ ищущихъ труда печатаются за половинную плату.

Подписка и объявленія принимаются въ конторѣ редакцій и ежедневно кромѣ праздниковъ, отъ 9 до ч. дня и отъ 5 до 8 ч. веч.; въ праздники—от 10 до 12 ч. дня

Редакторъ-издатель принимаетъ для личныхъ объясненій ежедневно, кромѣ праздниковъ, отъ 1 до час. дня.

Статьи, присылаемыя въ редакцію, въ случаѣ надобности подлежатъ исправленію и сокращенію. Крупныя не принятыя статьи сохраняются въ продолженіи 1 мѣс., мелкія ни возвращаются. На рукописяхъ должны быть означены: фамилія автора, его адреса, и условіея гонорара; безъ этого послѣдняго условія статьи считаются безплатными.

Баку, Великокняжеская, Гранд-Отель.—Телефонъ № 518.

Բացուած է բաժանորդագրութիւն

ԴԻՏԱԿ

ժողովրդական շաբաթաթերթի։

Տասը բաժանորդ գտնողը՝ ինքը ձրի կը ստանայ «Դիտակ»-ն իր յաւելուածով։

Ռուսաստան	Արտասահման
Տարէն — 2 ր.	Տարէն— 3 ր.— 8 ֆր.—1½ դոլ.
6 ամիս — 1 ր.	6 ամիս 2 —5 ֆր—1 դոլ.
3 ամիս — 50 կ.	3 ամիս—1 ր. 2, 50, ½ դոլ.

Մինչև յուլիսի 1-ը 2 ր. վճարողը կը ստանայ ձրիաբար «Բառարան Հայ կենսագրութեանց» գիրքը, որ արժէ առանձին 70 կ. Մաս մաս վճարողներին էլ «Բառարան» կը տրուի։

Հասցէն Тифлисъ. Ред. „Дитакъ" *կամ* Tiflis (Caucase) red. «Ditak».

Մos ասպագայում Թիֆլիսում կսկսեմ հրատարակել

ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՆՐԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԸ

եւ ՀԱՅՐԵՆԻՔ շաբաթաթերթը

հետեւեալ ծրագրով

1. Պետական կարգադրութիւններ։ Հեռագիրներ։
2. Առաջնորդող յօդուածներ հանրային հարցերին վերաբերեալ։
3. Ներքին տեսութիւն։
4. Արտաքին տեսութիւն։
5. Ֆէլիէտոն։
6. Դպրոց և մանկավարժութիւն։
7. Մամուլի տեսութիւն։
8. Մատենագիտութիւն և գրախօսութիւն։
9. Գեղեցիկ գրականութիւն և հանապարհորդութիւններ։
10. Գիտութիւն և արուեստ.
11. Թատրոն և երաժշտութիւն։
12. Օրագրութիւն։
13. Թղթակցութիւններ։
14. Արդիւնաբերութեան տեսութիւն։
15. Տեղեկագիր։
16. Խմբագրութեան պատասխաններ։
17. Յայտարարութիւններ։
18. Պատկերներ և ծաղրանկարներ։
19. Զանազան յաւելուածներ առանձին գրքոյկներով։

ԲԱԺՆԵԼԻԳԻՆ

օրաթերթի		շաբաթաթերթի
Տարեկան 6 ռուբլի	. .	3 ռուբլի
6 ամսուան 3—50 կ.	. .	1—50 կոպ.
3 « —1—80—	. .	—75 »
1 « —75—.	. .	—25 »
առանձին համարը 3 կոպէկ.	. .	7 »
Արտասահման՝ տարին 20 ֆրանք.	. .	տարին 10 ֆրանք

Խմբագիր՝ Գիւտ ա. ք. Աղանեանց
Հրատարակիչ՝ Օր. Նուարդ Աղանեանց

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Полицейская, 7.

Թէ օրաթերթի և թէ շաբաթաթերթի հրատարակութեան վերաբերմամբ կտանք առանձին ծանուցում։

1906 ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1906

Բացուած է բաժանորդագրութիւն

ԼՈՒՄԱՅ

Գրական, բաղաքական, պատմական եւ հանրային

ԱՄՍԱԳՐԻ

ԼՈՒՄԱՆ ՑՈՒՆՈՒԱՐԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀԵՏԵՒԵԱԼ ԼԻԱԿԱՏԱՐ ԾՐԱԳՐՈՎ.

1. Ինքնուրոյն և ռուսերէնից ու օտար լեզուներից թարգմանուած վէպեր, պատմուածքներ և ոտանաւորներ՝ այլ և կենսագրութիւններ:
2. Կովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վաւերագրեր և յօդուածներ:
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագիրներ:
4. Բարոյագիտական յօդուածներ:
5. Մատենախօսութիւն և կրիտիկա գրական երկերի:
6. Ներքին տեսութիւն:
7. Քաղաքական տեսութիւն.
8. Այլ և այլք. տեղեկութիւններ գիտութիւնից և արուեստից:
9. Խմբագրութեան պատասխաններ:
10. Ցայտարարութիւններ:

«ԼՈՒՄԱՅ»-ին կաշխատակցեն մեր հետեւեալ աշխատակիցները.—Օր. Նուարդ Աղանեան, ս. ս. Զապէլ Շիլինկարեան, Տիրուհի Կոստանեան, պ. պ. Աբիսողոմ Յովհաննիսեան, Աստղիկ, Արշակ Շիլինկարեան, Արշակ Շոպանեան, Բենիկ վարդապետ, Դար. Ենգիբարեան, Գեորգ Ահարոնեան, Գրիգոր Վանցեան, Երուանդ Ճանազիզ, Իսահակ Ցարուրիւնեան, Իւրիյ Վէսելովսկի, Լեւոն Խանզատէ, Կարապետ Կոստանեան, Մինաս Բերբերեան, Միսակ Խոսրիկեան, բժ. Մ. Արամեան, Միքայէլ Թամամշեան, Մկրտիչ Բարխուդարեան, Մկրտիչ Ֆ. Ղազարեան, Մուրացան, Մուշեղ Վ., MARS, Մ. Շովրեան, Մ. Շուռ, Յովհաննիս Յովհաննիսեան, Յովհաննիս Մալխասեան, Յովհաննիս Բոզիեան, Ն. Ցարդ, Նիկ. Քարամեան, Զիրվանզադէ, Պերճ Պոլոշեան, Սարգիս Բամշեանց, Ստեփան Դաբրիշեան, Վրդանիս Փափազեան, Տ. Վ., Քաջբերունի, Քնարահր, ***, Ցար. Թուխմանեան եւ այլն եւ այլն:

Տարեկան բաժանորդագինն է Ռուսաստանում 8 ռուբլի, կէս տարուանը՝ 5 ռուբլի, իւրաքանչիւր համարը՝ մի ռուբլի, Արտասահմանում 27 Ֆրանկ:

Բաժանորդագրութիւնն ընդունւում է Թիֆլիսում «Լումայ»ի խմբագրատանը Պոլիցէյսկի 7, և Կենտրոնական գրավաճառանոցում. իսկ գաւառներում մեր գործակալների մօտ:

Յայտարարութիւնների տողը արժէ 10 կոպէկ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

Խմբագրութեան հասցէն. Тифлисъ, Редакція ежемѣсячнаго журнала „ЛУМА“, *արտասահմանից՝* Tiflis, Rédaction du journal arménien „LOUMA“.

Խմբագիր-Հրատարակիչ **ԳԻՒՏ Ռ. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ**